



ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2012թ. խմբագրություն



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մաս I	Ընդհանուր դրույթներ	7
Հոդված 1	Կիրառման շրջանակներ	7
Հոդված 2	Խնդիրներ	7
Հոդված 3	Տերմինների սահմանում	8
Մաս II	Ակումբների արտոնագրման համակարգ	14
Հոդված 4	Հատուկ պայմանների տրամադրման (Բացառության) քաղաքականություն	14
Գլուխ I	Արտոնագրող	14
Հոդված 5	Պարտականություններ	14
Հոդված 6	ՀՀՖ Ակումբների Արտոնագրման Բաժին	14
Հոդված 7	Ակումբների արտոնագրման մարմիններ (որոշում կայացնող մարմիններ)	15
Հոդված 8	Պատժամիջոցների ցանկ	18
Հոդված 9	Արտոնագրման հիմնական գործընթաց	18
Հոդված 10	Գնահատման գործընթաց	18
Հոդված 11	Իրավահավասարություն եւ գաղտնիություն	18
Գլուխ II	Արտոնագրման թեկնածու եւ արտոնագիր	19
Հոդված 12	Արտոնագրման թեկնածուի սահմանում	19
Հոդված 13	Արտոնագրման թեկնածուի ընդհանուր պարտականություններ	19
Հոդված 14	Արտոնագիր	19
Հոդված 15	Հատուկ թույլտվություն	20
Գլուխ III	Արտոնագրման չափանիշներ	20
Հոդված 16	Ընդհանուր դրույթներ	20
	ՄԱՐԶԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ	21
Հոդված 17	Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագիր	21
Հոդված 18	Մանկապատանեկան թիմեր	22
Հոդված 19	Խաղացողների բժշկական խնամք	22
Հոդված 20	Ֆուտբոլիստների գրանցում	22
Հոդված 21	Պրոֆեսիոնալ խաղացողների հետ գրավոր պայմանագիր	22



Հոդված 22	Մրցավարական հարցեր եւ խաղի կանոններ	22
Հոդված 23	Ռասսայական հավասարության քաղաքականություն	23
	ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇ	23
Հոդված 24	ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի անցկացման համար հաստատված մարզադաշտ	23
Հոդված 25	Ուսումնամարզական շինություններ - մատչելիություն	23
Հոդված 26	Ուսումնամարզական շինություններ – անհրաժեշտ նվազագույն ենթակառուցվածք	23
	ԿԱԴՐԱՅԻՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ	23
Հոդված 27	Ակումբի քարտուղարություն	23
Հոդված 28	Գործադիր տնօրեն	24
Հոդված 29	Ֆինանսական հարցերով աշխատակից	24
Հոդված 30	Մամլո քարտուղար	24
Հոդված 31	Բժիշկ	24
Հոդված 32	Ֆիզիոթերապևտ	24
Հոդված 33	Անվտանգության հարցերով աշխատակից	25
Հոդված 34	Կարգադրիչներ	25
Հոդված 35	Երկրպագուների հարցերով պատասխանատու	25
Հոդված 36	Առաջին թիմի գլխավոր մարզիչ	25
Հոդված 37	Առաջին թիմի մարզչի օգնական	25
Հոդված 38	Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի ղեկավար	26
Հոդված 38/1	Առաջին թիմի այլ մարզիչներ	26
Հոդված 39	Մանկապատանեկան թիմերի մարզիչներ	26
Հոդված 40	ՈՒԵՖԱ-ի մարզչական կոնվենցիայի ներքո գտնվող ՈՒԵՖԱ-ի մարզչական որակավորումներում կիրառվող ընդհանուր դրույթներ	27
Հոդված 41	Իրավունքներ եւ պարտականություններ	27
Հոդված 42	Ժամանակաշրջանի ընթացքում փոխարինման պարտականություն	27
	ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ	27
Հոդված 43	ՈՒԵՖԱ-ի ակումբային և ՀՀՖ Բարձրագույն խմբի մրցաշարերին	27



	մասնակցելու հայտարարագիր	
Հոդված 44	Նվազագույն իրավական տեղեկատվություն	28
Հոդված 45	Գրավոր պայմանագիր ֆուտբոլային ընկերության հետ	28
Հոդված 46	Իրավական խմբի կառուցվածք և գլխավոր վերահսկող կազմակերպություն	29
	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ (կիրառելի է միայն ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի համար)	30
Հոդված 46/1	Հաշվետու իրավաբանական անձ և համախմբված խումբ	30
Հոդված 47	Տարեկան ֆինանսական հաշվետվություն	31
Հոդված 48	Ֆինանսական հաշվետվություն միջանկյալ ժամանակահատվածի համար	31
Հոդված 49	Ժամկետանց վճարումների բացակայություն այլ ֆուտբոլային ակումբների նկատմամբ	31
Հոդված 50	Ժամկետանց վճարումների բացակայություն աշխատողների եւ սոցիալական/հարկային մարմինների նկատմամբ	33
Հոդված 51	Գրավոր դիմումներ արտոնագրման որոշում ընդունելուց առաջ	34
Հոդված 52	Ապագա ֆինանսական տեղեկատվություն	35
Մաս V	ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	36
Հոդված 53	Հիմք հանդիսացող տեքստ և նամակագրության լեզու	36
Հոդված 54	Հավելվածներ	36
Հոդված 55	Համապատասխանելիության աուդիտներ	37
Հոդված 56	Կարգապահական գործընթացներ	37
Հոդված 57	Կիրառման դրույթներ	37
Հոդված 58	Նախկին կանոնակարգի չեղյալ համարումը, սույն կանոնակարգի ընդունումը եւ ուժի մեջ մտնելը	37
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	38
Հավելված I	Հիմնական ընթացակարգ	38
	ՄԱՍ I	43
	ՄԱՍ II	46
Հավելված II	ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման կանոնակարգի ներառումը ՀՀՖ	49



	ակումբների արտոնագրման կանոնակարգի մեջ	
	Ա – Սկզբունք	49
	Բ – Գործընթաց	49
Հավելված III	Հատուկ թույլտվություն ներգրավվելու ՈԻԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին - Ակումբների արտոնագրման համակարգի արտակարգ կիրառում	50
Հավելված IV	Առաջնության եւ նրա կողմից անցկացվող գնահատման գործընթացների որոշում	51
	Ա – Սկզբունք	51
	Բ – Գնահատման գործընթաց	51
Հավելված V	Տեղեկատվության տրամադրման համար նվազագույն պահանջներ	52
	Ա – Սկզբունք	52
	Բ – Հաշվապահական հաշվեկշիռ	52
	Գ – Շահույթի եւ կորուստի հաիվ	53
	Դ – Դրամական միջոցների հոսքի հաշվետվություն	54
	Ե – Ծանոթություններ ֆինանսական հաշվետվությունների համար	55
	Զ – Ղեկավարության կողմից կազմված ֆինանսական նկարագիր	59
Հավելված VI	Ֆինանսական հաշվետվությունների նախապատրաստման հիմքեր	60
	Ա – Սկզբունք	60
	Բ – Կոնսոլիդացման պահանջներ	60
	Գ – Ֆուտբոլիստների գրանցումից ծագող ծախսերի նկատմամբ հաշվապահական պահանջներ	61
	Դ – Խաղացողի ինքնությունը արտացոլող աղյուսակ	62
Հավելված VII	Ժամկետանց վճարումների հասկացողություն	64
Հավելված VII	Արտոնագրողի կողմից անցկացվող ֆինանսական չափանիշների եւ պահանջների գնահատման գործընթաց	66
	Ա – Սկզբունք	66
	Բ – Տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ առաջնության հաշվետվության գնահատում	66
	Գ – Ակումբների նկատմամբ ժամկետանց վճարումների գնահատում	67



	Դ – Աշխատակիցների եւ սոցիալական/հարկային մարմինների նկատմամբ ծագած ժամկետանց վճարումների գնահատում	68
	Ե – Դիմում-նամակների գնահատում	69
	Զ – Ապագա ֆինանսական տեղեկատվության գնահատում	70
	Է – Ժամկետանց վճարումների գնահատում - լրացուցիչ	71
Հավելված IX	Խաղացողների բժշկական խնամք (ՈԻԵՖԱ-ի արտոնագրային շրջափերական No 11)	71
Հավելված X	Ռասիզմի դեմ պայքարի ՈԻԵՖԱ-ի 10-կետանոց ծրագիր	80



Հիմնվելով ՀՀՖ կանոնադրության գլուխ 29-ի 29.1 հոդվածի, ՈՒԵՖԱ-ի Ակումբների Արտոնագրման և Ֆինանսական Արդար Խաղի կանոնակարգի հիման վրա՝ ընդունվել է հետևյալ կանոնակարգը.

Մաս I. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1 – Կիրառման շրջանակներ

1. Այս կանոնակարգը կիրառվում է Հայաստանի Բարձրագույն խմբի մրցաշարերում և ՈՒԵՖԱ-ի հովանու ներքո անցկացվող ակումբային մրցաշարերում (հետագայում՝ «ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարեր») հանդես գալու ժամանակ:
2. Տվյալ կանոնները սահմանում են ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման համակարգի մեջ ներգրավված բոլոր կողմերի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, մասնավորապես՝
 - ա) նվազագույն պահանջները, որոնք պետք է բավարարվեն ՀՀՖ-ի կողմից, որպեսզի նա հանդես գա ենթակա ակումբների արտոնագրողի դերում և նվազագույն գործընթացները, որոնք պետք է իրականացնի արտոնագրողը չափանիշների գնահատման ընթացքում:
 - բ) արտոնագրման թեկնածուն, ինչպես նաև ՀՀՖ-ի կողմից շնորհվող երկու տարբեր արտոնագրերը, այն է՝ ՈՒԵՖԱ-ի Արտոնագրի, որը պահանջվում է ՈւԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու համար և Ազգային Արտոնագրի, որը պահանջվում է ՀՀ Բարձրագույն խմբի մրցաշարին մասնակցելու համար (մաս II):
 - գ) ՀՀՖ-ի կողմից ՀՀ Բարձրագույն խմբի մրցաշարին և ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու համապատասխան արտոնագիր ստանալու համար մարզական, ենթակառուցվածքային, կադրային և վարչական, իրավական և ֆինանսական չափանիշներին վերաբերվող այն նվազագույն պահանջները, որոնք պետք է բավարարի ակումբը (մաս IV):

Հոդված 2 – Խնդիրներ

1. Այս կանոնակարգի նպատակն է.
 - ա) բոլոր ուղղություններով ՀՀ-ում և Եվրոպայում շարունակել աջակցել ու շարունակաբար կատարելագործել ֆուտբոլային չափանիշները և յուրաքանչյուր ակումբում պատանի խաղացողի մարզմանն ու խնամքին տալ շարունակական առաջնայնություն,
 - բ) երաշխավորել, որ ակումբներն ունենան ղեկավարման և կազմակերպման բավարար մակարդակ;
 - գ) ակումբների մարզական ենթակառուցվածքների համապատասխանեցումն այնպես, որ խաղացողները, հանդիսատեսը և զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչները ապահովված լինեն օպտիմալ կերպով ընտրված, սարքավորված և պաշտպանված հարմարություններով;
 - դ) ակումբների տնտեսական և ֆինանսական հնարավորությունների բարելավում, վերջիններիս թափանցիկության և վստահելիության մակարդակի բարձրացում;
 - ե) անհրաժեշտ կարևորություն տալ վարկատուների պաշտպանությանը՝ երաշխավորելով, որ ակումբները կատարեն իրենց պարտավորությունները խաղացողների, սոցիալական/հարկային մարմինների և հատկապես այլ ակումբների նկատմամբ;
 - զ) պաշտպանել Հայաստանի Բարձրագույն խմբի և ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի ամբողջականությունն ու սահուն ընթացքը;



- է) Եվրոպայում ակումբների համեմատական վերլուծության զարգացման աջակցություն ֆինանսական, մարզական, իրավական, կադրային և վարչական, ենթակառուցվածքային չափանիշներով:

Հոդված 3 – Տերմինների սահմանում

1. Տվյալ կանոններում կիրառվում են տերմինների հետևյալ սահմանումները.

Վարչական գործընթաց

Օրենքներին և կանոնակարգերին համաձայնեցված գործընթացներ, որոնց նպատակն է փրկել անվճարունակ իրավաբանական անձանց և թույլ տալ նրանց շարունակելու ղեկավարել իրենց բիզնեսը: Այս գործընթացը, որը համարվում է իրավաբանական անձի լուծարման գործընթացի այլընտրանք, հաճախ հայտնի է որպես վարչական գործընթացին անցնել: Այստեղ իրավաբանական անձի գործողությունների ամենօրյա կառավարումը կարող է իրականացվել վարկատուների կողմից երաշխավորված կառավարիչի կողմից:

Գործակալ

Ֆիզիկական անձ, ով վարձատրության դիմաց խաղացողներին ներկայացնում է ակումբներին՝ աշխատանքային պայմանագիր կնքելու նպատակով կամ երկու ակումբներին ներկայացնում է միմյանց՝ տրանսֆերային համաձայնագիր կնքելու նպատակով:

Համաձայնեցված ընթացակարգեր

Համաձայնեցված ընթացակարգեր իրականացնելու պայմանավորվածության մեջ աուդիտորը պարտավորվում է իրականացնել աուդիտորական բնույթի համաձայնեցված ընթացակարգեր, որոնց համար համաձայնության են եկել աուդիտորը, աուդիտի ենթարկվող սուբյեկտը և համապատասխան երրորդ կողմը, որոնք պետք է տեղեկություն ստանան փաստացի բացահայտումների մասին: Ձեկույցը ստացողները վերջինիս վերաբերյալ պետք է կազմեն իրենց սեփական եզրակացությունները: Ձեկույցի օգտագործումը սահմանափակված է այն կողմերով, ովքեր համաձայնության են եկել իրականացված գործընթացների կիրառման կապակցությամբ, քանի որ այդ ընթացակարգերի հիմքում ընկած պատճառներից անտեղյակ կողմերը կարող են սխալ մեկնաբանել դրա արդյունքները:

Ակումբների արտոնագրման չափանիշ

Պահանջներ՝ բաժանված հինգ կատեգորիաների՝ մարզական, ենթակառուցվածքային, կադրային և վարչական, իրավական և ֆինանսական, որոնք պետք է իրականացվեն արտոնագրման թեկնածուի կողմից՝ ՀՖՖ-ի կողմից շնորհվող համապատասխան արտոնագիրը ստանալու համար:

Ակումբների արտոնագրման որակի չափանիշ

Փաստաթուղթ, որը սահմանում է այն մինիմալ պահանջները, որոնք արտոնագրողները պետք է կատարեն, որպեսզի



գործադրեն ակումբների արտոնագրման համակարգը:

Ակումբի պահանջներ	վերահսկողության	Պահանջներ, որոնք պետք է կատարվեն ՈԻԵՖԱ-ի ակումբային մրցաշարի ընտրական փուլն անցած արտոնագրվողի կողմից:
Խաղացողի հավատարմագրում ձեռք բերելու անմիջական ծախսեր		Խաղացողի հավատարմագրում ձեռք բերելու համար երրորդ կողմերին արված մուծումները՝ հանած ցանկացած մասնագիտական զարգացման կամ այլ ծախսեր: Ծախսերը ներառում են. ա) տրանսֆերի համար վճարում (ներառյալ մարզումային փոխհատուցումները և համերաշխության վճարները)՝ հավատարմագրումն ապահովելու նպատակով, գ) խաղացողի հավատարմագրում ձեռք բերելու համար կատարված այլ ուղղակի ծախսեր (ներառյալ տրանսֆերների և գործակալների վարձավճարները):
Արտոնագրողին դիմում ներկայացնելու վերջնաժամկետ		Ամսաթիվ, մինչև երբ ՀՀՖ-ն պահանջում է արտոնագրման թեկնածուից ներկայացնել ողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է համապատասխան արտոնագիր ստանալու դիմումը ձևակերպելու համար: Այս ժամկետները նշված են 9-րդ Հոդվածում:
Խոշոր տնտեսական կարևորություն ունեցող իրադարձություն կամ պայման		Իրադարձությունը կամ պայմանը, որը նյութական ազդեցություն է գործում հաշվետու իրավաբանական անձի ֆինանսական հաշվետվության վրա և կարող է ազդել գործունեության ներկայիս արդյունքների, ֆինանսական կարգավիճակի և զուտ ակտիվների բացասական ներկայացման վրա, եթե այդ իրադարձությունը կատարվեր նախորդ ֆինանսական տարվա հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:
Ապագա տեղեկատվություն	ֆինանսական	Տեղեկատվություն, որը վերաբերում է ֆինանսական վիճակին և ակումբի կարգավիճակին այն հաշվետու ժամանակաշրջաններում, որոնք ավարտվում են ՈԻԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի մեկնարկի տարիներին:
Խումբ		Հիմնադիր/մայր ձեռնարկությունը և նրա բոլոր մասնաճյուղերը: Հիմնադիր/մայր ձեռնարկությունը իրավաբանական անձ է, որն ունի մեկ կամ մի քանի մասնաճյուղ: Մասնաճյուղը մի իրավաբանական անձ է, ներառյալ ձեռնարկության կարգավիճակով գրանցում չունեցող իրավաբանական անձինք, ինչպես գործընկերությունը, որը վերահսկվում է մեկ ուրիշ իրավաբանական անձի կողմից (հայտնի որպես մայր ձեռնարկություն):



Միջազգային ֆինանսական հաշվետվության ստանդարտներ

Միջազգային Հաշվապահական Ստանդարտների Խորհրդի (International Accounting Standards Board – IASB) կողմից ընդունված ստանդարտներ և մեկնաբանություններ: Վերջիններս բաղկացած են հետևյալից.

- Ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտներից,
- միջազգային հաշվապահական ստանդարտներից, և

Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային հանձնաժողովի (International Financial Reporting Interpretations Committee – IFRIC) կամ նախկինում գործող մեկնաբանությունների կոմիտեի (Standing Interpretations Committee – SIC) կողմից կազմված մեկնաբանություններից /բացատրություններից:

Միջազգային ստանդարտներ

- աուդիտի (ISA)
- ամփոփումների (ISRE)
- այլ ծառայությունների (ISRS)

Աուդիտի և ստուգումների միջազգային ստանդարտների խորհուրդը (International Auditing Standards Board - IAASB) սահմանում է միջազգային ստանդարտներ, որոնք վերաբերվում են.

- աուդիտին (International Standards on Auditing – ISA), որոնք պետք է կիրառվեն պատմական ֆինանսական տեղեկատվության աուդիտների ժամանակ;
- ամփոփումների (International Standards on Review Engagements – ISRS), որոնք պետք է կիրառվեն պատմական ֆինանսական հաշվետվության ամփոփման ժամանակ:
- հարակից ծառայությունների (International Standards on Related Services – ISRS), որոնք պետք է կիրառվեն տվյալների կազմման ժամանակ և տեղեկատվության նկատմամբ համաձայնեցված ընթացակարգի կիրառման ժամանակ:

Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.ifac.org

Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Տեղեկատվություն, որը վերաբերում է ֆինանսական վիճակին և ակումբի կարգավիճակին այն հաշվետու ժամանակաշրջաններում, որոնք ավարտվում են ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի մեկնարկի տարիներից առաջ:

Արտոնագրման թեկնածու

Իրավաբանական անձ, որն ամբողջովին և միանձնյա պատասխանատու է ազգային և միջազգային ակումբային մրցաշարերին մասնակցող ֆուտբոլային թիմի համար, և որը արտոնագիր ստանալու դիմում է ներկայացրել:

Արտոնագրման մրցաշրջան

ՈՒԵՖԱ-ի և ՀՀՖ-ի այն մրցաշրջանը, որի համար դիմորդը դիմել է կամ արդեն ստացել է արտոնագիր: Այն սկսվում է



	ՀՀՖ-ի կողմից արտոնագրման որոշումների ցուցակը ՈԻԵՖԱ-ին հանձնելու վերջնաժամկետի հաջորդ օրը (սովորաբար մայիսի 31) և տևում է մինչև հաջորդ տարվա նույն վերջնաժամկետը:
Արտոնագրող	Մարմին, որը ակումբին համապատասխան արտոնագիր է շնորհում, և որը ղեկավարում է արտոնագրման համակարգը: ՀՀ-ում արտոնագրողը Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան է (ՀՀՖ):
Արտոնագրման որոշումների ցուցակ	Արտոնագրողի կողմից ՈԻԵՖԱ-ին ներկայացվող ցուցակ, որը ներառում է նաև արտոնագրման թեկնածուների մասին տեղեկատվություն, որոնք անցել են արտոնագրման գործընթացը և ՈԻԵՖԱ-ի կողմից սահմանված կարգով ՀՀՖ-ի ակումբների արտոնագրման մարմինների կողմից ստացել են համապատասխան արտոնագիր:
Նյութ կամ նյութականություն	Տեղեկությունների բացթողումը կամ սխալ ներկայացումը նյութական է, եթե դրանք կարող են առանձին կամ միասին ազդել ֆինանսական հաշվետվությունները օգտագործողների տնտեսական որոշումների վրա: Նյութականության աստիճանը կախված է այդ բացթողումների կամ սխալ ներկայացումների չափերից և բնույթից՝ դատելով շրջապատի հանգամանքներից կամ բովանդակությունից: Տեղեկության չափը կամ բնույթը կամ երկուսի համակցությունը կարող են որոշիչ գործոն լինել:
Նվազագույն չափանիշներ	Զափանիշներ, որոնք պետք է բավարարի արտոնագրման թեկնածուն՝ համապատասխան արտոնագիր ստանալու համար:
Հաշվապահական հաշվառման անցկացման ազգային փորձ	Հաշվապահական հաշվառման անցկացման և հաշվետվության պատրաստման/կազմման փորձ, ինչպես նաև ՀՀ-ում տեղեկատվության տրամադրման վերաբերյալ կազմակերպություններին ներկայացված պահանջներ:
Ազգային Արտոնագիր	ՀՀՖ-ի կողմից շնորհվող հավաստագիր, որը հաստատում է արտոնագրման թեկնածուի կողմից իրականացվող ՀՀ Բարձրագույն խմբի մրցաշարին մասնակցելու մինիմալ չափանիշները: Ի հավելումն ակումբի սպորտային չափանիշներով որակավորմանը՝ Ազգային Արտոնագիրը անքակտելի (<i>sine qua non</i>) պայման է ՀՀ Բարձրագույն խմբի մրցաշարին մասնակցելու համար:
Ներգրավված կողմեր	ՀՀՖ-ի և ՈԻԵՖԱ-ի ակումբների արտոնագրման համակարգի մեջ ընդգրկված յուրաքանչյուր ոք, ներառյալ ՀՀՖ-ն և ՈԻԵՖԱ-ն, արտոնագրողը, արտոնագրման թեկնածուն և նրանց անունից ներգրավված ցանկացած անհատ:
Հաշվետու կազմակերպություն	Գրանցված անդամ և/կամ ֆուտբոլային կազմակերպություն, իրավաբանական անձանց խումբ կամ իրավաբանական



		անձանց այլ համակցություն, որոնք արտոնագրողին պետք է ներկայացնեն տեղեկատվություն ակումբների արտոնագրման և վերահսկողության նպատակներով:
Հաշվետու ժամանակաշրջան		Ֆինանսական հաշվետվության ժամանակաշրջան, որը վերջանում է կանոնադրական փական օրը: ՀՀ-ում հաշվետվության ժամանակաշրջանը օրացույցային տարին է (Հունվարի 1-ից Դեկտեմբերի 31-ը):
Նշանակալի փոփոխություն		Իրադարձություն, որը նյութական ազդեցություն է ունեցել արտոնագրողին ներկայացված նախորդ փաստաթղթային փաթեթի վրա, և որը կպահանջեր այլ մեկնաբանում, եթե կատարվել է մինչև արտոնագրման հայտի և փաստաթղթերի ներկայացումը:
Մարզադաշտ		Մրցաշարային հանդիպման համար նախատեսված տարածք, որը չի սահմանափակվում միայն դրանով, իր անշարժ գույքի ամբողջ սեփականությամբ, մարզադաշտին կից կառույցներով և հարմարությունները (օրինակ՝ գրասենյակներ, ընդունելության տարածքները, լրատվական կենտրոնը և հավատարմագրման կենտրոնը):
Հաշվետվության պաշտոնական օր	փական	Հաշվետու իրավաբանական անձի տարեկան հաշվառման ամսաթիվ: ՀՀ ակումբների համար հաշվետվության փական օրը դեկտեմբերի 31-ն է:
Լրացուցիչ տեղեկատվություն		Ֆինանսական տեղեկատվություն, որը ներկայացվում է արտոնագրողին որպես ֆինանսական հաշվետվության լրացում, եթե վերջինս չի համապատասխանում հաշվապահական հաշվառման անցկացման մասին տեղեկատվության տրամադրման վերաբերյալ նվազագույն պահանջներին: Լրացուցիչ տեղեկատվությունը պետք է կազմված լինի այն հաշվապահական հաշվառման, ինչպես նաև հաշվառման քաղաքականության հիման վրա, որոնք համապատասխանում են ֆինանսական հաշվետվությանը: Ֆինանսական հաշվետվությունը պետք է վերցված լինի այն աղբյուրներից, որոնք օգտագործվել են, տարեկան ֆինանսական հաշվետվությունը կազմելու համար: Որտեղ հարիր է, ներկայացվելիք ֆինանսական տեղեկատվությունը պետք է համաձայնեցված լինի ֆինանսական հաշվետվության որոշակի տեղեկատվության հետ կամ պետք է համապատասխանի վերջինիս:
Մարզումների հարմարություններ		Տարածք/ներ/, որտեղ ակումբի գրանցված խաղացողները կանոնավոր կերպով կատարում են ֆուտբոլային մարզումներ կամ ծավալում են պատանեկան զարգացման գործունեություն:
ՈՒԵՖԱ-ի Արտոնագիր		ՀՖՖ-ի կողմից շնորհվող հավաստագիր, որը հաստատում է արտոնագրման թեկնածուի կողմից իրականացվող մինիմալ



չափանիշների իրականացումը՝ որպես ՈԻԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու մաս: Ի հավելումն ակումբի սպորտային չափանիշներով որակավորմանը, ՈԻԵՖԱ-ի արտոնագիրը անքակտելի (*sine qua non*) պայման է ՈԻԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու համար:

2. Արական սեռի ձևը, որն օգտագործվում է այս կանոնակարգում հավասարագոր է իգական սեռի ձևին:



Մաս II. Ակումբների արտոնագրման համակարգ

Հոդված 4 – Հատուկ պայմանների տրամադրման (բացառության) քաղաքականություն

ՈՒԵՖԱ-ն սույն կանոնակարգի հավելված I-ի սահմաններում կարող է այս կանոնակարգի հավելվածների վերաբերյալ անել բացառություն:

Գլուխ I. Արտոնագրող

Հոդված 5 – Պարտականություններ

1. Արտոնագրողը Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան է (ՀՀՖ): ԱՅՆ ղեկավարում է ՀՀՖ ակումբների արտոնագրման համակարգը:
2. Մասնավորապես արտոնագրողը պարտավոր է.
 - ա) հաստատել արտոնագրման համախառնասխան ակումբների արտոնագրման բաժին՝ համաձայն 6-րդ հոդվածի;
 - բ) հաստատել երկու կառավարման մարմին՝ համաձայն 7-րդ հոդվածի;
 - գ) ստեղծել պատժամիջոցների ցանկ՝ համաձայն 8-րդ հոդվածի;
 - դ) սահմանել արտոնագրման կարգը՝ համաձայն 9-րդ հոդվածի;
 - ե) գնահատել ակումբների կողմից ներկայացված փաստաթղթերը, ըստ համապատասխանության, և որոշել, թե արդյոք բոլոր չափանիշները բավարարվել են և ինչպիսի լրացուցիչ տեղեկատվություն է (եթե այդպիսին կա) հարկավոր՝ համաձայն 10-րդ հոդվածի:
 - զ) ապահովել հատուկ արտոնագրման դիմում ներկայացրած բոլոր ակումբների իրավահավասարությունը և երաշխավորել արտոնագրման ընթացքում տրամադրված տեղեկատվության լիակատար գաղտնիությունը՝ համաձայն 11-րդ հոդվածի;
 - է) կայացնել համապատասխան արտոնագիր տալու կամ չտալու որոշում:

Հոդված 6 – ՀՀՖ Ակումբների Արտոնագրման Բաժին

1. ՀՀՖ Ակումբների արտոնագրման բաժնի պարտականություններն ընդգրկում են հետևյալը.
 - ա) ՀՀՖ ակումբների արտոնագրման համակարգի նախապատրաստում, կիրառում և հետագա զարգացում;
 - բ) որոշում կայացնող հանձնաժողովներին վարչական աջակցությամբ ապահովում;
 - գ) արտոնագրվողին աջակցության ցուցաբերում, խորհրդատվական ծառայությունների տրամադրում և մրցաշրջանի ընթացքում նրանց գործունեության վերահսկում;
 - դ) ՈՒԵՖԱ-ին տեղյակ պահել ցանկացած դեպքի մասին, որը տեղի կունենա արտոնագրման որոշում կայացնելուց հետո, որը կհանգեցնի նախկինում ներկայացված տեղեկատվության էական փոփոխությանը:
 - ե) պատասխանատու անձի պարտականությունների կատարում ՈՒԵՖԱ-ի անդամ հանդիսացող այլ ասոցիացիաների արտոնագրման բաժինների և հենց ՈՒԵՖԱ-ի հետ փոխանակման համար:
2. Նվազագույնը մեկ հաստիքային աշխատակից կամ արտաքին ֆինանսական խորհրդատու պետք է ունենա որակավորում տնտեսագիտական բնագավառում և պետք է ունենա հաշվապահական



հաշվառման /աուդիտի/ մասնագետի դիպլոմ, որը հաստատվել է կամ համապատասխան ազգային մարմնի կողմից (օրինակ ազգային առևտրաարդյունաբերական պալատի կողմից), կամ պետք է ունենա աշխատանքի երկարամյա փորձ վերը նշված բնագավառներում (<<կոմպետենտության ճանաչման վկայական>>):

Հոդված 7 – Ակումբների Արտոնագրման մարմիններ (որոշում կայացնող մարմիններ)

1. Ակումբների արտոնագրման մարմիններն են Ակումբների Արտոնագրման Կոմիտեն (ԱԱԿ) (ԱԱԿ-ն գործում է որպես առաջին աստիճանի մարմին) և Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեն (ԱԲԿ) (ԱԲԿ-ն գործում է որպես բողոքարկման մարմին կամ երկրորդ աստիճանի մարմին), որոնք պետք է միմյանցից անկախ լինեն:
2. Ակումբների Արտոնագրման Կոմիտեն որոշում է կայացնում արտոնագրման թեկնածուին համապատասխան արտոնագիր տալու նպատակահարմարության վերաբերյալ այն փաստաթղթերի հիման վրա, որոնք ներկայացվել են արտոնագրման թեկնածուի կողմից սահմանված վերջնաժամկետների սահմաններում; ինչպես նաև համապատասխան արտոնագրի ետ կանչման վերաբերյալ:
3. Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեն ներկայացված բողոքարկումների վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր կերպով և որոշում է համապատասխան արտոնագիր չնորհելու կամ մերժելու հարցը: Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեի որոշումը կարող է բողոքարկվել միայն Արբիտրաժային դատարանի առջև՝ համաձայն ՀՀՖ Կանոնակարգի 17-րդ հոդվածի, Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեի որոշման ընդունման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում:
4. Բողոքարկել կարող են միայն.
 - ա) արտոնագրման թեկնածու, ով մերժում է ստացել Ակումբների Արտոնագրման Կոմիտեի կողմից; կամ
 - բ) արտոնագիր ստացած այն ակումբները, որոնց արտոնագիրը ետ է կանչվել Ակումբների Արտոնագրման Կոմիտեի կողմից; կամ
 - գ) ՀՀՖ-ի արտոնագրման բաժնի պետը, ով գործում է արտոնագրողի անունից:
5. Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեն իր որոշումները կայացնում է Ակումբների Արտոնագրման Կոմիտեի որոշումների և արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացված բոլոր ընդունելի փաստաթղթերի հիման վրա՝ բողոքարկման գրավոր դիմումի հետ միասին՝ ներկայացված ճիշտ ժամանակին կամ մինչև սահմանված վերջնաժամկետը:
6. Ակումբների արտոնագրման մարմինների անդամները նշանակվում են ՀՀՖ-ի գործադիր կոմիտեի կողմից: Ակումբների արտոնագրման յուրաքանչյուր մարմին բաղկացած է նախագահից, նախագահի տեղակալից և հինգ ուրիշ անդամներից: Ակումբների Արտոնագրման մարմինների անդամները պետք է.
 - ա) սեփական պարտականությունները կատարելիս գործեն անշահախնդիր;
 - բ) ձեռնպահ մնան քվեարկությունից այն դեպքում, երբ կան ինչ-որ կասկածներ արտոնագրման թեկնածուի նկատմամբ իր անկախության վերաբերյալ կամ շահերի բախման վիճաբանությունների դեպքում: Այս կապակցությամբ կառավարման մարմնի անդամի անկախությունի չի կարող երաշխավորվել այն դեպքում, երբ նա կամ իր ընտանիքի ցանկացած անդամ (կին, ամուսին, երեխաներ, ծնողներ, եղբայր կամ քույր) հանդիսանում է արտոնագրման թեկնածուի անդամ, բաժնետեր, բիզնեսի գծով



գործընկեր, հովանավոր կամ խորհրդատու: Վերը նշված ցանկը ծառայում է պարզաբանական նպատակներին և սպառիչ չէ:

- զ) միաժամանակ չհանդիսանան որպես արտոնագրման մենեջեր;
- դ) միաժամանակ չհանդիսանան ՀՀՖ դատական կանոնադրական մարմնի անդամ
- ե) ներառի նվազագույնը մեկ որակավորված իրավաբան և աուդիտոր, որն ունի հաշվապահական հաշվառման/աուդիտորի բարձրագույն կրթության դիպլոմ կամ հավաստագիր՝ թողարկված և ճանաչված AAAA-ի անդամների կողմից:

7. Ակումների Արտոնագրման Կոմիտեի անդամները միաժամանակ չպետք է անդամագրված լինեն ՀՀՖ-ի կանոնադրության համաձայն ստեղծված արտոնագրողի ցանկացած այլ մարմնի և բողոքարկման կոմիտեի:

8. Ակումների Արտոնագրման մարմինների քվորումը պետք է կազմված լինի նվազագույնը.

ա) 7 անդամներից 3-ը Ակումների Արտոնագրման Կոմիտեի համար;

բ) 7 անդամներից 5-ը Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեի համար;

Ձայների հավասարության պարագայում Ակումների Արտոնագրման յուրաքանչյուր մարմնի նախագահի ձայնը որոշիչ է:

9. Ակումների Արտոնագրման մարմինները պետք է գործեն համաձայն հետևյալ գործընթացային կանոնների.

ա) վերջնաժամկետները, որոնք սահմանվում են ամենաուշը յուրաքանչյուր տարվա նոյեմբերի վերջում ՀՀՖ-ի արտոնագրման բաժնի կողմից հրապարակված առանձին փաստաթղթով և հաղորդվում բոլոր կողմորին, ովքեր ներառված են ՀՀՖ Ակումների Արտոնագրման համակարգի մեջ նույնպես ամենաուշը մինչև նոյեմբերի վերջ:

բ) իրավահավասարության սկզբունքների պաշտպանություն (տես Հոդված 11);

գ) ներկայացուցչություն, որը նշանակում է, որ յուրաքանչյուր դիմող պետք է ունենա առնվազն մեկ ներկայացուցիչ՝ ՀՀՖ-ի արտոնագրման բաժնի հետ կապի պահպանման համար և առնվազն մեկ ներկայացուցիչ արտոնագրման բողոքարկման կոմիտեի ժողովներին մասնակցելու համար: Ավելին, արտոնագրման թեկնածուին կարող է ներկայացնել իրավաբանական կրթությամբ անձը կամ բարձր որակավորում ունեցող աուդիտորը: Ակումների արտոնագրման մարմինները կարող են կողմի ներկայացուցիչից պահանջել ներկայացնել նրա որակավորման ապացույց:

դ) լսելի լինելու իրավունքը երաշխավորված է բոլոր դիմորդների համար արտոնագրման գործընթացի ընթացքում: Բոլոր դիմորդներին երաշխավորված է նաև մասնակցելու Ակումների Արտոնագրման երկու կոմիտեների ժողովներին:

ե) պաշտոնական լեզու՝

- ներքին հաղորդակցման համար՝ հայերեն;
- արտաքին հաղորդակցման համար (ՈւԵՖԱ, այլ ազգային ասոցիացիաներ և այլն)՝ անգլերեն և ռուսերեն;

զ) բողոքարկման համար դիմում ներկայացնելու ժամանակահատվածը հետևյալն է.

- Բողոքարկման դիմում ներկայացնելու սկիզբը սկսվում է արտոնագրի մերժման որոշմանը և պաշտոնապես տեղեկացնելուն հաջորդող աշխատանքային օրվանից: Ոչ աշխատանքային օրերը և ՀՀ պետական տոները չեն ընդգրկվում հաշվարկման մեջ:
- Բողոքարկման դիմում ներկայացնելու ժամկետը լրանում է վերջնաժամկետի օրը 18:00:



- է) բողոքարկման ժամկետը արտոնագրի մերժման որոշումը պաշտոնապես հայտարարելուց հետո հինգ օր է;
- ը) բողոքարկման արդյունք (օիրնակ՝ չհետաձգվող արդյունք);
- թ) հաստատող փաստաթղթերի պահանջվող տեսակը; արտոնագրողի կողմից համապատասխան գործի համար պահանջվող գրավոր փաստ;
- ժ) ապացուցման պարտականությունը. արտոնագրման թեկնածուն պարտավոր է ներկայացնել ապացույցներ:
- ի) որոշումը: Գրավոր որոշումը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.
- Թողարկման վայրը ամսաթիվը;
 - Որոշում կայացնող մարմնի անդամների անունները;
 - Շահագրգիռ կողմերի անունները և նրանց ներկայացուցիչների անունները;
 - Կողմերի բողոքները;
 - Որոշման դե ֆակտո և դե յուրե պատճառները;
 - Բողոքարկման դատավճիռը;
 - Որոշում կայացնող մարմնի նախագահի ստորագրությունը;
 - Եթե կիրառելի է, բողոքարկման իրավունքի ցուցում, ներառյալ բողոքարկման դիմումի ձևը, որ մարմնին դիմել և բողոքարկման վերջնաժամկետը:
- Որոշումը պետք է պաշտոնապես հայտարարվի շահագրգիռ կողմերին (ակումբներ, ԶԼՄ-ներ և այլն) մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
- լ) հիմքեր բողոքարկման համար.
- Ակումբների Արտոնագրման Կոմիտեն չի անցկացրել արդար լսումներ կամ էլ խախտել է դիմողի ձայնի իրավունքը
 - Ակումբների Արտոնագրման կոմիտեի կողմից կայացրած որոշումը դե յուրե սխալ էր և խախտել է ՀՀՖ ակումբների արտոնագրման կանոնակարգերը և/կամ բնական արդարադատությունը եւ/կամ խեղաթյուրել է այլ;
 - Ակումբների Արտոնագրման Կոմիտեն կայացրել է որոշում, որը այն չպետք է կայացնե՝ հիմնվելով գործի փաստերի վրա:
- խ) բողոքարկման դիմումի բովանդակությունը և ձևը.
- Բողոքարկման դիմումը պետք է լինի գրավոր և պարունակի հետևյալ ինֆորմացիան.
- Որ որոշման դեմ է բողոքարկումը;
 - Բողոքարկման պատճառը;
 - Բողոքարկողները;
 - Բողոքարկողի ունեցած ցանկացած նոր փաստ, ինչպես նաև փաստեր տրամադրելու առաջարկություն:
- ծ) քննարկում (լսումներ).
- Քննարկումը (լսումները) տեղի է ունենում փակ դռների ետևում և ընդգրկում է որոշում կայացնող և քվորում ապահովող անդամների ցուցումները:
- կ) գործընթացի արժեքը /ադմինիստրատիվ վճարներ/կանխավճարներ.
- Ակումբների Արտոնագրման Կոմիտեի լսումներն անվճար են;
 - Արտոնագրման բողոքարկման կոմիտեի լսումները կազմում են մինչև 50000 դրամ:



Հոդված 8 – Պատժամիջոցների ցանկ

Գնահատման գործընթացի պատշաճ իրականացման համար ՀՀՖ-ն.

- ա) ստեղծել է պատժամիջոցների ցանկ (ներկայացված է ՀՀՖ Կարգապահական Կոմիտեի կանոնակարգում) ՀՀՖ Ակումբների Արտոնագրման համակարգի համար: Այս պատժամիջոցները վերաբերվում են 16-րդ հոդվածի 2-րդ կետում նշված չափանիշները չհարգելուն:
- բ) ինչպես նաև վերաբերվում է ՀՀՖ Ակումբների Արտոնագրման համակարգի կանոնակարգի խախտումների դեպքում ՀՀՖ Կարգապահական Կոմիտեի կանոնակարգում առկա մի շարք այլ պատժամիջոցների:

ՀՀՖ Կարգապահական Կոմիտեն է կազմում այս սանկցիաները արտոնագրման թեկնառուների դեմ:

Հոդված 9 – Արտոնագրման հիմնական գործընթաց

1. ՀՀՖ ակումբների արտոնագրման համակարգի հիմնական գործընթացը բնութագրվում է որպես ակումբների արտոնագրման չափանիշի ստուգում և համապատասխան արտոնագրերի շնորհման նկատմամբ վերահսկողություն: Այն բաղկացած է 2 մասից (մի կողմից ազգային արտոնագրի համար, մյուս կողմից ՈՒԵՖԱ-ի) և նկարագրված է Հավելված II-ում: Արտոնագրման հիմնական գործընթացը պետք է ամենամյա որակավորում ստանա անկախ որակավորման մարմնի կողմից՝ ի հակառակ Ակումբների Արտոնագրման Որակի Չափանիշի:
2. ՀՀՖ ակումբների արտոնագրման համակարգի հիմնական գործընթացը սկսվում է արտոնագրման պատասխանատուի կողմից (դեկտեմբերին) ակումբների արտոնագրման փաստաթղթերի ստեղծմամբ և ավարտվում է ՈւԵՖԱ-ի ադմինիստրացիային արտոնագրման որոշումների ցուցակի ներկայացմամբ մինչև ՈւԵՖԱ-ի կողմից սահմանված վերջնաժամկետը (սկզբունքորեն մայիսի 31-ին):
3. Ինչպես նշված է Հոդված 7-ի 9-րդ պարագրաֆի ա) կետում վերը նշված կարևոր քայլերի վերջնաժամկետները հստակորեն սահմանված են ՀՀՖ Ակումբների Արտոնագրման բաժնի կողմից և ժամանակին ներկայացվում են շահագրգիռ ակումբների ուշադրությանը ամենաուշը դեկտեմբեր ամսվա վերջում:

Հոդված 10 – Գնահատման գործընթաց

Գնահատման մեթոդները սահմանվում են ՀՀՖ ակումբների արտոնագրման բաժնի կողմից, բացառությամբ նրանց, որոնք պետք է վերահսկեն ֆինանսական չափանիշների կատարումը, որոնց համար գոյություն ունեն գնահատման հատուկ գործընթացներ՝ ձևակերպված հավելված IX-ում:

Հոդված 11 – Իրավահավասարություն և գաղտնիություն

1. Արտոնագրողը ապահովում է արտոնագրման բոլոր թեկնածուների իրավահավասարությունը արտոնագրման ողջ գործընթացի ժամանակ:
2. Արտոնագրողը արտոնագրման թեկնածուին երաշխավորում է լիակատար գաղտնիություն արտոնագրման ընթացքում իր կողմից ներկայացված ցանկացած տեղեկատվության համար: Ցանկացած անձ, որը մասնակցում է արտոնագրման գործընթացին որպես արտոնագրող կամ նշանակված արտոնագրողի կողմից, մինչ իր աշխատանքը սկսելը պարտավոր է ստորագրել գաղտնիություն պահպանելու պարտավորագիր:



Գլուխ II. Արտոնագրման թեկնածու և արտոնագիր

Հոդված 12 – Արտոնագրման թեկնածուի սահմանում

1. Արտոնագրման թեկնածու կարող է լինել միայն ֆուտբոլային ակումբը, այսինքն՝ իրավաբանական անձ, որն ամբողջովին և միանձնյա պատասխանատու է այն ֆուտբոլային թիմի համար, որը մասնակցում է ազգային և միջազգային ակումբային մրցաշարերին, և որը.
 - ա) կամ գրանցված է որպես ՀՖՖ-ի անդամ (այսուհետև՝ գրանցված անդամ); կամ
 - բ) գրանցված անդամի հետ ունի պայմանագրային հարաբերություններ (այսուհետև՝ «ֆուտբոլային ձեռնարկություն»); կամ
 - գ) ՀՖՖ-ի հետ ունի ուղղակի պայմանագրային հարաբերություններ և ընդունում է ՖԻՖԱ-ի, ՈւԵՖԱ-ի և ՀՖՖ-ի հիմնական սկզբունքները և կանոնադրությունները, կարգավորումները, հրահանգներն ու որոշումները:
2. Արտոնագիր ստանալու դիմումի ներկայացման ժամանակաշրջանի սկզբում անդամագրությունը և անուղղակի և ուղղակի պայմանագրային հարաբերությունները (եթե կա այդպիսին) պետք է գոյություն ունենան երեք շաբաթանակական տարվանից ոչ քիչ ՈւԵՖԱ-ի արտոնագրի համար և մեկ տարվանից ոչ քիչ Ազգային արտոնագրի համար: Այս ժամանակահատվածում ցանկացած խախտում ակումբի իրավական կազմակերպական ձևի կամ ընկերության կառուցվածքի մեջ (ներառյալ, օրինակ, շտաբ-բնակարանի փոփոխում, ակումբի անվան կամ գույների փոփոխում, կամ բաժնեմասերի բաժանում տարբեր ակումբների միջև) սպորտային չափանիշներով իր որակավորումը բարձրացնելու և/կամ վնասելով արտոնագիր ստանալու նպատակով, կոլիտարկվի որպես անդամագրության կամ պայմանագրային հարաբերությունների (եթե կա այդպիսին) դադարեցում՝ այս դրույթի շրջանակներում:

Հոդված 13 – Արտոնագրման թեկնածուի ընդհանուր պարտականություններ

1. Արտոնագրման թեկնածուն արտոնագրողին պետք է ներկայացնի հետևյալը.
 - ա) ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը և/կամ փաստաթղթերը, որոնք ամբողջովին հաստատում են արտոնագրման պարտականությունների կատարման փաստը; և
 - բ) արտոնագրման որոշման կայացման համար անհրաժեշտ ցանկացած այլ փաստաթուղթ:
2. Այստեղ ներառվում է տեղեկատվություն հաշվետու կազմակերպության (կազմակերպությունների) մասին, որի վերաբերյալ պետք է տրամադրվի տեղեկատվություն մարզական, ենթակառուցվածքային, կադրային և ադմինիստրատիվ, իրավաբանական, ֆինանսական չափանիշներով:
3. Արտոնագրողը պետք է անհապաղ տեղեկացվի ցանկացած իրադարձության մասին, որը տեղի է ունեցել արտոնագրման համար դիմումը ներկայացնելուց հետո, եթե այդ իրադարձությունը նախկինում ներկայացված տեղեկատվության մեջ էական փոփոխությունների պատճառ է հանդիսացել:

Հոդված 14 – Արտոնագիր

1. Այն ակումբները, որոնք հնարավորություն են ստացել մասնակցել ՈւԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին իրենց մարզական արդյունքների կամ <<Արդար խաղ>>-ի սկզբունքով կազմված ՈւԵՖԱ-ի դասակարգման մեջ իրենց զբաղեցրած տեղի հիման վրա, գալիք մրցաշարջանի համար պետք է ձեռք բերեն ՀՖՖ-ի կողմից տրված արտոնագիր՝ համաձայն ՀՖՖ-ի ակումբների արտոնագրման կանոնակարգի՝ բացառությամբ 15-րդ հոդվածում նշված դեպքերի:



2. Այն ակումբները, որոնք որակավորվում են ՀՀՖ Բարձրագույն Խմբի մրցաշարին սպորտային չափանիշի հիման վրա, պետք է ձեռք բերեն ՀՀՖ կողմից տրվող ազգային արտոնագիրը ըստ ՀՀՖ Ակումբների Արտոնագրման կանոնների:
3. ՈՒԵՖԱ-ի և Ազգային արտոնագրերի ժամկետը լրանում է այն մրցաշրջանի վերջում, որի ընթացքում այն տրվել է՝ առանց նախօրոք զգուշացման:
4. ՈՒԵՖԱ-ի և Ազգային արտոնագրերը ենթակա չեն փոխանցման:
5. ՈՒԵՖԱ-ի և Ազգային արտոնագրերը կարող են ետ կանչվել ՀՀՖ-ի Ակումբների Արտոնագրման մարմինների կողմից հետևյալ դեպքերում, եթե.
 - ա) արտոնագիր տալու համար որևէ պայման այլևս չի բավարարվում; կամ
 - բ) արտոնագրողը խախտում է ՀՀՖ Ակումբների Արտոնագրման Կանոնակարգում ձևակերպված իր պարտականություններից որևէ մեկը:
6. Արտոնագրի ետ կանչման դեպքում ՀՀՖ-ի արտոնագրման բաժինը համապատասխանաբար պետք է այդ մասին տեղեկացնի ՈՒԵՖԱ-ին:

Հոդված 15 – Հատուկ թույլտվություն

1. Այն դեպքում, երբ ակումբը իր մարզական արդյունքների հիման վրա ՈՒԵՖԱ-ի ակումբային որևէ մրցաշարին մասնակցելու թույլտվություն է ստացել, սակայն ընդհանրապես չի անցել արտոնագրման որևէ գործընթաց կամ անցել է այնպիսի գործընթաց, որն ավելի քիչ է համարժեք կամ համարժեք չէ այն գործընթացին, որը կիրառվում է ՀՀՖ կողմից շնորհվող ՈՒԵՖԱ-ի արտոնագիր ստանալու դպքում բարձրագույն Խմբի ակումբներում, քանի որ չի պատկանում ՀՀՖ Բարձրագույն Խմբին, ապա ՀՀՖ-ն, որի իրավասության տակ է գտնվում տվյալ ակումբը, իրավունք ունի պահանջել ակումբների արտոնագրման համակարգի արտակարգ կիրառում՝ համաձայն IV հավելվածի:
2. Հիմնվելով այդպիսի արտակարգ կիրառման վրա՝ ՈՒԵՖԱ-ն կարող է հատուկ թույլտվություն տալ տվյալ ակումբին համապատասխան ակումբային մրցաշարին մասնակցելու համար՝ ելնելով ՈՒԵՖԱ-ի համապատասխան ակումբային մրցաշարի կանոնակարգից: Դիմումի այսպիսի աննախադեպ թույլտվությունը կգործի միայն այդ արտոնագրման թեկնածուի համար և միայն նշված ժամանակաշրջանի համար:

Գլուխ III. Արտոնագրման չափանիշներ

Հոդված 16 – Ընդհանուր դրույթներ

ՈՒԵՖԱ-ի Արտոնագիր

1. Բացառությամբ 2-րդ պարբերությունում ներկայացված չափանիշների, այս գլխում ներկայացված չափանիշները պետք է բավարարվեն ակումբների կողմից, որպեսզի նրանց տրվեն արտոնագրեր ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու համար:
2. Հոդված 23, 35, 41 և 42-ում նշված չափանիշների չկատարումը չի հանգեցնի ՈՒԵՖԱ-ի արտոնագրի մերժմանը, սակայն կկիրառվի ՀՀՖ կարգապահական կոմիտեի կանոնադրությամբ սահմանված պատժամիջոց (Հոդված 8):

Ազգային Արտոնագիր

3. Բացառությամբ Հոդված 23, 35, 41, 42 և 46-ից 52-ի, այս բաժնում սահմանված չափանիշները պետք է իրականացվեն ակումբների կողմից, որպեսզի նրանց շնորհվի ազգային արտոնագիր



ՀՀՖ Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցելու համար: Հոդված 23, 35, 41 և 42-ում նշված չափանիշների չկատարումը չի հանգեցնի ազգային արտոնագրի մերժմանը, սակայն կկիրառվի ՀՀՖ Կարգապահական Կոմիտեի կանոնադրությամբ սահմանված պատժամիջոց (Հոդված 8): Հոդված 46-ից 52-ում նշված չափանիշների չկատարումը չի հանգեցնի ոչ մի պատժամիջոցի կիրառմանը:

I. ՄԱՐԶԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ

Հոդված 17 – Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագիր

1. Արտոնագրման թեկնածուն պետք է ունենա արտոնագրողի կողմից հաստատված մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման գրավոր ծրագիր: Արտոնագրողը պետք է ստուգի և գնահատի հաստատված մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի կատարումը:
2. Ծրագրիը պետք է ներառի առնվազն հետևյալ բնագավառները.
 - ա) մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման նպատակային խնդիրները և զարգացման տեսլականը;
 - բ) մանկապատանեկան սեկտորի կազմակերպչական նկարագիրը (կազմակերպչական կառուցվածքը, ընդգրկված մարմինները, հարաբերությունները արտոնագրման թեկնածուի հետ, մանկապատանեկան թիմերը և այլն);
 - գ) աշխատանքային անձնակազմը (տեխնիկական, բժշկական, վարչական և այլն);
 - դ) մանկապատանեկան ֆուտբոլի սեկտորի համար մատչելի ենթակառուցվածքը (ուսումնամարզական շինություններ և խաղերի համար նախատեսված տարածքներ և այլն);
 - ե) ֆինանսական ռեսուրսներ (մատչելի բյուջեն, աջակցություն արտոնագրման թեկնածուի, ֆուտբոլիստների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և այլն);
 - զ) տարբեր տարիքային խմբերի համար ֆուտբոլային կրթության ծրագիրը (խաղային հմտությունները, տեխնիկական, տակտիկական և ֆիզիկական);
 - է) *խաղի կանոնների* վերաբերյալ կրթական ծրագիրը;
 - ը) հակախթանիչային կրթական ծրագիր;
 - թ) պատանի խաղացողների բժշկական սպասարկում (ներառյալ բժշկական զննումները);
 - ժ) արդյունքների գնահատման և առաջադրված խնդիրների լուծման համար ստուգման գործընթաց և հետադարձ կապի իրականացում;
 - ի) ծրագրի ուժի մեջ լինելու տևողությունը (նվազագույնը՝ երեք տարի, առավելագույնը՝ յոթ տարի):
3. Արտոնագրման թեկնածուն այնուհետև պետք է երաշխավորի հետևյալը.
 - ա) մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրին մասնակցող յուրաքանչյուր երիտասարդ ֆուտբոլիստ՝ 14.04.1999թ.-ի “Կրթության մասին” ՀՀ Օրենքի համաձայն, հնարավորություն ունի հաճախելու հանրակրթական դպրոցի պարտադիր դասընթացներին; և
 - բ) մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրին մասնակցող ոչ մի երիտասարդ ֆուտբոլիստ խոչընդոտներ չի ունենա իր՝ ոչ ֆուտբոլային կրթությունը շարունակելու գործում:



Հոդված 18 – Մանկապատանեկան թիմեր

1. Արտոնագրման թեկնածուն իր կամ իր դուստր ընկերության կամ իրեն ամրագրված այլ իրավաբանական անձի կազմում պետք է ունենա նվազագույնը հետևյալ մանկապատանեկան թիմերը.
 - ա) առնվազն երկու մանկապատանեկան թիմ 15-21 տարիքային խմբում;
 - բ) առնվազն մեկ մանկապատանեկան թիմ 10-14 տարիքային խմբում (ՈւԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցող ակումբների համար այս տարիքային խմբում առնվազն երկու մանկապատանեկան թիմ);
 - գ) առնվազն մեկ մանկապատանեկան թիմ մինչև 10 տարեկան տարիքային խմբում:
2. ՀՀՖ-ի ակումբների արտոնագրման 2012/2013 թթ.-ի մրցաշրջանի դրությամբ բոլոր ակումբները իրենց կամ դուստր ընկերության կազմում պետք է ունենան 10-14 տարիքային խմբի երկու թիմ;
3. Յուրաքանչյուր մանկապատանեկան թիմ, բացի մինչև 10 տարեկանների թիմից, պետք է մասնակցի ազգային, շրջանային և տեղական մակարդակով կազմակերպված և ՀՀՖ-ի կողմից ճանաչված պաշտոնական մրցաշարերին և ծրագրերին:
4. ՀՀՖ-ի կողմից թիմ(եր)ը կհամարվեն փոխկապակցված գրավոր պայմանագրային հարաբերությունների և ինտեգրված մանկապատանեկան զարգացման ծրագրի պարագայում եւ կստուգվեն արտոնագրման թեկնածուի կողմից ֆինանսական, տեխնիկական եւ այլ օժանդակության առկայության հաստատման համար

Հոդված 19 – Խաղացողների բժշկական խնամք

Արտոնագրման թեկնածուն պետք է հոգ տանի, որպեսզի այն բոլոր խաղացողները, որոնք իրավունք ունեն հանդես գալու գլխավոր թիմի կազմում, անցնեն ամենամյա բժշկական զննումներ՝ համաձայն ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման կանոնակարգի կողմից սահմանված նվազագույն պահանջների:

Հոդված 20 – Ֆուտբոլիստների գրանցում

Արտոնագրման թեկնածուի 10 տարեկանից բարձր բոլոր խաղացողները պետք է գրանցվեն ՀՀՖ-ում՝ համաձայն ՖԻՖԱ-ի ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի համապատասխան դրույթների:

Հոդված 21 – Պրոֆեսիոնալ խաղացողների հետ գրավոր պայմանագիր

Համաձայն ՖԻՖԱ-ի ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի համապատասխան դրույթների՝ արտոնագրման թեկնածուի բոլոր պրոֆեսիոնալ ֆուտբոլիստները պետք է գրավոր պայմանագիր կնքեն վերջինիս հետ:

Հոդված 22 – Մրցավարական հարցեր և խաղի կանոններ

1. Արտոնագրման թեկնածուն պետք է մասնակցի ՀՀՖ-ի կողմից կամ նրա օգնությամբ կազմակերպված մրցավարական հարցերի շուրջ որևէ խորհրդակցության կամ միջոցառման՝ արտոնագրման ենթակա մրցաշրջանին նախորդող տարում:
2. Մրցավարությանը վերաբերող խորհրդակցությանը կամ միջոցառմանը պարտավոր է մասնակցել առնվազն առաջին թիմի ավագը կամ նրա փոխարինողը, ինչպես նաև գլխավոր մարզիչը կամ նրա օգնականը:



Հոդված 23 – Ռասսայական հավասարության քաղաքականություն

ՈՒԵՖԱ-ի ապահովության և անվտանգության կանոնակարգում նշված ՈՒԵՖԱ-ի ռասիզմի դեմ պայքարի 10 կետանոց ծրագրի համաձայն՝ արտոնագրման թեկնածուն պետք է հաստատի և կիրառի ռասսայական և ֆուտբոլային խտրականության դեմ պայքարի քաղաքականություն:

II. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇ

Հոդված 24 – ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի անցկացման համար հաստատված մարզադաշտ

1. Արտոնագրման թեկնածուն իր տրամադրության տակ պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի ակումբային ՀՀՖ Բարձրագույն Խմբի մրցաշարերի անցկացման համար հաստատված մարզադաշտ, որը գտնվում է ՀՀՖ-ի իրավասության ներքո և պետք է հաստատված լինի ՀՀՖ-ի կողմից:
2. Եթե արտոնագրման թեկնածուն չի հանդիսանում մարզադաշտի սեփականատերը, ապա նա պետք է գրավոր պայմանագիր ներկայացնի այն մարզադաշտի սեփականատիրոջ(տերերի) հետ, որը կարող է օգտագործի:
3. Այս պայկանագիրը պետք է երաշխավորի մարզադաշտի(երի) օգտագործումը արտոնագրման մրցաշրջանի ընթացքում ՈՒԵՖԱ-ի և ՀՀՖ-ի տնային հանդիպումներն անցկացնելու համար:
4. Մարզադաշտը(երը) պետք է բավարարի *ՈՒԵՖԱ-ի մարզադաշտի ենթակառուցվածքի կանոնակարգի* նվազագույն պահանջները և նվազագույնը պետք է պատկանի ՈՒԵՖԱ-ի մարզադաշտերի դասակարգման 2-րդ դասին:

Հոդված 25 – Ուսումնամարզական շինություններ - մատչելիություն

1. Արտոնագրման թեկնածուն պետք է ամբողջ տարի իր տրամադրության տակ ունենա ուսումնամարզական շինություններ:
2. Եթե արտոնագրման թեկնածուն չի հանդիսանում ուսումնամարզական շինությունների սեփականատեր, ապա նա պետք է գրավոր պայմանագիր ներկայացնի այդ շինությունների սեփականատիրոջ(տերերի) հետ:
3. Այդ պայմանագիրը պետք է երաշխավորի, որ առաջիկա արտոնագրման մրցաշրջանում արտոնագրման թեկնածուի կողմից անցկացվող մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի շրջանակներում ուսումնամարզական շինությունները կարող են ամբողջ տարի օգտագործվել արտոնագրման թեկնածուի բոլոր թիմերի կողմից:

Հոդված 26 – Ուսումնամարզական շինություններ – անհրաժեշտ նվազագույն ենթակառուցվածք

Ուսումնամարզական շինությունների ենթակառուցվածքը պետք է իր մեջ ներառի նվազագույնը մեկ բացօթյա և մեկ փակ շինություն, հանդերձարան և բուժկետ:

III. ԿԱԴՐԱՅԻՆ և ՎԱՐՉԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ

Հոդված 27 - Ակումբի քարտուղարություն

Արտոնագրման թեկնածուն իր քարտուղարությանը պետք է ապահովի անհրաժեշտ քանակի համապատասխան որակավորում ունեցող աշխատակիցներով՝ իր ամենօրյա աշխատանքների իրականացման համար: Իր գործունեությունը իրականացնելու համար արտոնագրման թեկնածուի տրամադրության տակ պետք է լինի սեփական կամ վարձակալությամբ վերցված գրասենյակային տարածք: Նա պետք է երաշխավորի, որ գրասենյակը բաց լինի ՀՀՖ-ի և հասարակության հետ



հաղորդակցության համար, և որ այն ապահովված լինի առնվազն հեռախոսով, ֆաքսով և էլեկտրոնային փոստի հարմարություններով:

Հոդված 28 – Գործադիր տնօրեն

Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի գործադիր տնօրեն, որը պատասխանատու կլինի օպերատիվ հարցերի լուծման համար:

Հոդված 29 – Ֆինանսական հարցերով աշխատակից

1. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի ֆինանսական հարցերով որակավորված աշխատակից, որը պատասխանատու կլինի ֆինանսական հարցերի համար:
2. Ֆինանսական հարցերով աշխատակիցը պետք է ունենա հետևյալ որակավորումներից առնվազն մեկը.
 - ա) հաշվապահի դիպլոմ և/կամ հավաստագիր; կամ
 - բ) որակավորված աուդիտորի դիպլոմ և/կամ հավաստագիր:

Հոդված 30 – Մամլո քարտուղար

1. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի որակավորված մամլո քարտուղար, որը պատասխանատու կլինի լրատվական խնդիրների համար:
2. Մամլո քարտուղարը պետք է ունենա հետևյալ որակավորումներից առնվազն մեկը.
 - ա) լրագրողի դիպլոմ;
 - բ) մամլո քարտուղարի դիպլոմ, որը տրվել է ՀՀՖ-ի կամ վերջինիս կողմից ճանաչված կազմակերպության կողմից:
3. ՀՀՖ-ի կողմից տրված մամլո քարտուղարի դիպլոմի վավերականության ժամկետը 5 տարի է: Դասընթացների հաճախականությունը կորոշվի ՀՀՖ Արտոնագրման բաժնի կողմից արտոնագրման թեկնածուների հետ խորհրդակցելու պայմանով:

Հոդված 31 – Բժիշկ

1. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի առնվազն մեկ բժիշկ, որը պատասխանատու կլինի ֆուտբոլային խաղերի և մարզումների ընթացքում բժշկական սպասարկման համար, ինչպես նաև հակադոպինգային քաղաքականության համար:
2. Բժիշկը պետք է ունենա Մ. Հերացու անվան Երևանի Պետական Բժշկական Համալսարանի կամ համարժեք դիպլոմ:
3. Նա պետք է պատշաճ կերպով գրանցված լինի ՀՀՖ-ում:

Հոդված 32 – Ֆիզիոթերապևտ

1. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի առնվազն մեկ ֆիզիոթերապևտ, որը պատասխանատու կլինի ֆուտբոլային խաղերի և մարզումների ժամանակ առաջին թիմի խաղացողների բուժման և մերսման համար:
2. Ֆիզիոթերապևտը պետք է ունենա ՀՀ առողջապահության նախարարության կողմից ճանաչված ֆիզիոթերապևտի դիպլոմ և/կամ ֆիզիոթերապևտի դասընթացների հավաստագիր կամ դրանց համարժեքը:



3. Նա պետք է պատշաճ կերպով գրանցված լինի ՀՖՖ-ում:

Հոդված 33 – Անվտանգության հարցերով աշխատակից

1. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի անվտանգության հարցերով որակավորված աշխատակցի, որը պատասխանատու կլինի ապահովության և անվտանգության խնդիրների համար:
2. Անվտանգության հարցերով աշխատակիցը պետք է ունենա հետևյալ որակավորումներից առնվազն մեկը.
 - ա) օրինապահ մարմինների կամ անվտանգության ծառայության աշխատակցի արտոնագիր՝ համաձայն ՀՀ օրենսդրության;
 - բ) ապահովության և անվտանգության դիպլոմ, որը տրվել է ՀՖՖ-ի կամ պետության կողմից ճանաչված կազմակերպության կողմից:

Հոդված 34 – Կարգադրիչներ

Արտոնագրման թեկնածուն պետք է վարձի որակավորված կարգադրիչների, որպեսզի տնային խաղերի ընթացքում ապահովի անհրաժեշտ ապահովությունն ու անվտանգությունը:

Հոդված 35 – Երկրպագուների հարցերով պատասխանատու

1. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի ներկայացուցիչ, որը պատասխանատու կլինի երկրպագուների հետ կապի համար:
2. Երկրպագուների հարցերով պատասխանատուն պետք է կանոնավոր կերպով մասնակցի ակումբի ղեկավարության հետ հանդիպումներին և պետք է համագործակցի անվտանգության պատասխանատուի հետ ապահովության և անվտանգության հետ կապված հարցերում:
- 3.

Հոդված 36 – Առաջին թիմի գլխավոր մարզիչ

1. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի որակավորված գլխավոր մարզիչ, որը պատասխանատու կլինի առաջին թիմի ֆուտբոլային մարզական հարցերի համար:
2. Գլխավոր մարզիչը պետք է ունենա հետևյալ մարզչական որակավորումներից առնվազն մեկը.
 - ա) ՈԻԵՖԱ-ի “A” կարգի մարզչական դիպլոմ;
 - բ) գործող, ոչ ՈԻԵՖԱ-ի կողմից տրված մարզչական դիպլոմ, որը համարժեք է ա) կետում նշվածին և ՈԻԵՖԱ-ի կողմից ճանաչվում է որպես այդպիսին;
3. Գլխավոր մարզիչը պետք է պատշաճ կերպով գրանցված լինի ՀՖՖ-ում:

Հոդված 37 – Առաջին թիմի մարզչի օգնական

1. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի որակավորված մարզիչ, որն օգնում է գլխավոր մարզչին առաջին թիմի խաղերի հետ կապված հարցերում:
2. Առաջին թիմի գլխավոր մարզչի օգնականը պետք է ունենա մարզչական հետևյալ որակավորումներից առնվազն մեկը.
 - ա) ՈԻԵՖԱ-ի “A” կարգի մարզչական դիպլոմ;



- բ) գործող, ոչ ՈւԵՖԱ-ի կողմից տրված մարզչական դիպլոմ, որը համարժեք է ՈւԵՖԱ-ի “A” կարգի մարզչական դիպլոմին և ՈւԵՖԱ-ի կողմից ճանաչվում է որպես այդպիսին;
3. Մարզիչը պետք է պատշաճ կերպով գրանցված լինի ՀՀՖ-ում:

Հոդված 38 – Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի ղեկավար

1. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի որակավորված ղեկավար, որը պատասխանատու կլինի մանկապատանեկան ֆուտբոլի ամենօրյա աշխատանքների և տեխնիկական սեկտորի համար:
2. Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի ղեկավարը պետք է ունենա հետևյալ մարզչական որակավորումներից առնվազն մեկը.
 - ա) ՈւԵՖԱ-ի “A” կարգի մարզչական դիպլոմ;
 - բ) գործող, ոչ ՈւԵՖԱ-ի կողմից տրված մարզչական դիպլոմ, որը համարժեք է ՈւԵՖԱ-ի “A” կարգի մարզչական դիպլոմին և ՈւԵՖԱ-ի կողմից ճանաչվում է որպես այդպիսին;
3. Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի ղեկավարը պետք է պատշաճ կերպով գրանցված լինի ՀՀՖ-ում:

Հոդված 38/1 – Առաջին թիմի այլ մարզիչներ

1. Արտոնագրման թեկնածուն պետք է նշանակի դարպասապահների մարզման և ֆիզիկական պատրաստվածության համար պատասխանատու համապատասխան որակավորում ունեցող մարզիչների:
2. Այդ մարզիչները պետք է ունենան հետևյալ մարզչական որակավորումներից առնվազն մեկը.
 - ա) ՈւԵՖԱ-ի “B” կարգի մարզչական դիպլոմ
 - բ) գործող, ոչ ՈւԵՖԱ-ի կողմից տրված մարզչական դիպլոմ, որը համարժեք է ՈւԵՖԱ-ի “B” կարգի մարզչական դիպլոմին և ՈւԵՖԱ-ի կողմից ճանաչվում է որպես այդպիսին;
3. Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի ղեկավարը պետք է պատշաճ կերպով գրանցված լինի ՀՀՖ-ում:

Հոդված 39 – Մանկապատանեկան թիմերի մարզիչներ

1. Արտոնագրման թեկնածուն իր յուրաքանչյուր պարտադիր մանկապատանեկան թիմերի համար պետք է նշանակի առնվազն մեկ որակավորված մարզիչ, որը պատասխանատու կլինի այդ թիմի համար բոլոր մարզչական ֆուտբոլային հարցերում:
2. Այդ մարզիչները պետք է ունենան հետևյալ որակավորումներից առնվազն մեկը.
 - ա) ՈւԵՖԱ-ի “B” կարգի մարզչական դիպլոմ
 - բ) գործող, ոչ ՈւԵՖԱ-ի կողմից տրված մարզչական դիպլոմ, որը համարժեք է ՈւԵՖԱ-ի “B” կարգի մարզչական դիպլոմին և ՈւԵՖԱ-ի կողմից ճանաչվում է որպես այդպիսին;
3. Նույն մարզիչը չի կարող մարզել ավելի քան երկու թիմ:
4. Բոլոր մանկապատանեկան մարզիչները պետք է պատշաճ կերպով գրանցված լինեն ՀՀՖ-ում:



Հոդված 40 - Հոդված 36-39-ին կիրառվող ընդհանուր դրույթներ

1. Համաձայն ՌԻԵՖԱ-ի մարզչական կոնվենցիայի դրույթների կիրառման՝ 36-39 հոդվածներում նշված ՌԻԵՖԱ-ի կողմից պահանջվող մարզչական դիպլոմ ունեցող անձինք համարվում են մարզիչ, եթե
 - ա) ՌԻԵՖԱ-ի անդամ ասոցիացիայի կողմից ստացել են ՌԻԵՖԱ-ի մարզչական դիպլոմ, կամ
 - բ) գոնե սկսել է պահանջվող ՌԻԵՖԱ-ի մարզչական դիպլոմի դասընթացը: Սովորական գրանցումը պահանջվող դիպլոմի դասընթացին բավական չէ չափանիշները բավարարելու համար:

Հոդված 41 – Իրավունքներ և պարտականություններ

28-39 հոդվածներում ձևակերպված անձնակազմի իրավունքներն ու պարտականությունները պետք է սահմանված լինեն գրավոր կերպով՝ իրենց աշխատանքային պայմանագրերում և աշխատանքի նկարագրություններում:

Հոդված 42 – Մրցաշրջանի ընթացքում փոխարինման պարտականություն

1. Եթե հոդվածներ 28-39-ում նշված պաշտոնը թափուր է դառնում արտոնագրման մրցաշրջանի ընթացքում, ապա արտոնագրվածը պետք է երաշխավորի, որ առավելագույնը 30օրյա ժամկետում պաշտոնը կգրադեցվի պահանջվող որակավորումներ ունեցող անձի կողմից:
2. Եթե պաշտոնը թափուր է մնում հիվանդության կամ դժբախտ պատահարի հետևանքով, արտոնագրողը կարող է երկարաձգել նշված 30 օրյա ժամկետը միայն այն դեպքում, երբ հիմնավոր փաստեր են ներկայացվում, որ պաշտոնակատար անձը դեռևս ֆիզիկապես պատրաստ չէ կատարել իր պարտականությունները:
3. Արտոնագրվածը այդպիսի փոփոխության մասին պետք է տեղեկացնի ՀՀՖ-ին 5 աշխատանքային օրվա ընթացքում:

IV. ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ

Հոդված 43- ՈՒԵՖԱ-ի ակումբային և ՀՀՖ Բարձրագույն Խմբի մրցաշարերին մասնակցելու հայտարարագիր

1. Արտոնագրման թեկնածուն պետք է ներկայացնի իրավական ուժ ունեցող հայտարարագիր՝ հավաստելով հետևյալը.
 - ա) ակումբը իրավաբանորեն պարտադիր է ճանաչում ՖԻՖԱ-ի, ՌԻԵՖԱ-ի, ՀՀՖ-ի կանոնադրությունները, կանոնակարգերը, կանոններն ու որոշումները, ինչպես նաև Լոզանում տեղակայված CAS-ի (Court of Arbitration for Sport - Սպորտային հարցերով արբիտրաժային դատարան) իրավագործությունը ՌԻԵՖԱ-ի կանոնադրության համապատասխան հոդվածներով;
 - բ) ազգային մակարդակով կլիադա այն մրցաշարերում, որոնք ճանաչված և հաստատված են ՀՀՖ-ի կողմից;
 - գ) միջազգային մակարդակով կմասնակցի ՌԻԵՖԱ-ի կամ ՖԻՖԱ-ի կողմից ճանաչված մրցաշարերին (այս դրույթը չի վերաբերում ընկերական խաղերին);
 - դ) այն կտեղեկացնի արտոնագրողին ցանկացած կարևոր փոփոխության, միջոցառման կամ մեծ տնտեսական կարևորություն ներկայացնող իրավիճակի մասին;



- ե) այն պետք է ենթարկվի և ուսումնասիրի ՀՀՖ ակումբների արտոնագրման կանոնակարգը;
 - զ) այն պետք է ենթարկվի և հետամուտ լինի ՈԻԵՖԱ-ի արտոնագրման և ֆինանսական արդար խաղի կանոնակարգերին;
 - է) բոլոր ներկայացված փաստաթղթերը պետք է լինեն ամբողջական և ճիշտ
 - ը) այն լիազորում է ՀՀՖ Ակումբների Արտոնագրման բաժնին, ՀՀՖ Ակումբների Արտոնագրման մարմիններին, ՈԻԵՖԱ-ի վարչակազմին և ՈւԵՖԱ-ի Արդարադատության վարչակազմի մարմիններին ուսումնասիրելու ներկայացված փաստաթղթերը և ցանկացած համապատասխան մարմնից կամ մասնավոր մարմնից տեղեկատվություն պահանջելու՝ համաձայն ՀՀ օրենսդրության;
 - թ) այն ընդունում է, որ ՈԻԵՖԱ-ն իրավունք է վերապահում իրականացնելու համապատասխանելիության աուդիտներ ազգային մակարդակով՝ համաձայն ՀՀՖ Ակումբների Արտոնագրման Կանոնակարգի հոդված55-ի:
2. Այս հայտարարագիրը պետք է հաստատվի ակումբի իրավասու անձի ստորագրությամբ՝ ՀՀՖ ներկայացնելու ժամկետից ոչ ավել, քան երեք ամիս առաջ:

Հոդված 44 – Նվազագույն իրավական տեղեկատվություն

1. Արտոնագրման թեկնածուն պետք է ներկայացնի իր ներկայիս վավեր կանոնադրության պատճենը:
2. Եթե այն դեռևս ներառված չէ փաստաթղթերի մեջ՝ համաձայն վերոնշյալ առաջին կետի, ապա արտոնագրման թեկնածուն պետք է այնուհետև քաղվածք ներկայացնի պետական ռեգիստրից կամ ՀՀՖ-ի ակումբի ռեգիստրից, որը պետք է պարունակի հետևյալ նվազագույն տեղեկատվությունը՝
 - ա) անուն
 - բ) շտաբ-բնակարանի հասցե
 - գ) իրավական կազմակերպական ձև
 - դ) իրավասու ստորագրող կողմերի ցուցակ
 - ե) պահանջվող ստորագրության տեսակ:

Հոդված 45 – Գրավոր պայմանագիր ֆուտբոլային ընկերության հետ

1. Եթե արտոնագրման թեկնածուն ֆուտբոլային ընկերություն է, ինչպես սահմանված է հոդված 12 (պարագրաֆ1բ), ապա այն պետք է ներկայացնի գրանցված անդամի հետ իր իրավունքների փոխանցման վերաբերյալ գրավոր պայմանագիր:
2. Պայմանագիրը պետք է պարտադրի հետևյալ նվազագույն դրույթները.
 - ա) ֆուտբոլային ընկերությունը պետք է ենթարկվի ՖԻՖԱ-ի, ՈԻԵՖԱ-ի և ՀՀՖ-ի գործող կանոնադրություններին, կանոնակարգերին, ուղեցույցներին և որոշումներին;
 - բ) ֆուտբոլային ընկերությունը չպետք է փոխանցի մասնակցության իր իրավունքը ազգային և միջազգային մակարդակի մրցաշարերում;
 - գ) այս ֆուտբոլային ընկերության այսպիսի մրցաշարի մասնակցության իրավունքը կասեցվում է, եթե իրավունքները փոխանցող ակումբը դադարում է հանդես գալ որպես ասոցիացիայի անդամ:



- դ) եթե ֆուտբոլային ընկերությունը սնանկանում կամ լուծարվում է, ապա սա համարվում է անդամակցության դադարեցում կամ պայմանագրային հարաբերությունների խզում՝ սահմանված 12-րդ հոդվածով: Հստակության համար նշենք, որ եթե արտոնագիրն արդեն տրվել է ֆուտբոլային ընկերությանը, ապա այն չի կարող ֆուտբոլային ընկերությունից փոխանցվել գրանցված անդամին:
 - ե) ՀՀՖ-ն իրավունք ունի հաստատելու ֆուտբոլային ընկերության անունը, որով վերջինս հանդես է գալիս ՀՀՖ-ի կողմից ճանաչված և հաստատված ազգային ակումբային մրցաշարերին:
 - զ) Համապատասխան իրավասու ազգային կամ միջազգային արբիտրաժային դատարանի պահանջով ֆուտբոլային ընկերությունը պետք է տրամադրի տեսակետներ և տեղեկատվություն, ինչպես նաև փաստաթղթեր ազգային և/կամ միջազգային մրցաշարում իր մասնակցության վերաբերյալ:
3. Իրավունքների փոխանցման մասին պայմանագիրն ու վերջինիս վերաբերյալ ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի ՀՀՖ-ի կողմից:

Հոդված 46 – Իրավական խմբի կառուցվածք և գլխավոր վերահսկող կազմակերպություն

- 1. Արտոնագրման թեկնածուն պետք է ՀՀՖ ներկայացնի ղեկավարության կողմից ամբողջովին հաստատված իրավական խմբի ընդհանուր կառուցվածքը՝ սխեմայի տեսքով:
- 2. Այս փաստաթուղթը պետք է պարունակի տեղեկատվություն բոլոր դուստր, անդամ և վերստուգիչ կազմակերպությունների՝ ընդհուպ մինչև գլխավոր մայր ձեռնարկության և վերջնական վերահսկողություն իրականացնող կողմի մասին: Փաստաթուղթը պետք է ներառի նաև տվյալ մայր ձեռնարկության ցանկացած անդամ կամ դուստր ընկերության վերաբերյալ տեղեկություններ:
- 3. Իրավական խմբի կառուցվածքում հստակ նշվում է այն կազմակերպությունը, որը հանդիսանում է ՀՀՖ անդամ և որ կազմակերպությունն է արտոնագրման թեկնածուն: Այնտեղ պետք է նշվի նաև հետևյալ տեղեկատվությունը թե ՀՀՖ-ի անդամի, թե արտոնագրման թեկնածուի ցանկացած դուստր ընկերության վերաբերյալ.
 - ա) իրավաբանական անձի անուն
 - բ) իրավաբանական անձի տեսակ
 - գ) հիմնական և ցանկացած ֆուտբոլային գործունեության մասին տեղեկատվություն
 - դ) սեփականության մասնաբաժնի տոկոսադրույք (և ընտրաձայների տոկոսադրույք, եթե վերջինս տարբերվում է սեփականության մասնաբաժնի տոկոսադրույքից)
 - ե) բաժնետիրական կապիտալ
 - զ) բոլոր ակտիվների գումարը
 - է) եկամուտների ընդհանուր գումարը
 - ը) սեփական կապիտալի ընդհանուր ծավալը:



V. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ (կիրառելի է միայն ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի համար)

Հոդված 46/1– Հաշվետու իրավաբանական անձ է՝ համախմբված խումբ

1. Արտոնագրման թեկնածուն սահմանում է հաշվետու խումբը, այսինքն՝ այն կազմակերպությունը կամ կազմակերպությունների խումբը, որոնց վերաբերյալ՝ համաձայն Հավելված VII-ի Բ կետի, պետք է տրամադրվի ֆինանսական տեղեկատվություն (օր.՝ մեկ կազմակերպության, համախմբված կամ համակցված ֆինանսական հաշվետվություններ):
2. Հաշվետու խումբը պետք է իր մեջ ընդգրկի բոլոր այն կազմակերպությունները, որոնց հաշվապահական փաստաթղթերում ստորև նշվածը հաշվվում է որպես.
 - ա) աշխատակիցներին վճարվող փոխհատուցումներ (ինչպես սահմանված է 50-րդ հոդվածում), որոնք բխում են պայմանագրային կամ իրավական պարտականություններից, և
 - բ) ֆուտբոլիստների ձեռքբերման/վաճառքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերն ու մուտքերը:
3. Հաշվետու խումբը պետք է իրավաբանական խմբի կառուցվածքում ներառի բոլոր կազմակերպությունները և մասնավորապես բոլոր այն կազմակերպությունները, որոնք եկամուտ են բերում, կատարում են ծառայություններ և/կամ կատարում է ծախսեր արտոնագրման թեկնածուի ստորև նշված գործունեությունների համար.
 - ա) տոմսեր
 - բ) հովանավորչություն և գովազդ
 - գ) հեռարձակում
 - դ) մերչանդայզինգ և հյուրընկալություն
 - ե) ակումբի գործունեություն (կառավարում, խաղի կազմակերպում և ճամփորդություն)
 - զ) ֆինանսավորում (ներառյալ արտոնագրման թեկնածուի հուսալի կամ գրավադրված ակտիվների ֆինանսավորում)
 - է) մարզադաշտի և մարզումային ենթակառուցվածքների օգտագործում և կառավարում
 - ը) մանկապատանեկան ոլորտ:
4. Կազմակերպությունը կարող է հեռացվել հաշվետու խմբից միայն եթե.
 - ա) այն էական չէ արտոնագրման թեկնածուի կողմից ստեղծված ամբողջ խմբի համեմատությամբ, կամ
 - բ) նրա հիմնական գործունեությունը կամված չէ ֆուտբոլային ակումբի գործունեության, գտնվելու վայրի, ակտիվների և բրենդի (անվան) հետ:
5. Արտոնագրման թեկնածուն պետք է.
 - ա) հայտարարի արդյոք 3-րդ կետում նշված գործողությունների ցանկը ներառվել է հաշվետու խմբում ընդգրկված կազմակերպություններից մեկի հաշվապահական փաստաթղթերի մեջ և տվել է մանրամասն բացատրություն եթե ներառված չէ, և
 - բ) հիմնավորի իրավաբանական խմբի կառուցվածքում ընդգրկված կազմակերպության՝ հաշվետու խմբում առկա չլինելու մանրամասները:



Հոդված 47 – Տարեկան ֆինանսական հաշվետվություն

1. Տարեկան ֆինանսական հաշվետվությունը նախապատրաստվում և ներկայացվում է՝ համաձայն նախօրոք հաստատված ժամկետի: Այն պետք է ներկայացվի մինչև արտոնագրողին դիմումը հանձնելու վերջնաժամկետը և մինչև արտոնագրման որոշումների ցուցակը ՈԻԵՖԱ-ին հանձնելու վերջնաժամկետը:
2. Տարեկան ֆինանսական հաշվետվությունը պետք է անկախ աուդիտորի կողմից ենթարկվի աուդիտորական ստուգման՝ համաձայն հավելված V-ում սահմանված կարգի:
3. Տարեկան ֆինանսական հաշվետվությունը պետք է բաղկացած լինի հետևյալից.
 - ա) հաշվապահական հաշվեկշիռ
 - բ) եկամուտների և կորուստների վերաբերյալ հաշվետվություն
 - գ) դրամական միջոցների հոսքի վերաբերյալ հաշվետվություն
 - դ) հաշվառային քաղաքականության կարևոր ասպարեզները ներառող գրառումներ և այլ բացատրական գրառումներ և
 - ե) ղեկավարության կողմից պատրաստված ֆինանսական ամփոփում:
4. Տարեկան ֆինանսական հաշվետվությունը պետք է համապատասխանի հավելված VI-ում սահմանված տեղեկատվության տրամադրման նվազագույն պահանջներին և հավելված VII-ում սահմանված հաշվապահական հաշվառման սկզբունքներին: Այնտեղ պետք է ներկայացվեն նախկին մրցաշրջանի պաշտոնական փակման օրվա դրությամբ համեմատական ցուցանիշները:
5. Եթե տարեկան ֆինանսական հաշվետվությունը չի համապատասխանում հաշվապահական հաշվառման բովանդակության և վարույթի նվազագույն պահանջներին, ինչպես սահմանված է վերոնշյալ 4-րդ կետում, ապա արտոնագրման թեկնածուն պետք է լրացուցիչ տեղեկություններ հավաքի, որպեսզի համապատասխանի տեղեկատվության տրամադրման նվազագույն պահանջներին: Լրացուցիչ տեղեկատվությունը գնահատվում է անկախ աուդիտորի կողմից՝ համաձայն հավելված V-ում սահմանված կարգի:

Հոդված 48 – Ֆինանսական հաշվետվություն միջանկյալ ժամանակահատվածի համար

Ենթակա չէ կիրառման ՀՀՖ ակումբների արտոնագրման համակարգում:

Հոդված 49 – Ժամկետանց վճարումների բացակայություն այլ ֆուտբոլային ակումբների նկատմամբ

1. Արտոնագրման թեկնածուն պետք է ապացուցի, որ չունի տրանսֆերային գործունեությունից ծագած մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 31-ը իրականացված տրանսֆերային գործունեության հետ կապված ոչ մի ժամկետանց վճարում արտոնագրման ներկայացված մրցաշրջանի մարտի 31-ի դրությամբ (համաձայն հավելված VIII-ի):
2. Պարտքերը տրանսֆերային գործունեության արդյունքում առաջացած ֆուտբոլային ակումբներին հասանելիք գումարներն են, որոնք ընդրկում են նաև մարզումային փոխհատուցումն ու համերաշխության վճարները՝ սահմանված ինչպես ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգում, այնպես էլ ցանկացած գումար, որը պետք է վճարվի որոշակի պայմանների իրականացման դեպքում:
3. Արտոնագրման թեկնածուն պետք է պատրաստի ու արտոնագրողին ներկայացնի տրանսֆերային հարցերով իր պարտքերի աղյուսակը: Այդ աղյուսակը պետք է պատրաստվի



նույնիսկ այն դեպքում, եթե տվյալ շրջանում տրանսֆերներ/վարձակալությամբ տրանսֆերներ տեղի չեն ունեցել:

4. Արտոնագրման թեկնածուն պետք է տեղեկություններ տրամադրի մինչև դեկտեմբերի 31-ն իրականացված տրանսֆերային ողջ գործունեության (ներառյալ վարձակալությամբ տրանսֆերների) վերաբերյալ, անկախ նրանից, թե արդյոք կա որևէ սպասվող գումար, որը պետք է վճարվի դեկտեմբերի 31-ին: Ավելին, արտոնագրման թեկնածուն պետք է բացահայտի բոլոր քննության առարկա տրանսֆերները, որոնք քննության են ներկայացվել համապատասխան մարմնին ՀՀ օրենսդրության համապատասխան կամ ազգային կամ միջազգային ֆուտբոլային մարմիններին կամ համապատասխան արբիտրաժային տրիբունալին քննության ներկայացված հայցերը:
5. Տրանսֆերային հարցերով պարտքերի աղյուսակը պետք է պարունակի հետևյալ նվազագույն տեղեկատվությունը (յուրաքանչյուր ֆուտբոլիստի տրանսֆերի դեպքում՝ ներառյալ վարձակալությունը)՝
 - ա) խաղացողը (անուն և համար)
 - բ) տրանսֆերային/փոխառության պայմանագրի ամսաթիվը
 - գ) ֆուտբոլային ակումբի անվանումը, որտեղ ֆուտբոլիստը մինչ այդ գրանցված է եղել
 - դ) վճարված և/կամ վճարման ենթակա տրանսֆերի (կամ փոխառության) վարձը (ներառյալ մարզումային փոխհատուցումն ու համերաշխության վճարը), անգամ եթե վճարումը չի պահանջվել կրեդիտորի կողմից
 - ե) վճարված և/կամ վճարման ենթական այլ ուղղակի ծախսեր գրանցում ձեռք բերելու համար
 - զ) վճարված գումարը և վճարման ամսաթիվը
 - է) դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա պարտքի գումարը յուրաքանչյուր ֆուտբոլիստի տրանսֆերի համար՝
 - ը) մարտի 31-ի դրությամբ առկա պարտքի ցանկացած գումարները (որոնց ժամկետը դեկտեմբերի 31-ից երկարացվել է)՝ ներառյալ պարտքի ցանկացած գումարի վճարման ժամկետի և համապատասխան բացատրությունների նշումներով և
 - թ) պայմանական վճարումների գումարներ (պայմանական պարտականություններ), որոնք դեռևս չեն հաստատվել դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմված հաշվեկշռում:
6. Արտոնագրման թեկնածուն պետք է հավասարակշռի տրանսֆերային հարցերով վճարումների աղյուսակում առկա պարտականությունների ընդհանուր գումարը «ֆուտբոլիստների տրանսֆերներին վերաբերող վճարվելիք հաշիվների» հաշվապահական հաշվեկշռի համապատասխան գումարի (եթե կիրառելի է) կամ հիմնական հաշվապահական հաշվեկշռի հետ:
7. Տրանսֆերային վճարումների աղյուսակը պետք է հաստատվի դեկլարության կողմից՝ արտոնագրման թեկնածուի գործադիր մարմնի համառոտ հայտարարությամբ և ստորագրությամբ:
8. Արտոնագրման թեկնածուն նմանատիպ տեղեկատվություն պետք է ներկայացնի ֆուտբոլիստի տրանսֆերից ստացվող եկամուտի վերաբերյալ՝ համաձայն տրանսֆերների եկամուտների աղյուսակի:



Հոդված 50 – Ժամկետանց վճարումների բացակայություն աշխատակիցների եւ սոցիալական/հարկային մարմինների նկատմամբ

1. Արտոնագրման թեկնածուն պետք է ապացուցի, որ արտոնագրման մրցաշրջանին նախորդող մարտի 31-ի դրությամբ նա իր աշխատողների ինչպես նաև սոցիալական ու հարկային մարմինների նկատմամբ պայմանագրային և իրավական պարտականությունների կատարման հարցերով և մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 31-ը ձևավորված ժամկետանց պարտք (ինչպես սահմանված է Հավելված VIII-ում) չի ունեցել:
2. Պարտքերը այն գումարներն են, որոնք պետք է վճարվեն աշխատողներին, ինչպես նաև սոցիալական և հարկային մարմիններին՝ ելնելով աշխատողների նկատմամբ ունեցած պայմանագրային և իրավական պարտականություններից: Աս դրույթը վերաբերում է այն գումարներին, որոնք վճարվում են տարբեր պատճառներով արտոնագրման թեկնածուի աշխատողներ ալևս չհանդիսացող մարդկանց: Պարտքերը պետք է մարվեն պայմանագրում նշված և/կամ օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածում՝ անկախ ֆինանսական հաշվետվության մեջ այս պարտքերի հաշվառման ձևից:
3. «Աշխատողներ» տերմինը իր մեջ ներառում է հետևյալ մարդկանց.
 - ա) բոլոր պրոֆեսիոնալ ֆուտբոլիստներին՝ համաձայն ՖԻՖԱ-ի ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության գործադրվող կանոնակարգի
 - բ) հոդված 28-37-ում ամրագրված վարչական, տեխնիկական, բժշկական և անվտանգության հարցերով զբաղվող անձնակազմը:
4. Արտոնագրման թեկնածուն պետք է ցուցակ/աղյուսակ կազմի, որտեղ տեղ կգտնեն այն աշխատողներն, ովքեր աշխատանքի են ընդունվել մինչև արտոնագրման շրջանին նախորդող տարվա դեկտեմբերի 31-ը, այսինքն՝ ոչ միայն նրանք, ովքեր տարվա վերջում դեռ աշխատում են: Ցուցակը/աղյուսակը պետք է ներկայացվի արտոնագրողին:
5. Յուրաքանչյուր աշխատողի վերաբերյալ պետք է առնվազն տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝
 - ա) աշխատողի անունը
 - բ) աշխատողի զբաղեցրած պաշտոնը
 - գ) աշխատանքի ընդունման ամսաթիվը
 - դ) աշխատանքից ազատման ամսաթիվը (եթե առկա է)
 - ե) դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքի գումարը՝ պարտքի վերաբերյալ բացատրագրի հետ միասին:
6. Արտոնագրման թեկնածուն պետք է հավասարակշռի աշխատողների հարցերով վճարումների աղյուսակում առկա պարտականությունների ընդհանուր գումարը «աշխատողների վճարվելիք հաշիվների» հաշվապահական հաշվեկշռի գումարի կամ հիմնական հաշվապահական հաշվեկշռի հետ:
7. Արտոնագրման թեկնածուն պետք է արտոնագրման շրջանին նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ աուդիտորին և/կամ արտոնագրողին ներկայացնի վճարված գումարի (եթե առկա է) ապացույց հանդիսացող անհրաժեշտ սոցիալական/հարկային աղյուսակը իրավասու սոցիալական/հարկային մարմիններին՝ նկատի ունենալով և հարգելով իրենց աշխատողների նկատմամբ ունեցած պայմանագրային և իրավական պարտականությունները:
8. Սոցիալական/հարկային մարմիններին տրվող յուրաքանչյուր վճարման դիմաց բացատրության հետ մեկտեղ պետք է տրվի հետևյալ տեղեկատվությունը.
 - ա) կրեդիտորի անունը



- բ) դեկտեմբերի 31-ի դրությամբ ցանկացած վճարում, ներառյալ յուրաքանչյուր չվճարված մասնիկի վերջնաժամկետը
 - գ) մարտի 31-ի դրությամբ ցանկացած վճարում (դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացած), ներառյալ յուրաքանչյուր չվճարված մասնիկի վերջնաժամկետը
 - դ) Վերը նշված վճարումներին վերաբերվող բոլոր հաստատող փաստաթղթեր:
9. Արտոնագրման թեկնածուն պետք է հավասարակշռի սոցիալական/հարկային աղյուսակում առկա պարտականությունների ընդհանուր գումարը «սոցիալական/հարկային մարմինների հաշիվների» հաշվապահական հաշվեկշռի գումարի կամ հիմնական հաշվապահական հաշվեկշռի հետ:
10. Աշխատողների, ինչպես նաև սոցիալական/հարկային աղյուսակները պետք է հաստատվեն դեկլարության կողմից: Այն պետք է հիմնավորվի արտոնագրման թեկնածուի գործադիր մարմնի կողմից ներկայացված և ստորագրված գրությամբ:

Հոդված 51 – Գրավոր դիմումներ արտոնագրման որոշում ընդունելուց առաջ

1. Յոթ օրվա ընթացքում, մինչև այն ժամանակահատվածի սկիզբը, որի ընթացքում Ակումբների Արտոնագրման Կոմիտեի կողմից պետք է կայացվի արտոնագրման որոշումը, արտոնագրման թեկնածուն պետք է գրավոր դիմի արտոնագրողին:
 2. Արտոնագրման թեկնածուն պետք է հաստատի հետևյալը.
 - ա) արտոնագրողին ներկայացված բոլոր փաստաթղթերը ամբողջական են և ճշգրիտ
 - բ) արդյոք տեղի չի ունեցել արտոնագրման չափանիշին վերաբերող որևէ էական փոփոխություն
 - գ) արդյոք չի կատարվել որևէ իրադարձություն կամ փոխվել որևէ պայման, որը խոշոր տնտեսական կարևորություն ունի, ինչը կարող է հակադարձ ազդեցություն թողնել արտոնագրման թեկնածուի ֆինանսական կարգավիճակի վրա՝ արդեն ստուգված նախորդ տարեկան ֆինանսական հաշվետվության հաշվեկշռի օրվանից ի վեր (եթե կիրառելի է): Եթե տեղի է ունեցել տնտեսական կարևորություն ունեցող որևէ իրադարձություն կամ պայման, ապա դեկլարության նամակը պետք է ներառի իրադարձության կամ պայմանի բնութագիրը և դրա ֆինանսական ազդեցության գնահատականը կամ էլ հայտարարություն, որ նման գնահատական չի կարող տրվել:
 - դ) Արդյոք արտոնագրման թեկնածուն (կամ ՀՀՖ-ի գրանցված անդամը, որը ունի պայմանագրային հարաբերություններ արտոնագրման թեկնածուի հետ համաձայն 12-րդ հոդվածի) կամ էլ հաշվետու խմբում ընդգրկված արտոնագրման թեկնածուի ցանկացած մայր կազմակերպություն չի փնտրում կամ չի ստացել պաշտպանություն իր վարկատուներից համաձայն օրենքների և կանոնակարգերի (ներառյալ կամավոր և պարտադիր վարչական գործընթացները) արտոնագրման մրցաշրջանից 12 ամիս առաջ:
- Խոշոր տնտեսական կարևորություն ունեցող իրադարձություններից են.
- ա) հաստատագրված ժամկետով վերցված փոխառության մարման ժամկետի մոտեցումը առանց վերափոխառման կամ վերավճարման իրատեսական հեռանկարի;
 - բ) ֆինանսավորողների կամ այլ կրեդիտորների կողմից ֆինանսական օժանդակության դադարեցման հեռանկար;
 - գ) նշանակալի արտադրական կորուստներ՝ վերջին ներկայացված ֆինանսական հաշվետվություններից ի վեր;
 - դ) կրեդիտորներին ճիշտ ժամանակին վճարելու անկարողություն;



- ե) ֆինանսավորողների հետ վարկային պայմանագրի պայմանները բավարարելու անկարողություն;
 - զ) նյութական կեղծիքի բացահայտում և հաստատում կամ սխալներ, որոնք ցույց են տալիս, որ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ չեն;
 - է) ընթացող դատական գործընթացներ արտոնագրման թեկնածուի դեմ, որոնց արդյունքում կարող են լինել հայցեր, որոնց անհնար է բավարարել;
 - ը) արտոնագրման թեկնածուի գործադիր պատասխանատվությունները ստանձնել է մի անձ(ինք), որի նշանակումը կատարվել է դրսից, և ոչ ղեկավարության կողմից, կապված որևէ իրավական կամ անվճարունակության ընթացակարգերի հետ;
 - թ) հիմնական ղեկավարության նշանակալի փոփոխություն;
 - ժ) ղեկավարությունը որոշում է, որ մտադիր է լուծարել իրավաբանական անձը, դադարեցնել առևտրային կապերը, կամ կրեդիտորներից պաշտպանության համար դիմել օրենքներին կամ կանոնակարգերին, կամ որ այն ոչ մի ուրիշ իրատեսական այլընտրանք չունի բացի դա անելը:
3. Եթե խոշոր տնտեսական կարևորություն ունեցող որևէ իրադարձություն կամ վիճակ է ստեղծվել, ապա ղեկավարության դիմում նամակը պետք է ընդգրկի այդ իրադարձության կամ վիճակի նկարագրությունը և դրա ֆինանսական մոտավոր ազդեցությունը, կամ հայտարարություն այն մասին, որ այդ մոտավոր հաշվարկը չի կարող իրականացնել:
4. Այդ նամակը պետք է հաստատվի արտոնագրման թեկնածուի գործադիր մարմնի ստորագրությամբ:

Հոդված 52 – Ապագա ֆինանսական տեղեկատվություն

1. Արտոնագրման թեկնածուն պետք է պատրաստի և ներկայացնի ապագա ֆինանսական տեղեկատվությունը, որը հիմնված կլինի հաշվետու իրավաբանական անձի ղեկավարության կողմից ձեռնարկվելիք հետագա հնարավոր գործողությունների ենթադրությունների վրա, հատկապես որպեսզի արտոնագրողին ցույց տա իր գործունեության շարունակականության կարողությունները գոնե մինչև արտոնագրման սեզոնի ավարտը:
2. Եթե արտոնագրման թեկնածուն կատարում է ինդիկատոր 1 կամ 2-ում նկարագրված պայմաններից որևէ մեկը, ապա նա հանդիսանում է այդ ինդիկատորի խախտող:
 - ա) **Ինդիկատոր 1. Գործունեության շարունակականություն**
Տարեկան ֆինանսական հաշվետվությանը վերաբերող աուդիտորի եզրակացությունը, որը ներկայացվում է հոդվածներ 47-ին համապատասխան, ներառում է իր մեջ հատուկ նկատառում կամ պայմանական-դրական եզրակացություն:
 - բ) **Ինդիկատոր 2. Բացասական կապիտալ**
Տարեկան ֆինանսական հաշվետվությունը /ըստ անհրաժեշտության ներառյալ նաև լրացուցիչ տեղեկատվությունը/, որը ներկայացված է հոդված 47-ին համապատասխան, արտացոլում է նախորդ ֆինանսական տարվա հաշվետվության մեջ ներառված թվերի համեմատությամբ զուտ պարտավորությունների վատթարացած վիճակը:
3. Ապագա ֆինանսական տեղեկատվությունը պետք է ծածկի այն ժամանակաշրջանը, որը սկսվում է հետևյալ երկու ամսաթվերից հետո. տարեկան ֆինանսական հաշվետվության ամսաթիվը /համապատասխան դեպքերում/ կամ միջանկյալ ֆինանսական հաշվետվության հաշվեկշռի ամսաթիվը, ինչպես նաև պետք է ծածկի ամբողջ արտոնագրման ժամանակաշրջանը:



4. Ապագա ֆինանսական տեղեկատվությունը բաղկացած է,
 - ա) շահույթի և վնասի պլանավորված հաշիվը՝ անմիջապես նախորդող ֆինանսական տարվա համեմատական տվյալներով:
 - բ) դրամական հոսքի պլանավորված ընթացքը՝ անմիջապես նախորդող ֆինանսական տարվա համեմատական տվյալներով:
 - գ) բացատրական խանութություններ ներառյալ կարճ նկարագրություն /պատմական ֆինանսական և այլ տեղեկատվության համապատասխան ասպեկտների հղումներով/ յուրաքանչյուր էական ենթադրության մասին, որն օգտագործվել է շահույթի և վնասի, դրամական հոսքի մասին հաշվետվության նախագծի պատրաստման համար, ինչպես նաև հակիրճ նկարագրություն այն կարևոր ռիսկերի մասին, որոնք կարող են վատ անդրադառնալ հետագա ֆինանսական արդյունքների վրա:
5. Ապագա ֆինանսական տեղեկատվությունը պետք է պատրաստվի նվազագույնը եռամսյակային հիմքերի վրա:
6. Ապագա ֆինանսական տեղեկատվությունը պետք է պատրաստվի նույն կանոններով, ինչ և նախորդ տարվա ֆինանսական հաշվետվության աուդիտը՝ կիրառելով հաշվառման նույն քաղաքականությունը, որն օգտագործվել է տարեկան ֆինանսական հաշվետվությունը պատրաստելիս, բացառությամբ հաշվառման քաղաքականության այն փոփոխությունների, որոնք տեղի են ունեցել վերջին տարեկան ֆինանսական հաշվետվության ամսաթվից հետո, և որոնք արտացոլված կլինեն հաջորդ ֆինանսական տարվա հաշվետվության մեջ: Այս դեպքում դա պետք է մանրամասնորեն նկարագրվի:
7. Ապագա ֆինանսական տեղեկատվությունը պետք է համապատասխանի հավելված VI-ում սահմանված տեղեկատվության տրամադրման նվազագույն պահանջներին: Լրացուցիչ հոդվածները կամ նշումները պետք է ներառվեն այն դեպքում, երբ դրանք բացատրական նշանակություն ունեն կամ, եթե առանց դրանց հետագա ֆինանսական տեղեկատվությունը անհասկանալի կլինի:
8. Ապագա ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև ենթադրությունները, որոնց հիման վրա այն պատրաստվել է պետք է հաստատված լինեն ղեկավարության կողմից, ինչը պետք է ապացուցվի հաշվետու կազմակերպության գործադիր մարմնի կողմից հակիրճ դիմումի և ստորագրության ներկայացումով:

Մաս V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՅԹՆԵՐ

Հոդված 53 – Հիմք հանդիսացող տեքստ և նամակագրության լեզու

1. Եթե տվյալ կանոնակարգի անգլերեն և հայերեն տարբերակների թարգմանության մեջ կան անհամապատասխանություն, հայերեն տարբերակը գերակայում է (տես ՀՀՖ կանոնադրության 2.15 Հոդվածը):
2. ՈՒԵՖԱ-ի և ՀՀՖ-ի և/կամ արտոնագրվածի միջև ամբողջ նամակագրությունը պետք է լինեն անգլերենով և ՈՒԵՖԱ-ն կարող է ՀՀՖ-ից և/կամ արտոնագրվածից պահանջել սեփական միջոցներով կատարված նրանց փաստաթղթերի հաստատված թարգմանությունները:

Հոդված 54 - Հավելվածներ

Տվյալ կանոնակարգի բոլոր հավելվածները կազմում են նրա անբաժանելի մասը:



Հոդված 55 – Համապատասխանելիության աուդիտներ

1. ՈՒԵՖԱ-ն և/կամ նրա կողմից նշանակված մարմինները /գործակալությունները իրավունք ունեն ցանկացած ժամանակ համապատասխանելիության աուդիտի ենթարկեն արտոնագրողին կամ վերջինիս ներկայությամբ արտոնագրման թեկնածուին/արտոնագրվածին:
2. Համապատասխանելիության աուդիտի նպատակն այն է, որպեսզի համոզվեն, որ արտոնագրողը, ինչպես նաև արտոնագրման թեկնածուն/արտոնագրվածը կատարել են իրենց պարտականությունները ինչպես որ սահմանված է կանոնակարգով, և որ արտոնագիրը պատշաճորեն շնորհվել է արտոնագրողի վերջնական և ամրագրված որոշման ժամանակ:
3. Համապատասխանելիության աուդիտի նպատակներից ելնելով ՀՖՖ Ակումբների Արտոնագրման կանոնակարգի անգլերեն և հայերեն տարբերակների թարգմանության մեջ առկա ցանկացած անհամապատասխանության դեպքում անգլերեն տարբերակը գերակայում է:

Հոդված 56 – Կարգապահական գործընթացներ

Համաձայն ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի, տվյալ կանոնակարգի ցանկացած խախտում կարող է տուգանվել ՀՖՖ-ի կողմից:

Հոդված 57 – Կիրառման դրույթներ

ՀՖՖ Ակումբների Արտոնագրման բաժինը տվյալ կանոնակարգը կիրառելու համար պետք է անհրաժեշտ որոշումներ կայացնի և ուղեցույցների, շրջաբերական գրությունների կամ ցանկացած այլ համապատասխան փաստաթղթի ձևով մանրամասն դրույթներ ընդունի:

Հոդված 58 – Նախկին կանոնակարգի չեղյալ համարում, սույն կանոնակարգի ընդունում էլ ուժի մեջ մտնելը

1. Այս կանոնակարգը հաստատվել է ՀՖՖ գործադիր կոմիտեի կողմից վերջինիս 2011թ. նոյեմբերի 14-ի նիստի ժամանակ:
2. Այն փոխարինում է ՀՖՖ ակումբների արտոնագրման կանոնակարգին (2011թ. խմբագրություն):
3. Այն չի կարող փոփոխություններ կրել արտոնագրման հիմնական գործընթացի ընթացքում, մինչև որ պատշաճ կերպով հաստատված չլինի ՈՒԵՖԱ-ի կողմից:
4. Այն ուժի մեջ է մտնում ՀՖՖ Գործադիր Կոմիտեի հաստատումից անմիջապես հետք:



Հավելված I. Հիմնական ընթացակարգ


Ստորև ներկայացված է ՀՖՖ Ակումբների արտոնագրման համակարգի հիմնական ընթացակարգի գծանկարը:

Գծանկարում պատկերված թվերը տրամաբանական ընթացքով մանրամասն ներկայացնում են այն քայլերը, որոնք պետք է կատարվեն արտոնագրման թեկնածուի անունից որևէ ակումբի արտոնագրի պատրաստման ընթացքում: Գծանկարում հերթականությամբ ներկայացված են 1-ից 30 թվերը (ձախ սյունակ): Այս քայլերին պետք է հետևել այն դեպքում, երբ ընթացակարգում ոչ մի հարց չի առաջացել, այսինքն երբ արտոնագրի հայտ ներկայացրած կողմը համապատասխանում է բոլոր պահանջներին, և արտոնագրի շնորհման ընթացակարգն ընթանում է ըստ կատարյալ ծրագրի:

Գծանկարում պատկերված տառերը վերաբերում են այն հարցերին, որոնք կարող են կամ ամենայն հավանականությամբ կծագեն ընթացակարգում և որոնց հետ պետք է համապատասխանաբար վարվել: Գծանկարում քայլերի ենթահերթականությունը նշվում է տառերով (A)-ից մինչև (I) (կենտրոնական սյունակ): Աջակողմյան սյունակը ընթերցողին տալիս է յուրաքանչյուր քայլի համառոտ նկարագրությունը:


Հիմնական ընթացակարգը բաժանվում է 2 մասի՝

- Մաս I – բոլոր արտոնագրման թեկնածուների համար (և՛ ՈւԵՖԱ-ի, և՛ ազգային արտոնագրեր)
- Մաս II – արտոնագրման այն թեկնածուների համար, ովքեր մարզական որակավորում ունեն ՈւԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու համար (միայն ՈւԵՖԱ-ի արտոնագիր):




Core Process

page 2



Core Process

page 3



licensor's administration




decision-making bodies



license applicant / licensee

Core Process

page 4



licensor's administration



decision-making bodies



license applicant / licensee



ՄԱՍ I

1. Արտոնագրման պատասխանատուն կազմում է ակումբի արտոնագրային փաստաթղթերը, որոնց մեջ են մտնում ակումբների արտոնագրման չափանիշները, հարցաթերթիկները, լրացված վերադարձման ենթակա բոլոր փաստաթղթային ձևերը և ՀՀՖ Ակումբների Արտոնագրման Կանոնակարգի վերջին տարբերակի պատճեն:
2. Արտոնագրման պատասխանատուն թեկնածուին է հանձնում փաստաթղթերի նախօրոք պատրաստված փաթեթը: Փաստաթղթերի նախօրոք պատրաստված փաթեթը ներառում է ՀՀՖ Ակումբների Արտոնագրման Կանոնակարգի վերջին տարբերակի պատճեն: Այս փաթեթը կարող է ուղարկվել փոստով, ֆաքսով, էքստրանետով (էլեկտրոնային ճանապարհով) և այլն: Արտոնագրման պատասխանատուն կարող է փաստաթղթերի ստացման հավաստագիր պահանջել:
3. Արտոնագրման թեկնածուն լրացնում է փաստաթղթերը (հարցաթերթիկները, փաստաթղթային ձևերը, և այլն) և վերադարձնում դրանք արտոնագրման պատասխանատուին համաձայնեցված ժամանակի ընթացքում: Այդ փաստաթղթերը կարող են վերադարձվել փոստով, ֆաքսով, էքստրանետով (էլեկտրոնային ճանապարհով) և այլն: Անհրաժեշտության դեպքում պիտի կցվեն նաև օժանդակ փաստաթղթեր:
4. Արտոնագրման պատասխանատուն, ստանալով փաստաթղթերը, ստուգում է արտոնագրման թեկնածուի կողմից ուղարկված փաստաթղթերի ամբողջականությունը, ինչպես նաև դրանց ներկայացման համաձայնեցված ժամկետների պահպանումը:
5. Որոշում՝
Երկու տարբերակ՝ քայլ 6 կամ քայլ (A)
6. Եթե փաստաթղթերը ամբողջական են և ուղարկվել են համաձայնեցված ժամկետի ընթացքում, արտոնագրման պատասխանատուն կտեսակավորի ստացած տեղեկատվությունը, կգրանցի դրանք և կփոխանցի նշանակված փորձագետներին, ովքեր պատասխանատու են հատկորոշ բնագավառներ վերստուգելու համար (օրինակ իրավական փաստաթղթերը հետազա վերստուգման համար կփոխանցվեն իրավական փորձագետին և այլն):
7. Նշանակված փորձագետները արտոնագրման պատասխանատուից կստանան արտոնագրման թեկնածուի ուղարկած փաստաթղթերը, կվերստուգեն դրանք, կստուգեն դրանց համապատասխանությունը ակումբների արտոնագրման չափանիշներին և հետո կգեկուցեն արտոնագրման պատասխանատուին համաձայնեցված ժամկետում և ըստ նախօրոք մշակված ձևերի (ստուգացանկեր, զեկուցագրեր և այլն): Ստուգումները պետք է հիմնավորված լինեն օժանդակ փաստաթղթերով (փաստարկներ, որ ակումբների արտոնագրման չափանիշները բավարարված են), օրինակ Չափանիշ I.01 Մարզադաշտի արտոնագրումը պետք է հիմնավորված լինի ընդունելի մարզադաշտի համապատասխան արտոնագրով:
8. Որոշում՝
Երկու տարբերակ՝ քայլ 9 կամ քայլ (A)
9. Արտոնագրման պատասխանատուն կհաստատի, որ փորձագետների զեկուցագրերը ամբողջական են և վերադարձվել են համաձայնեցված ժամկետում: Արտոնագրման պատասխանատուն կծանոթանա զեկուցագրերի և փորձագետների կարծիքների հետ:
10. Արտոնագրման պատասխանատուն կգնահատի արտոնագրման թեկնածուին: Փորձագետների զեկուցագրերի հիման վրա նա կարող է առանձնացնել կամ հատկորոշել այն բնագավառները, որոնք մտահոգության տեղիք են տալիս և կարող են հետագա պարզաբանման կարիք ունենալ:
11. Որոշում՝



Երկու տարբերակ՝ քայլ 12 կամ քայլ (B)

12. Եթե արտոնագրման պատասխանատուն հետագա պարզաբանման կարիք ունեցող որևէ բնագավառ չի հատկանշում, ապա պատրաստում է զեկուցագիր Ակումբների Արտոնագրման կոմիտեի դիտարկման համար համաձայնեցված ժամկետի ընթացքում: Այս զեկուցագիրը կպարունակի վերստուգման բոլոր հանգամանքները (ստացված փաստաթղթերի վերլուծությունը և տեղեկատվություն՝ տեղում կատարած այցելությունների մասին, եթե այդպիսիք եղել են):
13. Ակումբների Արտոնագրման կոմիտեն ստանում է արտոնագրման պատասխանատուի զեկուցագիրը համաձայնեցված ժամկետի ընթացքում, ծանոթանում է դրա հետ, անհրաժեշտության դեպքում դիմում արտոնագրման պատասխանատուին հետագա պարզաբանումների և հավելյալ փաստաթղթերի համար և որոշում կատարում ազգային արտոնագիրը տալու կամ չտալու մասին:
- Ակումբների Արտոնագրման կոմիտեն պետք է բավարարի որակավորման, անկախության և գաղտնիության պահանջներին՝ համաձայն սույն կանոնակարգի հետևյալ դրույթների:
14. Որոշում՝
- Երկու տարբերակ՝ քայլ 15 կամ քայլ (D).
15. Արտոնագրման թեկնածուի փաստաթղթերի և արտոնագրման պատասխանատուի զեկուցագրի հետ ուշադիր ծանոթանալուց հետո Ակումբների Արտոնագրման կոմիտեն տալիս է արտոնագիրը: Ազգային արտոնագրի թողարկումը կատարվում է այն պայմանով, որ արտոնագրման թեկնածուն ԲԱՎԱՐԱՐՈՒՄ է ՀՖՖ Ակումբների Արտոնագրման կանոնակարգում հատկորոշված բոլոր մինիմալ չափանիշներին: Թողարկված արտոնագիրը կարող է մանրամասն հատկանշել կամ չհատկանշել արտոնագրման թեկնածուի կողմից ուշադրություն պահանջող բնագավառները:
16. Արտոնագրման պատասխանատուն ստանում է Ակումբների Արտոնագրման կոմիտեի գնահատականը: Այդ գնահատականով արված որոշման հիման վրա արտոնագրման պատասխանատուն պատրաստում է արտոնագրվածների ցանկը, որոնք իրավասու են մասնակցելու ազգային ակումբային մրցաշարին: Արտոնագրված ակումբների ցանկը ուղարկվում է ՀՖՖ՝ հաստատված վերջնաժամկետի ընթացքում, որը սահմանված է ու տեղեկացված որպես արտոնագրման ենթակա մրցաշրջանին նախորդող տարվա դեկտեմբերի վերջը:

(A) Սկսած 5-րդ քայլից.

Եթե փաստաթղթերը ամբողջական չեն կամ եթե դրանք չեն ուղարկվել մինչև համաձայնեցված վերջնաժամկետը, արտոնագրման պատասխանատուն կապվում է արտոնագրման թեկնածուի հետ ձեռնարկելիք հաջորդ գործողությունների մասին համաձայնության գալու համար (օրինակ խնդրել լրացուցիչ տեղեկատվություն, օժանդակող փաստաթղթեր, հարցաթերթիկներ կամ ձևեր, որոնք պակասում են):

Որոշում՝

Երկու այլընտրանք

- Եթե արտոնագրման թեկնածուն համաձայնության է գալիս Արտոնագրման բաժնի պետի հետ իրականացվելիք գործողությունների շուրջ, ապա վերադառնալ 6-րդ քայլին:
- Եթե արտոնագրման թեկնածուն համաձայնության չի գալիս Արտոնագրման բաժնի պետի հետ իրականացվելիք գործողությունների շուրջ, ապա վերադառնալ 10-րդ քայլին:

(B) Սկսած 8-րդ քայլից.



Եթե արտոնագրման փորձագետը գտնում է բնագավառներ, որոնք հետագա տեղեկատվության կարիք ունեն, նա կապվում է արտոնագրման թեկնածուի հետ՝ հետագա պարզաբանում պահանջող որևէ հարց քննարկելու համար և փորձում է փոխադարձ համաձայնության հասնել հետագա ձեռնարկվելիք գործողության մասին:

Եթե արտոնագրման պատասխանատուն գտնում է բնագավառներ, որոնք հետագա վերստուգման կարիք ունեն (անհամապատասխանություն որոշ չափանիշների հետ, սխալներ, տեղեկատվության պակաս և այլն) նա կապվում է արտոնագրի թեկնածուի հետ իր մտահոգությունները քննարկելու համար: Արտոնագրման պատասխանատուն կարող է հետագա բացատրություններ կամ օժանդակող փաստաթղթեր պահանջել կամ կարող է որոշել այցելություն կատարել տեղում հետագա տեղեկատվական հետազոտություն կատարելու նպատակով: Եթե ծրագրված է այցելություն տեղում, արտոնագրման պատասխանատուն և/կամ փորձագետը կհանդիպեն արտոնագրման թեկնածուի հետ և կքննարկեն խնդրահարույց բնագավառները: Նրանք միասին կհստակեցնեն ակումբի հետագա հնարավոր գործողությունները խնդրահարույց բնագավառները շտկելու համար, ինչպես նաև այդ գործողությունների իրականացման ժամանակացույցը:

(C) Որոշում՝

Երկու տարբերակ

- Եթե արտոնագրի թեկնածուն համաձայնվում է արտոնագրման թեկնածուի հետ ձեռնարկվելիք գործողությունների շուրջը, ուրեմն վերադարձիր քայլ 10,
- Եթե արտոնագրի թեկնածուն համաձայն չէ արտոնագրման պատասխանատուի զեկուցագրի հետ և հրաժարվում է նոր տեղեկատվություն տրամադրել կամ անհրաժեշտ գործողություններ ձեռնարկել, ուրեմն վերադարձիր քայլ 12:

(D) Արտոնագրման թեկնածուի ներկայացրած փաստաթղթերի և արտոնագրման պատասխանատուի զեկուցագրի հետ ուշադիր ծանոթանալուց հետո Ակումբների Արտոնագրման կոմիտեն հրաժարվում է ազգային արտոնագրի տալ: Մերժման մեջ պետք է մանրամասն նկարագրվեն այն բնագավառները, որոնք հետագա անդրադարձի կարիք ունեն և արտոնագրման թեկնածուին հնարավորություն է տրվում բողոքարկել այդ որոշումը Արտոնագրման բողոքարկման կոմիտեին:

(E) Արտոնագրման թեկնածուն բողոքարկում է որոշումը: Արտոնագրման բողոքարկման կոմիտեին ծանուցում է ստանում և նշանակում համաձայնեցված հանդիպման օր:

(F) Արտոնագրման պատասխանատուն կազմում է զեկուցագիր և ներկայացնում Արտոնագրման բողոքարկման կոմիտեին: Զեկուցագրի մեջ մանրամասն նկարագրված են մտահոգության տեղիք սոված բոլոր բնագավառները և մերժման պատճառները:

(G) Արտոնագրման բողոքարկման կոմիտեն հանդիպում է և դիտարկում բողոքարկուի բողոքը: Արտոնագրման բողոքարկման կոմիտեն կարող է հետագա տեղեկատվություն և/կամ օժանդակող փաստաթղթեր պահանջել բողոքարկուից:

(H) Որոշում՝

Երկու տարբերակ՝ քայլ 15 կամ քայլ (I):

(I) Բողոքարկուի փաստաթղթերի և արտոնագրման պատասխանատուի զեկուցագրի հետ մանրամասն ծանոթանալուց հետո Արտոնագրման բողոքարկման կոմիտեն մերժում է շնորհել ազգային արտոնագիրը: Արտոնագրման բողոքարկման կոմիտեի զեկուցագրում մանրամասն նկարագրված են մերժման պատճառները և ուշադրություն պահանջող բնագավառները: Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեի զեկուցագիրը ուղարկվում է Արտոնագրման բաժնի պետին (հետո վերադառնալ 16-րդ քայլին):



ՄԱՍ II

17. Արտոնագրման թեկնածուն կարող է դիմել ՈՒԵՖԱ-ին արտոնագրման համար միայն այն դեպքում, եթե նրան շնորհվել է ազգային արտոնագիր: Այդ դեպքում նա պետք է պատրաստի իր ֆինանսական փաստաթղթերը և վերադարձնի դրանք արտոնագրման պատասխանատուին մինչև սահմանված վերջնաժամկետը: Այդ փաստաթղթերը կարող են վերադարձվել փոստով, ֆաքսով, էքստրանետով, և այլն: Անհրաժեշտության դեպքում կարող են կցված լինել նաև օժանդակող փաստաթղթեր:
18. Արտոնագրման պատասխանատուն ընդունելիս ստուգում է արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունը և մինչև սահմանված վերջնաժամկետը դրանք ներկայացնելու հանգամանքը:
19. Որոշում՝
Երկու տարբերակ՝ քայլ 20 կամ քայլ (A)
20. Ֆինանսական փորձագետը արտոնագրման պատասխանատուից ստանում է արտոնագրման թեկնածուի փաստաթղթերը, ծանոթանում դրանց հետ, ստուգում դրանց համապատասխանությունը ֆինանսական չափանիշին և զեկուցում արտոնագրման պատասխանատուին մինչև համաձայնեցված վերջնաժամկետը և ըստ նախօրոք պատրաստված ձևերի (ստուգացանկեր, զեկուցագրեր և այլն): Ստուգումները պետք է հիմնավորված լինեն օժանդակ փաստաթղթերով (փաստարկներ, որ ֆինանսական չափանիշները բավարարված են):
21. Որոշում՝
Երկու տարբերակ՝ քայլ 22 կամ քայլ (A)
22. Արտոնագրման պատասխանատուն հավաստում է, որ ֆինանսական փորձագետների զեկուցագրերը ամբողջական են և ներկայացվել են մինչև հաստատված վերջնաժամկետը: Արտոնագրման պատասխանատուն ծանոթանում է զեկուցագրերի և փորձագետների կարծիքների հետ:
23. Արտոնագրման պատասխանատուն գնահատում է արտոնագրման թեկնածուին: Փորձագետների զեկուցագրերի հիման վրա արտոնագրման պատասխանատուն կարող է հատկորոշել մտահոգության տեղիք տվող այն բնագավառները, որոնք հետագա ուսումնասիրության կարիք ունեն:
24. Որոշում՝
Երկու տարբերակ՝ քայլ 25 կամ քայլ (B)
25. Եթե արտոնագրման պատասխանատուն չի տեսնում որևէ բնագավառ, որը հետագա ուսումնասիրության կարիք ունի, նա մինչև համաձայնեցված վերջնաժամկետը մի զեկուցագիր է պատրաստում Ակումբների Արտոնագրման կոմիտեի հարմար: Այս զեկուցագիրը պիտի պարունակի ստուգման բոլոր բնագավառները (ստացված ֆինանսական փաստաթղթերի վերլուծությունը և տեղեկություններ տեղում կատարած այցելությունների մասին, եթե այդպիսիք եղել են):
26. Արտոնագրման պատասխանատուն արտոնագրման թեկնածուից ստանում է դեկլարման ներկայացուցչական նամակը (տես հոդված 51), որտեղ գրված է, արդյոք տեղի է ունեցել տնտեսական կարևորության որևէ իրադարձություն կամ հանգամանք: Դա կցվում է նրա զեկուցագրին: Համաձայն ստուգման արդյունքների, զեկուցագիրը կընդգրկի հանձնարարական՝ ՈՒԵՖԱ-ի արտոնագիրը տալու կամ արտոնագիրը մերժելու մասին:
27. Ակումբների Արտոնագրման կոմիտեն ստանում է արտոնագրման պատասխանատուի զեկուցագիրը մինչև համաձայնեցված վերջնաժամկետը, ծանոթանում է դրա հետ, խնդրում



արտոնագրման պատասխանատուին անհրաժեշտության դեպքում հետագա բացատրություններ և փաստաթղթեր տալ, եթե կա դրանց կարիքը և որոշում կայացնում ՈԻԵՖԱ-ի արտոնագիրը տալու կամ մերժելու մասին:

Ակումբների Արտոնագրման կոմիտեն պետք է բավարարի որակավորման, անկախության և գաղտնիության պահանջները համաձայն սույն Ուղեցույցի դրույթների:

28. Որոշում՝

Երկու տարբերակ՝ քայլ 29 կամ քայլ (D).

29. Արտոնագրման թեկնածուի փաստաթղթերի և արտոնագրման պատասխանատուի ներկայացրած զեկուցագրի հետ մանրամասն ծանոթանալուց հետո Ակումբների Արտոնագրման Կոմիտեն/ Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեն տալիս է ՈԻԵՖԱ-ի արտոնագիրը: Արտոնագրի թողարկումը կատարվում է այն պայմանով, որ արտոնագրման թեկնածուն ԲԱՎԱՐԱՐՈՒՄ է ՀՀՖ Ակումբների Արտոնագրման Համակարգի Կանոնակարգում հասկոթողված բոլոր չափանիշները: Թողարկված արտոնագիրը կարող է մանրամասն հասկանալի կամ չհասկանալի արտոնագրման թեկնածուի կողմից ուշադրություն պահանջող բնագավառները:

30. Արտոնագրման պատասխանատուն ստանում է Ակումբների Արտոնագրման Կոմիտեի/ Արտոնագրման Բողոքարկման Կոմիտեի զեկուցագիրը: Եվ դրանով կատարված որոշման հիման վրա արտոնագրման պատասխանատուն պատրաստում է այն արտոնագրման թեկնածուների ցանկը, որոնք իրավասու են մասնակցել ՈԻԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին: Արտոնագրված ակումբների ցանկը ուղարկվում է ՈԻԵՖԱ-ին, մինչև հաստատագրված և համաձայնեցված վերջնաժամկետը (սկզբունքորեն մինչև մայիսի 31-ը):

(A) Սկսած 19-րդ քայլից՝

Եթե փաստաթղթերը ավարտուն չեն կամ եթե դրանք չեն ուղարկվել մինչև սահմանված վերջնաժամկետը, ապա արտոնագրման պատասխանատուն կապվում է արտոնագրման թեկնածուի հետ հետագա քայլերի մասին համաձայնության գալու նպատակով (օրինակ. խնդրանք հավելյալ տեղեկատվություն, օժանդակ փաստաթղթերի, հարցաթերթիկներ կամ պակասող փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ):

Որոշում՝

Երկու այլընտրանք.

- Եթե արտոնագրման թեկնածուն համաձայնվում է արտոնագրման պատասխանատուի հետ ձեռնարկվելիք քայլերի շուրջ, ապա վերադառնալ 20-րդ քայլին:
- Եթե արտոնագրման թեկնածուն չի համաձայնվում արտոնագրման պատասխանատուի հետ ձեռնարկվելիք քայլերի շուրջ, ապա վերադառնալ 23-րդ քայլին:

(B) Սկսած 21-րդ քայլից.

Եթե արտոնագրման փորձագետը բացահայտում է բնագավառներ, որոնք հետագա պարզաբանում են պահանջում, նա կապվում է արտոնագրման թեկնածուի հետ պարզաբանում պահանջող հարցը քննարկելու համար և փորձում է հասնել փոխադարձ համաձայնության հետագա գործողության վերաբերյալ:

Եթե արտոնագրման պատասխանատուն բացահայտում է բնագավառներ, որոնք հետագա ուսումնասիրություն են պահանջում (որոշակի չափանիշների հետ անհամատեղելիություն, սխալ տեղեկատվության պակաս, և այլն) նա կապվում է արտոնագրման թեկնածուի հետ իր մտահոգությունները քննարկելու համար: Արտոնագրման պատասխանատուն կարող է հետագա բացատրություններ պահանջել կամ օժանդակող փաստաթղթեր կամ կարող է որոշել



այցելություն կատարել տեղում հետագա ուսումնասիրության նպատակով: Եթե պլանավորված է (հայտատուի) օբյեկտի այցելություն, ապա արտոնագրման պատասխանատուն կհանդիպի արտոնագրման թեկնածուի հետ և կքննարկի խնդրի բնագավառները:

Նրանք կհատկորոշեն ակումբի հետագա գործողությունները այդ բնագավառները միասին համաձայնեցված ժամանակացույցի ընթացքում շտկելու համար:

Որոշում՝

Երկու այլընտրանք

- Եթե արտոնագրման թեկնածուն համաձայնվում է արտոնագրման պատասխանատուի հետ ձեռնարկվելիք քայլերի շուրջ, ապա վերադառնալ 23-րդ քայլին:
- Եթե արտոնագրման թեկնածուն չի համաձայնվում արտոնագրման պատասխանատուի հետ ձեռնարկվելիք քայլերի շուրջ, ապա վերադառնալ 25-րդ քայլին:

(C) Արտոնագրման թեկնածուի ներկայացրած փաստաթղթերի և արտոնագրման պատասխանատուի զեկուցագրի մանրամասն ուսումնասիրությունից հետո Ակումբների Արտոնագրման Կոմիտեն հրաժարվում է տալ արտոնագիրը: Մերժման մեջ պետք է մանրամասն նկարագրված լինեն այն բնագավառները, որոնք շտկման կարիք ունեն և արտոնագրման թեկնածուին/արտոնագրման պատասխանատուին հնարավորություն է տրվում բողոքարկել որոշումը Արտոնագրման բողոքարկման կոմիտեի առջև:

Արտոնագրման թեկնածուն կարող է բողոքարկել ԱԱԿ-ի որոշումը պաշտոնական ծանուցումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում: Արտոնագրման բողոքարկման կոմիտեն ծանուցվում է և հանդիպման օրը նշանակվում է փոխադարձ համաձայնությամբ:

Արտոնագրման պատասխանատուն գրում է զեկուցագիր և ներկայացնում այն Արտոնագրման բողոքարկման կոմիտեին: Զեկուցագրի մեջ մանրամասնվում են մտահոգության տեղիք տված բնագավառները և մերժման պատճառները:

Արտոնագրման բողոքարկման կոմիտեն հանդիպում և քննարկում է արտոնագրման թեկնածուի բողոքը: ԱԲԿ-ն իր որոշումը կայացնում է ԱԱԿ-ի որոշման հիման վրա, արտոնագրման պատասխանատուի զեկուցագրի և արտոնագրման թեկնածուի կամ արտոնագրողի ներկայացրած փաստաթղթերի հիման վրա :

Որոշում՝

Երկու այլընտրանք՝ քայլ 29 կամ քայլ (D).

(D) Արտոնագրման թեկնածուի փաստաթղթերի և Արտոնագրման պատասխանատուի զեկուցագրի հետ մանրամասն ծանոթանալուց հետո, Արտոնագրման բողոքարկման կոմիտեն մերժում է արտոնագիր տալ: Արտոնագրման բողոքարկման կոմիտեն մանրամասն հիմնավորում է մերժման պատճառները և նկարագրում ուշադրության ենթակա բնագավառները: Վերջում ԱԲԿ-ի զեկուցագիրը ուղարկվում է Արտոնագրման բաժնի պետին (վերաձարձեք 30-րդ քայլին):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Հնարավոր է, որ որոշ չափանիշներ բավարարելու պայմանները (ստուգված ազգային արտոնագրի համար) փոխված լինեն այդ ընթացքում: Այդ դեպքում ամբողջ տեղեկատվությունը, որը փոփոխվել է համեմատած նախորդ՝ ազգային արտոնագրման համար ստուգված տեղեկատվության հետ, պետք է նորից ներկայացվի արտոնագրողին:



Հավելված II. ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման կանոնակարգի ներառումը ՀՀ ակումբների արտոնագրման կանոնակարգի մեջ

Ա – Սկզբունք

ՀՀ-ն ակումբների արտոնագրման իր կանոնակարգում սահմանում է շահագրգիռ կողմերին (արտոնագրողին, արտոնագրման թեկնածուին, որոշում կայացնող մարմիններին), նրանց իրավունքներն ու պարտականությունները, այս կանոնակարգի համաձայն ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու չափանիշները և անհրաժեշտ գործընթացները (տես հոդված 5 (3)):

Բ – Գործընթաց

1. ՀՀ-ն վերջնական տեսքի է բերում ակումբների արտոնագրման ազգային կանոնակարգը և ՈՒԵՖԱ-ի պաշտոնական լեզուներից մեկով թարգմանած՝ ստուգման նպատակով ուղարկում է ՈՒԵՖԱ-ի վարչակազմին՝ վերջինիս կողմից սահմանված ժամկետներում:
2. ՀՀ-ն պատասխանատու է վերոհիշյալի ապահովման համար և պետք է ապացույցներ տրամադրի ՈՒԵՖԱ-ի վարչակազմին, որ այս կանոնակարգի բոլոր կիրառելի դրույթները ներմուծվել են ակումբների արտոնագրման ազգային կանոնակարգի մեջ: ՈՒԵՖԱ-ի վարչակազմի կողմից բացառություններ կարող են տրամադրվել՝ համաձայն այս կանոնակարգի 4-րդ հոդվածի:
3. ՀՀ-ն իրավունք ունի ընդլայնել կամ հավելյալ նվազագույն չափանիշներ ներմուծել ակումբների արտոնագրման ազգային կանոնակարգում՝ ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցության իրավունք ձեռք բերելու համար:
4. Այն դեպքերում, երբ որևէ ընդլայնված կամ լրացուցիչ նվազագույն չափանիշ ներմուծվում է ակումբների արտոնագրման ազգային կանոնակարգի մեջ արտոնագրողի նախաձեռնությամբ, ապա դրանք (համապատասխան անհրաժեշտ փոփոխություններով/ mutatis mutandis) կիրառվում են նաև ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի մասնակցության նկատմամբ:
5. ՀՀ-ն պետք է հավաստիացնի ՈՒԵՖԱ-ի վարչակազմին, որ ակումբների արտոնագրման ազգային կանոնակարգերը չեն հակասում գործածվող ազգային օրենսդրությանը:
6. ՈՒԵՖԱ-ի վարչակազմը ստուգում է ՀՀ ակումբների արտոնագրման կանոնակարգի վերջնական տարբերակը և ՀՀ-ին գրավոր կերպով հաստատում է հետևյալը.
 - ա) ՀՀ բարձրագույն խմբի և ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերում մասնակցության իրավունք ստանալու վերաբերյալ այս կանոնակարգի բոլոր կիրառելի դրույթները ներառված են ՀՀ ակումբների արտոնագրման կանոնակարգի մեջ;
 - բ) համաձայն ՀՀ ակումբների արտոնագրման կանոնակարգի՝ ազգային կոմպետենտ մարմինների կողմից տրված արտոնագիրը հիմնված է այս կանոնակարգում ձևակերպված նվազագույն չափանիշների վրա:
7. ՀՀ ակումբների արտոնագրման կանոնակարգը պետք է հաստատվի ազգային կոմպետենտ մարմինների կողմից և հաղորդվի արտոնագրման թեկնածուներին արտոնագրման գործընթացից առաջ և այս գործընթացի ընթացքում դրանք չեն կարող փոփոխության ենթարկվել, քանի դեռ ամբողջությամբ չեն հաստատվել ՈՒԵՖԱ-ի կողմից:
8. N/A



Հավելված III. Հատուկ թույլտվություն ներգրավվելու ՌԻԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին- Ակումբների արտոնագրման համակարգի արտակարգ կիրառումը

1. Ակումբների արտոնագրման համակարգի արտակարգ կիրառման համար ՌԻԵՖԱ-ի վարչակազմը սահմանում է անհրաժեշտ վերնաժամկետներ և նվազագույն չափանիշներ՝ ինչպես նշված է 15-րդ հոդվածի 1 կետում և այդ մասին տեղեկացնում է ՀՀՖ-ին ոչ ուշ քան արտոնագրման համակարգի մրցաշրջանին նախորդող տարվա օգոստոսի 31-ը:
2. ՀՀՖ-ն պարտավոր է արտոնագրման համակարգի այդպիսի արտակարգ կիրառման մասին գրավոր ծանուցագիր ներկայացնել ՌԻԵՖԱ՝ միաժամանակ նշելով համապատասխան ակումբի (ակումբների) անվանումը (անվանումները) ըստ ՌԻԵՖԱ-ի կողմից սահմանված վերջնաժամկետի:
3. ՀՀՖ-ն պատասխանատվություն է կրում շահագրգիռ ակումբին (ակումբներին) նշված չափանիշների մասին տեղեկացնելու համար, ինչպես նաև ազգային մակարդակով արտակարգ կիրառման գործընթացի անցկացման գնահատման համար: Այն պետք է նաև ակումբի հետ անհրաժեշտ քայլեր ձեռնարկի այդ գործընթացի անցկացմանը նախապատրաստվելու համար:
4. Շահագրգիռ ակումբը (ակումբները) պետք է ՀՀՖ-ին ներկայացնի (ներկայացնեն) անհրաժեշտ հաստատող փաստաթղթերը: Արտոնագրողը պետք է անցկացնի ակումբի (ակումբների) գնահատումը սահմանված նվազագույն չափանիշներով և ՌԻԵՖԱ-ի կողմից սահմանված ժամկետներում ներքոթվարկյալ փաստաթղթերը ուղարկի ՌԻԵՖԱ անգլերենով.
 - ա) հատուկ թույլտվության գրավոր հայցում՝ ՌԻԵՖԱ-ի համապատասխան ակումբային մրցաշարերին մասնակցության համար:
 - բ) արտոնագրողի երաշխավորագիրը՝ հիմնված անցկացված գնահատման վրա (ներառյալ ամսաթվերը և այն մարդկանց անունները, ովքեր անցկացրել են ակումբի (ակումբների) գնահատումը):
 - գ) բոլոր հաստատող փաստաթղթերը, որոնք ՌԻԵՖԱ-ի հարցումով ներկայացվել են ակումբի (ակումբներին) և արտոնագրողի կողմից:
 - դ) արտակարգ կիրառման գործընթացի ընթացքում ՌԻԵՖԱ-ի կողմից պահանջված ցանկացած լրացուցիչ փաստաթուղթ:
5. ՌԻԵՖԱ-ն իր որոշումը հիմնավորում է ներկայացված փաստաթղթերով և տալիս է հատուկ թույլտվություն ՌԻԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցության համար, եթե ներկայացված բոլոր չափանիշները բավարարվել են, և եթե ակումբը (ակումբները) վերջին հաշվով անցնում է (անցնում են) ընտրական փուլը իր (իրենց) մարզական արդյունքի հիման վրա: Որոշման մասին տեղեկացվում է ՀՀՖ-ին, որն էլ իր հերթին տեղեկացնում է համապատասխան ակումբին (ակումբներին):
6. Եթե տվյալ ակումբը արտակարգ կիրառման գործընթացի ժամանակ իր մարզական արդյունքների հիման վրա դուրս է մնացել մրցումներից, ՀՀՖ-ն պետք է այդ մասին անհապաղ տեղեկացնի ՌԻԵՖԱ-ին և տվյալ գործընթացը անմիջապես կդադարեցվի՝ առանց լրացուցիչ որոշում կայացնելու: Այսպիսի դադարեցված գործընթացը չի կարող վերսկսվել ավելի ուշ փուլում:
7. Համաձայն ՌԻԵՖԱ-ի կանոնադրության համապատասխան դրույթների՝ ՌԻԵՖԱ-ի որոշումների բողոքարկումները գրավոր ձևով կարող են ներկայացվել Լոզանում (Շվեյցարիա) գտնվող Մարզական Արբիտրաժային Դատարան (ՄԱԴ):



Հավելված IV. Աուդիտորի և նրա կողմից անցկացվող գնահատման գործընթացների որոշումը

Ա – Սկզբունք

1. Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (International Federation of Accountants – IFAC) պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնների համաձայն աուդիտորը պետք է լինի անկախ (տես հոդված 45 և 46):
2. Աուդիտորը պետք է լինի ՀՀ Հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի (AAAA) անդամ:

Բ – Գնահատման գործընթաց

1. Աուդիտորը պետք է տարեկան ֆինանսական հաշվետվության աուդիտ անցկացնի: Աուդիտորի եզրակացությունը պետք է.
 - ա) ներառի դիմում առ այն, որ աուդիտն անցկացվել է աուդիտի միջազգային ստանդարտների կամ համապատասխան ՀՀ չափանիշների կամ կանոնների համաձայն, եթե դրանք բավարարում են աուդիտի միջազգային չափանիշների նվազագույն պահանջներին, և
 - բ) ներկայացված լինի արտոնագրողին՝ ֆինանսական հաշվետվության հետ միասին, որպեսզի դրանց հիման վրա արտոնագրողը կարողանա արտոնագրման որոշում կայացնել:
2. Աուդիտորը պետք է լրացուցիչ տեղեկատվության ստուգում անցկացնի (եթե այդպիսին կա): Աուդիտորի եզրակացությունը փաստերի հայտնաբերման վերաբերյալ պետք է.
 - ա) ներառի հայտարարություն առ այն, որ գնահատումն անց է կացվել համաձայնեցված գործընթացների եղանակով՝ համաձայն հարակից ծառայությունների միջազգային չափանիշների (International Standard on Related Services – ISRS) 4400-ի կամ համապատասխան ՀՀ չափանիշների կամ կանոնների համաձայն, որոնք բավարարում են ISRS 4400-ի չափանիշի նվազագույն պահանջները, և
 - բ) ներկայացված լինի արտոնագրողին համապատասխան տեղեկատվության հետ միասին, որպեսզի դրանց հիման վրա արտոնագրողը կարողանա արտոնագրման որոշում կայացնել:
3. Ֆինանսական հաշվետվությունից բացի, աուդիտորը կարող է գնահատել նաև այլ ֆինանսական տեղեկատվություն: Աուդիտորի օգտագործման դեպքում փաստերի հայտնաբերման վերաբերյալ աուդիտորի եզրակացությունը պետք է.
 - ա) ներառի հայտարարություն առ այն, որ գնահատումն անց է կացվել համաձայնեցված գործընթացների եղանակով՝ համաձայն հարակից ծառայությունների միջազգային չափանիշների (International Standard on Related Services – ISRS) 4400-ի կամ համապատասխան ՀՀ չափանիշների կամ կանոնների համաձայն, որոնք բավարարում են ISRS 4400-ի չափանիշի նվազագույն պահանջները, և
 - բ) ներկայացված լինի արտոնագրողին համապատասխան տեղեկատվության հետ միասին, որպեսզի դրանց հիման վրա արտոնագրողը կարողանա արտոնագրման որոշում կայացնել:



Հավելված V. Տեղեկատվության տրամադրման համար նվազագույն պահանջները

Ա – Սկզբունք

1. Հաշվապահական հաշվառման անցկացման ազգային փորձի պահանջներից կամ Ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտներից անկախ՝ այս կանոնակարգի ֆինանսական չափորոշիչներն ամեն դեպքում արտոնագրման թեկնածուներին պարտավորեցնում են ներկայացնել որոշակի նվազագույն ծավալի ֆինանսական տեղեկատվություն արտոնագրողին՝ համաձայն 47 և 52-րդ հոդվածների):
2. Ֆինանսական հաշվետվության յուրաքանչյուր բաղադրիչ պետք է խիստ հստակեցված լինի: Ներկայացված տեղեկատվության ճշգրիտ ընկալման համար ֆինանսական հաշվետվության մեջ հետևյալ տեղեկատվությունը պետք է տեղակայված լինի ակնառու տեղում և անհրաժեշտության դեպքում լինի նաև կրկնօրինակը.
 - ա) Հաշվետու կազմակերպության անվանումը (նաև իրավական կազմակերպման ձևը), իրավաբանական հասցեն և հաշվետու կազմակերպության հասցեն, ինչպես նաև տվյալ տեղեկատվության այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարվել են նախորդ հաշվետվության փակման պաշտոնական ամսաթվից հետո;
 - բ) Արդյոք ներկայացված ֆինանսական տեղեկատվությունը վերաբերում է նաև արտոնագրման թեկնածուին անհատապես, իրավաբանական անձանց խմբերին կամ դրանց համակցությանը և ցանկացած այդպիսի խմբի կամ համակցության բաղադրության և կառուցվածքի նկարագրությանը;
 - գ) Հաշվետվության փակման պաշտոնական ամսաթիվը և այն ժամանակահատվածը, որի ընթացքում ներկայացվել է ֆինանսական տեղեկատվությունը (ինչպես ընթացիկ, այնպես էլ համեմատական տեղեկատվության համար), և
 - դ) Այն փոխարժեքը, ըստ որի ներկայացվել է հաշվետվությունը:

Բ – Հաշվապահական հաշվեկշիռ

1. Ստորև ներկայացված են հաշվապահական հաշվեկշիռի հոդվածների վերաբերյալ նվազագույն պահանջները.

Ընթացիկ ակտիվներ

- i) դրամական միջոցները և նրանց համարժեքները
- ii) խաղացողների տրանսֆերներից ստացվող հաշիվներ
- iii) խմբային իրավաբանական անձանց և հարակից կողմերից ստացվող հաշիվներ
- iv) այլ ընթացիկ ակտիվներ
- v) գույքացանկեր

Ոչ ընթացիկ ակտիվներ

- vi) նյութական հաստատագրված ակտիվներ
- vii) ոչ նյութական ակտիվներ – խաղացողներ
- viii) ոչ շոշափելի ակտիվներ – այլ
- ix) ներդրումներ
- x) այլ ոչ ընթացիկ ակտիվներ



Ընթացիկ պարտավորություններ

- xi) բանկային ժամկետանց վճարումներ և վարկեր
- xii) վճարվելիք հաշիվներ խաղացողների տրանսֆերների առնչությամբ
- xiii) վճարվելիք հաշիվներ խմբային իրավաբանական անձանց և այլ հարակից կողմերի առնչությամբ
- xiv) աշխատողներին վճարվելիք հաշիվներ
- xv) սոցիալական/հարկային մարիններին վերաբերող պարտավորություններ
- xvi) այլ ընթացիկ պարտավորություններ
- xvii) կարճաժամկետ վճարումներ

Ոչ ընթացիկ պարտավորություններ

- xviii) բանկային և այլ վարկեր
- xix) ֆուտբոլիստների տրանսֆերներին վերաբերող պարտավորություններ
- xx) սոցիալական/հարկային մարիններին վերաբերող պարտավորություններ
- xxi) այլ ոչ ընթացիկ պարտավորություններ
- xxii) այլ հարկային պարտավորություններ
- xxiii) երկարաժամկետ վճարումներ

Զուտ ակտիվներ/պարտավորություններ

- xxiv) զուտ ակտիվներ/ պարտավորություններ

Մեփականատիրական կապիտալ

- xxv) կապիտալ և պահուստներ

- 2. Ղեկավարությունը կարող է համարել, որ (i)-(xxv) կետերը ավելի նախընտրելի է ներկայացնել հաշվապահական հաշվառման կամ ծանոթությունների/նշումների մեջ:
- 3. Հաշվապահական հաշվառման որոշակի հոդվածների տեղեկատվության ներկայացման նվազագույն պահանջները պետք է ներառեն նաև հետևյալը.
 - ա) Զուտ ակտիվների/պարտավորությունների գումարը, որը ընդհանուր ակտիվներն են՝ հանած ընդհանուր պարտավորությունները, օգտագործվում են որոշելու համար՝ արդյոք արտոնագրման թեկնածուն բավարարում է, թե ոչ IND. 2 ցուցանիշը, ինչպես նկարագրված է 52-րդ հոդվածում:

Գ – Շահույթի և կորուստի հաշիվ

- 1. Ստորև ներկայացված են շահույթի և կորուստի հաշվի բովանդակության նկատմամբ նվազագույն պահանջները.

Հասույթներ

- i) Ընդհանուր նախնական մուքեր
- ii) հովանավորություն և գովազդ
- iii) հեռահաղորդակցման իրավունքներ



- iv) առևտրային
- v) ՌԻԵՏԱ-ի համերաշխության և պարզևատրման վճարներ
- vi) այլ արտադրական եկամուտներ

Ծախսեր

- vii) իրացման/նյութերի ինքնարժեք
- viii) աշխատողների հավելյալ օգուտների ծախսեր
- ix) մաշվածություն և ամորտիզացիա
- x) հաստատագրված ակտիվների նվազեցում
- xi) այլ արտադրական ծախսեր

Այլ

- xii) ակտիվների օտարումից ստացված շահույթ/կորուստ
- xiii) ոչ նյութական ակտիվների- խաղացողների օտարումից ստացված շահույթ/կորուստ
- xiv) ֆինանսական եկամուտ
- xv) ֆինանսական ծախսեր
- xvi) հարկային ծախսեր
- xvii) շահույթը կամ վնասը հարկերի վճարումից հետո:

2. Ղեկավարությունը կարող է համարել, որ (i)-(xxv) կետերը ավելի նախընտրելի է ներկայացնել շահույթի կամ կորստի հաշիվներում կամ ծանոթությունների/նշումների մեջ:

Դ – Դրամական միջոցների հոսքի հաշվետվություն

- 1 Դրամական միջոցների հոսքի հաշվետվության մեջ պետք է ներկայացվեն ֆինանսական տարվա դրամական միջոցների հոսքերը (և նախորդ ֆինանսական տարվա համեմատությունները)՝ դասակարգված առանձին-առանձին ինչպես ներկայացված է ստորև
- ա) Դրամական միջոցների հոսք արտադրական գործունեությունից
- Արտադրական են սուբյեկտի եկամուտ-արտադրող և այլ գործունեությունները, որոնք ֆինանսական գործողության ներդրում չեն: Այդ իսկ պատճառով սրանք ընդհանուր առմամբ առաջանում են գործարքներից և զուտ շահույթի կամ կորուստի որոշմանը նպաստող դեպքերից:
- բ) Դրամական միջոցների հոսք ներդրումային գործունեությունից
- Ներդրումային են երկարաժամկետ ակտիվների (ներառյալ խաղացողների գրանցումը) ձեռքբերումը և տնօրինումը և այլ ներդրումներ, որոնք ընդգրկված չեն կանխիկ համարժեքների մեջ: Սուբյեկտը պետք է զեկուցի առանձին վերադաս մարմիններին ներդրումներից գոյացած համախառն դրամական եկամուտների և համախառն դրամական վճարումների մասին:
- գ) Դրամական միջոցների հոսք ֆինանսական գործունեությունից
- Ֆինանսական գործունեությունը այն միջոցառումների շարքն է, որոնք հանգեցնում են ներդրված բաժնետիրական կապիտալի և սուբյեկտի վարկային միջոցների չափի և ձևի փոփոխությանը: Սուբյեկտը պետք է զեկուցի առանձին վերադաս մարմիններին ֆինանսական գործունեության արդյունքում գոյացած համախառն դրամական եկամուտների և համախառն դրամական վճարումների մասին:
- դ) Այլ գործունեությունից եկող դրամական հոսքեր



Տոկոսադրույքից և դիվիդենդներից ստացված և վճարված դրամական հոսքերից յուրաքանչյուրը պետք է ներկայացվի առանձին: Յուրաքանչյուրը ժամանակ առ ժամանակ հետևողական կերպով պետք է ներկայացվի որպես ֆինանսական, ներդրումային կամ արտադրական գործունեություն:

Եկամտահարկից ստացված դրամական հոսքերը պետք է ներկայացվեն առանձին և դասակարգվեն որպես դրամական հոսքեր արտադրական գործունեությունից ստացվող, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք համարվել են որպես ֆինանսական կամ ներդրումային գործունեություններ:

2. Դրամական միջոցների և համարժեքների տարրերը պետք է բացահայտվեն, և պետք է դրամական հոսքերի հաշվետվության մեջ ներկայացվի գումարների համաձայնեցումը ըստ զբաղեցրած դիրքերի և մնացորդների համանուն փաստաթղթերի մեջ:

Ե – Ծանոթություններ ֆինանսական հաշվետվությունների համար

1. Տարեկան ֆինանսական հաշվետվության վերաբերյալ ծանոթությունները պետք է ներկայացվեն համակարգված և կանոնավոր կերպով: Հաշվապահական հաշվեկշռի, շահույթի և կորուստի հաշվի և դրամական միջոցների հոսքերի հաշվետվության յուրաքանչյուր կետ պետք է ունենա իր փոխադարձ հղումները ծանոթություններում նշված ցանկացած տեղեկատվության նկատմամբ: Ծանոթություններում բացահայտելու նվազագույն պահանջները ներառում են հետևյալը.

ա) *Հաշվապահական մեթոդները*

Ֆինանսական հաշվետվությունների նախապատրաստման հիմքը և կիրառված նշանակալի հաշվապահական մեթոդների կիրառումը:

բ) *Հիմնական նյութական միջոցներ*

Նյութական միջոցների բոլոր տեսակները պետք է ներկայացվեն առանձին (օրինակ՝ սեփականություն, մարզադաշտ, տեխնիկա)

Հետևյալ ինֆորմացիան պետք է ներկայացվի հիմնական նյութական միջոցների յուրաքանչյուր տեսակի համար.

1. Հարկերը ներառող հաշվեկշռային գումարը և կուտակված ամորտիզացիան/արժեզրկում (միավորած արժեզրկման կուրուստների ընդհանուր գումարը) մրցաշրջանի սկզբում և վերջում:
2. Հաշվեկշռային գումարի համապատասխանեցում մրցաշրջանի սկզբում և վերջում, որը ցույց կտա այն ավելացումները, տնօրինումները, աճը և նվազումը, որոնք առաջացել են մրցաշրջանի ընթացքում առկա վերագնահատումներից, խախտումներից առաջացած կորուստներից, որոնք ընդգրկված են մրցաշրջանի ընթացքում առկա շահույթի և կորուստի հաշիվների մեջ (եթե կա այդպիսին), խախտումներից առաջացած կորուստներից, որոնք փոխվել են մրցաշրջանի ընթացքում առկա շահույթի և կորուստի հաշիվների մեջ (եթե կա այդպիսին) և արժեզրկումներից:

Օգտագործված արժեզրկման մեթոդները և արժեզրկման մակարդակները պետք է ներկայացվեն հաշվապահական քաղաքականության գրառումներում:

գ) *Ոչ նյութական միջոցներ*

Ոչ նյութական միջոցների յուրաքանչյուր խումբը պետք է ներկայացվի առանձին (օրինակ՝ խաղացողների գրանցում):

Հետևյալ տեղեկատվությունը պետք է ներկայացվի ոչ նյութական միջոցների խմբերից յուրաքանչյուրի համար՝



1. Հարկերը ներառող հաշվեկշռային գումարը և կուտակված ամորտիզացիան/արժեզրկում (միավորած արժեզրկման կուրուստների ընդհանուր գումարը) մրցաշրջանի սկզբում և վերջում:
2. Հաշվեկշռային գումարի համապատասխանեցում մրցաշրջանի սկզբում և վերջում, որը ցույց կտա մրցաշրջանի ընթացքում առկա այն ավելացումները, տնօրինումները, նվազումները, որոնք առաջացել են խախտումներից առաջացած կորուստներից, որոնք ճանաչված են մրցաշրջանի ընթացքում առկա շահույթային և կորուստային հաշիվներում (եթե կա այդպիսին) և արժեզրկումներից:

Խաղացողների գրանցման հաշվառման հարցերի հետ կապված տեղեկատվության և ցուցումների համար տես Հավելված VII:

դ) *Գրավադրված միջոցներ և սեփականության իրավունքի նկատմամբ սահմանափակված միջոցներ*

Պետք է ներկայացնել տեղեկատվություն առկա սահմանափակումների և չափի մասին՝ կապված սեփականության իրավունքի, անշարժ գույքի, մարզադաշտի և մարզագույքի մասին, որոնք գրավադրվել են պարտականությունները կամ տրված երաշխիքները ապահովելու համար:

Պետք է ներկայացնել տվյալներ առկա և սեփականության իրավունքը սահմանափակող ոչ նյութական միջոցների հաշվեկշռային գումարի, ինչպես նաև պարտականությունները կատարելու համար գրավադրված ոչ նյութական միջոցների հաշվեկշռային գումարի մասին:

ե) *Ներդրումներ*

Ներդրումները պետք է իրենց մեջ ներառեն ներդրումներ դուստր կազմակերպություններում, միասին վերահսկվող կազմակերպություններում և ասոցիացիաներում: Կապված դուստր կազմակերպություններում, միասին վերահսկվող կազմակերպություններում և ասոցիացիաներում կատարվող ներդրումներին՝ անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

- i) անունը
- ii) գրանցման երկիրը կամ գտնվելու վայրը
- iii) կազմակերպության գործունեության տեսակը/զբաղվածությունը
- iv) կապիտալի մեջ ունեցած մասնաբաժինը
- v) ձայնի իրավունքը, եթե տարբերվում է կապիտալի մեջ ունեցած մասնաբաժնից
- vi) ներդրումների համար օգտագործվող հաշվառման մեթոդը

զ) *Բանկային «օվերդրաֆտներ» և վարկեր*

Ֆինանսական պարտականությունների յուրաքանչյուր կատեգորիայի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

- i) Ֆինանսական միջոցների չափի և բնույթի մասին տեղեկատվություն, ներառյալ գումարների չափը և վերջնաժամկետները, ինչպես նաև ցանկացած էական պայման, որը կարող է ազդել գումարի, ժամանակը բաշխելու և ապագա դրամական հոսքերի հստակության վրա:
- ii) Ընդունված հաշվապահական քաղաքականությունը և մեթոդները, ներառյալ դրանց կիրառման համար օգտագործվող չափանիշներն ու չափումները:

է) *Պահուստային գումարներ/ռեզերվներ*



Պահուստային գումարները պետք է հաշվետվության մեջ ներկայացվեն առանձին կատեգորիաներով: Որոշելիս, թե որ պահուստային գումարները կարող են դիտարկվել մեկ ընդհանուր կատեգորիայի մեջ, անհրաժեշտ է գնահատել, արդյոք հանդիսանում են համապատասխան միջոցները բավականաչափ նման իրենց բնույթով, որպեսզի հնարավոր լինի դրանց միավորել և ներկայացնել մեկ գումարի տեսքով:

Պահուստային գումարների յուրաքանչյուր կատեգորիայի համար անհրաժեշտ է նշել հաշվեկշռային գումարը մրցաշրջանի սկզբում և վերջում, այդ տարվա ընթացքում օգտագործված միջոցների, վերականգնողական կամ ծախսերի համար պահուստային պահվող գումարները:

ը) *Արժեթղթային կապիտալ և պահուստային գումար/ռեզերվ*

Արժեթղթային կապիտալը, այլ պահուստային գումարները և չբաշխված շահույթը պետք է ներկայացվեն առանձին:

i) *Արժեթղթային կապիտալ*

Ընթացիկ տարվա ընթացքում թողարկված արժեթղթային կապիտալի հետ կապված անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

- Թողարկված արժեթղթերի քանակն ու տոսակը
- Թողարկված արժեթղթերից ստացվող էմիսիոն մասնաբաժին (եթե կիրառելի է)
- Արժեթղթերի թողարկումից ձևավորված ընդհանուր գումարը
- Նոր արժեթղթեր թողարկելու պատճառը

ii) *Այլ պահուստային գումարներ*

Եթե անշարժ գույքը, մարգադաշտը և սարքավորումները հաշվետվության մեջ ներկայացվում են վերագնահատված արժեքով, անհրաժեշտ է ներկայացնել վերագնահատումից առաջացած շահույթը ցույց տալով հաշվետվության ընթացքում առաջացած փոփոխությունները և մնացորդի բաշխման ցանկացած սահմանափակում հոգուտ բաժնետիրոջ:

iii) *Չբաշխված եկամուտ*

Պահանջվում է ներկայացնել չբաշխված եկամուտի չափը (օրինակ՝ կուտակված շահույթը կամ վնասը) հաշվետու ժամանակահատվածի սկզբում, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածի ընթացքում առաջացած փոփոխությունների դեպքում:

թ) *Վերահսկիչ կողմ*

Եթե հաշվետու իրավաբանական անձը վերահսկվում է մեկ այլ իրավաբանական անձի կողմից, պետք է լինեն բացահայտումներ առայն, թե ինչ հարաբերություններ կան տվյալ հարակից կողմի միջև, ինչպես նաև նրա անունը և եթե այն տարբեր է, նաև վերջնական վերահսկող կողմի անունը: Եթե հաշվետու իրավաբանական անձի վերահսկող կողմը կամ վերջնական վերահսկող կողմը հայտնի չէ, ապա այդ փաստը նույնպես պետք է բացահայտվի՝ անկախ այն բանից, թե արդյոք վերահսկող կողմերի և հաշվետու իրավաբանական անձի միջև եղել են որևէ գործարքներ թե ոչ:

ժ) *Գործարքներ հարակից կողմի հետ*

Եթե հաշվետու ժամանակահատվածի ընթացքում հարակից կողմերի միջև որևէ գործարքներ են կատարվել, ապա հաշվետու իրավաբանական անձը պետք է բացահայտի հարակից կողմի հետ հարաբերությունների բնույթը, ինչպես նաև տեղեկատվություն տրամադրի այդ ժամանակահատվածի ընթացքում կատարված գործարքների և ժամանակահատվածի վերջում չմարված պարտքերի մասին, որն անհրաժեշտ է



Ֆինանսական հաշվետվության վրա այդ փոխհարաբերությունների ունեցած հնարավոր ազդեցությունը հասկանալու համար:

Բացահայտումները նվազագույնը պետք է ներառեն.

- i) գործարքների քանակը և բնույթը,
- ii) դրանցից բխող հաշվեկշռի քանակները և,
 - դրանց ժամկետները և պայմանները, ներառյալ ապահովագրության առկայությունը, և հաշիվների մարման ժամանակ կիրառվող դիտարկումների բնույթը;
 - ցանկացած տրամադրված կամ ստացված երաշխիքների մանրամասն նկարագրություն,
- iii) վերապահումներ կասկածելի պարտքերի համար՝ կապված չմարված հաշվեկշիռների հետ, և
- iv) ժամանակահատվածի ընթացքում ճանաչված ծախսը վատ կամ կասկածելի պարտքերի առնչությամբ, որոնք պետք է մարեն հարակից կողմերը:

Հետևյալ յուրաքանչյուր կատեգորիայի համար պահանջված բացահայտումները պետք է ներկայացվեն առանձին.

- գլխավոր կազմակերպությունը,
- հաշվետու կազմակերպության նկատմամբ միացյալ վերահսկողություն իրականացնող կամ նրա վրա էական ազդեցություն ունեցող կազմակերպությունները,
- դուստր կազմակերպությունը
- ասոցացված կազմակերպությունը,
- համատեղ կազմակերպությունը, որոնց մասնակից է հանդիսանում հաշվետու կազմակերպությունը
- կազմակերպության կամ նրա գլխավոր ձեռնարկության հիմնական կառավարող անձնակազմը
- այլ փոխկապակցված կողմեր

Անհրաժեշտ է հաստատել, որ փոխկապակցված կողմերի միջև գործողությունները իրականացվել են կոմերցիոն հիմունքներով, եթե այն կարելի է հիմնավորել:

բ) *Պայմանական պարտավորություններ*

Բացի այն դեպքերից, երբ հաշվարկի արդյունքում դրամական միջոցների արտահոսքն աննշան է, հաշվետու իրավաբանական անձը հաշվետվության պաշտոնական փակման օրը պետք է հնարավոր պարտավորությունների յուրաքանչյուր դասի համար ներկայացնի վերջիններիս բնույթը և նպատակահարմարության սահմաններում նաև.

- i) դրա ֆինանսական ազդեցության մոտավոր հաշվարկը,
- ii) ցանկացած մարման քանակի կամ ժամանակի հետ կապված անորոշությունների նշումը, և
- iii) որևէ փոխհատուցման հնարավորությունը:

լ) *Հաշվետվության ժամկետին հաջորդող իրադարձություններ*

Անհրաժեշտ է տրամադրել տեղեկատվություն կարևորագույն իրադարձությունների վերաբերյալ, որոնք տեղի են ունեցել հաշվետվության ժամկետից հետո և որոնք չեն հանգեցնի հաշվետվության շտկմանը (իրադարձության բնույթը և նրա ֆինանսական



ազդեցության չափումը, կամ պնդում, որ այդ ֆինանսական ազդեցությունը հնարավոր չէ չափել): Նմանատիպ իրադարձությունների օրինակներ են.

- i) ֆիքսված վերջնաժամկետի ավարտի մոտեցում, որը ռեալ հեռանկար չունի երկարաձգման կամ մարման համար:
- ii) Գործունեությունից առաջացած էական վնասներ:
- iii) էական դրամաշորթությունների կամ սխալների բացահայտում, որոնք ցույց են տալիս, որ ֆինանսական հաշվետվությունը սխալ է:
- iv) Ղեկավարությունը որոշում է կայացնում լիկվիդացնել կազմակերպությունը կամ ավարտել կոմերցիոն գործունեությունը կամ էլ գալիս է այն եզրակացության, որ նշված գործողությունները անհրաժեշտ են իրական այլընտրանքի բացակայության պարագայում:
- v) Խաղացողների հետ կապված գործարքներ, եթե վճարված կամ ստացված գումարները էական չափերի են հասնում:
- vi) Անշարժ գույքի հետ կապված գործարքներ- օրինակ՝ կապված ակումբին պատկանող մարզադաշտի հետ:

խ) *Այլ բացահայտումներ*

i) Գործակալի վճար

Գործակալին վճարված ցանկացած գումար պետք է ներկայացվի:

ii) Խաղացողների տնտեսական իրավունքներ (կամ նմանատիպ)

Ցանկացած խաղացողի դեպքում, ում տնտեսական կամ նմանատիպ այլ իրավունքները ամբողջությամբ չեն տնօրինվում արտոնագրման թեկնածուի կողմից, ապա արտոնագրման թեկնածուի կողմից տնօրինվող խաղացողի անունը և տնտեսական կամ նմանատիպ այլ իրավունքների տոկոսաչափը մրցաշրջանի սկզբում (կամ գրանցման ստացման պահից) և մրցաշրջանի վերջում պետք է բացահայտվեն:

iii) Հարկային վճարումներ

Հարկային վճարումների բաղադրիչները պետք է ներկայացվեն առանձին: Սա մի ընդհանրացված գումար է, որը ներառվում է հաշվետվության ժամանակ մաքուր շահույթի կամ մաքուր կորուստի հաշվման մեջ կամ էլ դասվում է ընթացիկ և/կամ հետաձգված հարկերի շարքին:

iv) Այլ

Ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն կամ բացահայտում, որը ներկայացված չէ հաշվապահական հաշվեկշռի, շահույթի և կորուստի հաշվետվության կամ դրամական միջոցների հոսքի հաշվետվության մեջ, բայց էական նշանակություն ունի այդ հաշվետվություններից ցանկացածը հասկանալու համար և/կամ պահանջվում է ֆինանսական տեղեկատվության նվազագույն պահանջները բավարարելու համար:

2 – Ղեկավարության կողմից կազմված ֆինանսական նկարագիր

1. Տարեկան ֆինանսական հաշվետվությունը պետք է ներառի ղեկավարության կողմից կազմված ֆինանսական նկարագիր կամ մեկնաբանություններ (տնօրինության հաշվետվություն), որտեղ նկարագրվում և բացատրվում են ֆինանսական վիճակի հիմնական հատկանիշները և հաշվետու իրավաբանական անձի ֆինանսական արտադրողականությունը,



ինչպես նաև այն հիմնական ռիսկերը և անորոշությունները, որոնց հետ այն ստիպված է բախվել:

2. Տարեկան ֆինանսական հաշվետվությունը պետք է նաև ներառի այն մարդկանց անունները, որոնք տարվա ընթացքում ցանկացած ժամանակ հանդիսացել են հաշվետու իրավաբանական անձի կամ տնօրենների խորհրդի գործադիր կամ վերահսկիչ օրգանների անդամներ:

Հավելված VI Ֆինանսական հաշվետվությունների նախապատրաստման հիմքեր

Ա – Սկզբունք

1. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նշված են 47 հոդվածում, պետք է հիմնված լինեն բաժնետիրական ընկերությունների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշվապահական չափանիշների հիման վրա, որոնք են ՀՀ-ում գործող ֆինանսական հաշվետվության կազմման կանոնները կամ ՄՖՀՄ-ը /միջազգային ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներ/՝ անկախ արտոնագրման թեկնածուի իրավական կառուցվածքից:
2. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմվեն՝ ելնելով այն ենթադրությունից, որ արտոնագրման թեկնածուի գործունեությունը կրում է շարունակական բնույթ, ինչը նշանակում է, որ վերջինս կշարունակի ծավալել իր գործունեությունը մոտակա ժամանակաշրջանում: Ենթադրվում է, որ արտոնագրման թեկնածուն չունի ոչ մտադրություն, ոչ էլ անհրաժեշտություն լուծարվելու, կոմերցիոն գործունեությունը դադարեցնելու կամ կրեդիտորների կողմից պաշտպանություն փնտրելու՝ համաձայն օրենքների կամ կանոնակարգերի:
3. Ֆինանսական հաշվետվության կազմման կանոնները, որոնց հիման վրա պետք է պատրաստվեն տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ներառում են որոշակի սկզբունքներ, այդ թվում.
 - ա) թափանցիկ ներկայացում;
 - բ) ներկայացման մեջ տեղ գտած տվյալների շարունակականություն;
 - գ) հաշվապահական հաշվառման համար ճշգրիտ տվյալներ;
 - դ) տվյալների յուրաքանչյուր կատեգորիայի ներկայացում հաշվետվության առանձին հոդվածներով;
 - ե) ակտիվները և պասիվները, ինչպես նաև եկամուտներն ու ծախսերը պետք է հաշվանցվեն մեկը մյուսից:
4. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պետք է հաստատվեն ղեկավարության կողմից և պետք է ուղեկցվեն սեղմ հայտարարագրով՝ ստորագրված հաշվետու կազմակերպության գործադիր մարմնի կողմից:

Բ – Կոնսոլիդացման պահանջներ

1. Հաշվետու խմբում ընդգրկված բոլոր իրավաբանական անձանց/կազմակերպությունների ֆինանսական տեղեկատվությունը (ինչպես սահմանված է 46bis հոդվածում) պետք է լինի կամ համախմբված կամ կոնսոլիդացված, ասես թե նրանք հանդիսանում են մեկ կազմակերպություն:



2. Եթե արտոնագրման թեկնածուն ֆուտբոլային կազմակերպություն է ինչպես նշված է հոդված 12.1-ի բ) մասում, ապա այն պետք է արտոնագրման պատասխանատուին ներկայացնի ֆուտբոլային կազմակերպության և գրանցված անդամների ֆինանսական տեղեկատվությունը (օրինակ՝ համախմբված կամ կոնսոլիդացված ֆինանսական տեղեկատվություն, ասես թե հանդիսանում են մեկ կազմակերպություն):

Գ – Ֆուտբոլիստների գրանցումից ծագող ծախսերի նկատմամբ հաշվապահական պահանջներ

1. Չնայած յուրաքանչյուր արտոնագրման թեկնածու պարտավոր է պատրաստել աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվություն՝ համաձայն բաժնետիրական ընկերությունների համար նախատեսված ՀՀ հաշվապահական չափանիշների կամ ՄՖՀՄ-ի /միջազգային ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներ/՝ այս կանոնակարգը ներառում է ֆուտբոլիստների գրանցումից ծագող ծախսերի առնչությամբ հաշվապահական հաշվառման հատուկ պահանջներ, որոնք համարվում են ոչ նյութական ակտիվներ՝ ինչպես նշված է հոդված 47 և 52-ում: Արտոնագրման թեկնածուն պետք է կամ կապիտալացնի կամ ծախսագրի ֆուտբոլիստի գրանցման համար ծախսերը:
2. Արտոնագրման թեկնածուն, որը կապիտալացնում է ծախսերը ֆուտբոլիստների գրանցման համար, պարտավոր է.
 - ա) կիրառել Գ կետի, պար. 4-ի ներքո նշված նվազագույն հաշվապահական պահանջները;
 - բ) կազմել ֆուտբոլիստի ինքնությանը վերաբերող աղյուսակ, ինչպես նկարագրված է սույն հավելվածի Գ կետում:
3. Եթե արտոնագրման թեկնածուն իր հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ֆուտբոլիստների գրանցման համար կատարվող ծախսերը դիտում է որպես ծախսագրում և ոչ թե կապիտալացում, և սա թույլատրելի է ազգային հաշվապահական փորձով, ապա տվյալ կազմակերպությունները ազատվում են հաշվապահական հաշվառման ներքոգրյալ նվազագույն պահանջների կիրառման պարտականությունից, ինչպես նաև նոր ձևակերպմամբ այդ տվյալների տեղեկացումից (բացառությամբ ցանկացած հարմարեցումներից, որոնք անհրաժեշտ են ստորև 5-րդ (բ) կետում նշված մինիմալ հաշվապահական հաշվառման պահանջները բավարարելու համար):
4. Խաղացողի ձեռքբերման ծախսերը կապիտալացնող արտոնագրման թեկնածուների հաշվապահական հաշվառման նվազագույն պահանջները հետյալն են.
 - ա) Յուրաքանչյուր ֆուտբոլիստի գրանցման կապակցությամբ, յուրաքանչյուր ակտիվի ամորտիզացիայի ընդհանուր գումարը պետք է բաշխվի իր օգտակար օգտագործման ամբողջ ժամանակահատվածի վրա: Դրա համար անհրաժեշտ է ակտիվի արժեքը պարբերաբար բաշխել, որպես ծախս, ֆուտբոլիստի պայմանագրի ամբողջ ժամանակահատվածի համար:
 - բ) Կապիտալացվել կարող են միայն ֆուտբոլիստի գրանցման ձեռք բերման համար պահանջվող ուղղակի ծախսերը: Հաշվապահական հաշվառման նպատակներից ելնելով, ամեն ֆուտբոլիստի բալանսային արժեքը չպետք է ենթարկվի վերագնահատման արժեքի աճի հետ միասին, եթե նույնիսկ դեկավարության կարծիքով նրա շուկայական գինը բարձր է ընթացիկ բալանսային արժեքից: Ավելին, եթե նույնիսկ արտոնագրի թեկնածուն կարող է որոշակի օգուտ քաղել տվյալ ակումբի կողմից մարզված ֆուտբոլիստի օգտագործումից և/կամ տրանսֆերից, հաշվապահական նկատառումներից ելնելով՝ մանկապատանեկան ոլորտի ուղղությամբ կատարվող ծախսերը չպետք է ընդգրկվեն



հաշվապահական հաշվեկշռում, քանի որ կապիտալացման ենթարկվում են միայն ֆուտբոլիստների ձեռք բերման համար կատարվող ծախսերը:

- զ) Ամորտիզացիան հաշվարկվում է ֆուտբոլիստի գրանցման ձեռք բերման պահից և դադարում է այն պահին, երբ ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի ենթակա կամ, երբ այդ ակտիվ չի ճանաչվում (օրինակ՝ գրանցումը փոխանցվում է այլ ակումբի) ցանկացածը, որը տեղի է ունեցել ավելի վաղ:
- դ) Ամեն տարի ղեկավարությունը պետք է ստուգի բոլոր ֆուտբոլիստների կապիտալացված արժեքը՝ վերջինիս նվազեցման նպատակով: Եթե յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար ստացվելիք գումարը ավելի քիչ է, քան հաշվապահական բալանսում նշված բալանսային արժեքը, ապա վերջինս պետք է կարգավորվի փոխհատուցվող գումարին համաձայն, իսկ տարբերությունը՝ արտացոլվի շահույթի և կորստի հաշվետվության մեջ՝ դիտարկվելով որպես արժեքի նվազեցում:

5. Խաղացողի ձեռքբերման տնօրինման մինիմալ հաշվապահական հաշվառման պահանջները հետևյալն են.

- ա) Այլ ակումբին տրամադրված խաղացողից ստացված շահույթը/(վնասը), որը ենթակա է արտացոլման շահույթի/(վնասի) հաշվապահական հաշվեկշռի մեջ, իրենից ներկայացնում է խաղացողի հեռացումից ստացվող և խաղացողի ձեռքբերման մնացորդային հաշվեկշռային արժեքների միջև տարբերությունը տրանսֆերի ամսաթվի դրությամբ:
- բ) Ցանկացած շահույթ, որը ստացվում է խաղացողից, ում տրանսֆերը պահպանվում է արտոնագրման թեկնածուի մոտ, չպետք է ընդգրկվի շահույթի/(վնասի) հաշվապահական հաշվեկշռի մեջ: Երկրնտրանքի մեջ չընկնելու համար, ցանկացած շահույթ, որը ստացվում է մեկ այլ կողմին տրվող խաղացողի տնտեսական և նմանատիպ այլ իրավունքների տնօրինումից պետք է մի կողմ դնել: Շահույթը կարող է ընդգրկվել շահույթի/(վնասի) հաշվապահական հաշվեկշռի մեջ միայն խաղացողի հիմնական տրանսֆերը այլ ակումբին հանձնելուց հետո:

6. Արտոնագրի թեկնածուն պետք է պատրաստի լրացուցիչ տեղեկատվություն (արտոնագրողին ներկայացնելու համար), եթե աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունում ներառված ինֆորմացիան և հաշվապահական հաշվառման մեթոդը չեն համապատասխանում տվյալ հավելվածում ներկայացված հաշվապահական պահանջներին: Լրացուցիչ ինֆորմացիան պետք է ներառի վերաձևակերպված հաշվապահական բալանսը, շահույթի և կորստի վերաբերյալ հաշվետվություն և դրանց առնչվող ցանկացած ծանոթագրություն, որը կբավարարի վերը նշված պահանջներին: Այն պետք է նաև գրություն ընդգրկի լրացուցիչ տեղեկատվության փաստաթղթում արտացոլված արդյունքների և ֆինանսական իրադրության ու աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների արդյունքների /որոնք կազմվել են համաձայն ազգային հաշվապահական հաշվառման ազգային չափանիշների/ համապատասխանության վերաբերյալ: Վերաձևակերպված ֆինանսական տեղեկատվությունը պետք է ստուգվի աուդիտորի կողմից՝ ըստ համաձայնեցված գործելակերպի:

Դ – Խաղացողի ինքնությունը սրտացոլող աղյուսակ

1. Ըստ Գ2 կետի, արտոնագրի թեկնածուները, որոնք կապիտալացնում են ֆուտբոլիստի գրանցման ձեռք բերման հետ կապված ծախսերը, պետք է կազմեն խաղացողների անձի ինքնությունը հաստատող աղյուսակ:



2. Ֆուտբոլիստների վերաբերյալ տվյալների աղյուսակը պետք է տրամադրվի աուդիտորին: Բայց, այն հարկավոր չէ ընդգրկել տարեկան ֆինանսական հաշվետվության մեջ, ինչպես նաև ներկայացնել արտոնագրողին:
3. Նվազագույն ինֆորմացիան, որը պետք է ներառվի ֆուտբոլիստների վերաբերյալ տվյալների աղյուսակում մինչև ֆինանսական հաշվետվության փակման օրը յուրաքանչյուր ֆուտբոլիստի գրանցման կապակցությամբ, հանդիսանում է հետևյալը.
 - ա) անուն և ծննդյան ամսաթիվ;
 - բ) պայմանագրի կնքման և ավարտի օրը;
 - գ) ֆուտբոլիստի գրանցման ձեռք բերման համար կատարված ուղղակի ծախսերը;
 - դ) հաշվառված ժամանակահատվածի վերջում կուտակված ամորտիզացիան;
 - ե) տվյալ ժամանակահատվածում ծախսերը/ամորտիզացիան;
 - զ) արժեքի նվազեցման հետ կապված ծախսերը տվյալ ժամանակահատվածում համար;
 - է) դուրսգրումներ /ինքնարժեք և կուտակված ամորտիզացիա/;
 - ը) զուտ գույքային արժեք;
 - թ) ֆուտբոլիստի գրանցման օտարումից ստացված շահույթ/վնաս:
4. Այն խաղացողները, որոնց մասին աղյուսակում պետք է մանրամասներ ներկայացվեն, բոլոր այն խաղացողներն են, ում գրանցումը իրականացվել է արտոնագրման թեկնածուի կողմից մրցաշրջանի ընթացքում ցանկացած պահի և ինչի արդյունքում խաղացողի(ների) ձեռքբերման որոշակի ուղղակի ծախս է առաջացել (ինչ որ պահի ժամանակահատվածի ընթացքում կամ նախորդ ժամանակահատվածների ընթացքում):
5. Հետևյալ համախառն թվերը խաղացողների անձի աղյուսակում պետք է համաձայնեցվեն հաշվեկշռում և շահույթի ու կորուստի հաշվում, աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվություններում եղած համապատասխան թվերի հետ.
 - ա) ընթացիկ ժամանակահատվածում խաղացողների գրանցման ամորտիզացիայի համախառն գումարի թիվը, ինչպես ցույց է տրված խաղացողների անձի աղյուսակում, պետք է համաձայնեցվի/հավասարակշռվի “խաղացողների գրանցման ամորտիզացիայի” թվերի հետ (բացահայտված ժամանակահատվածի շահույթի կորուստի հաշվետվության մեջ կամ դրա ծանոթություններում),
 - բ) ընթացիկ ժամանակահատվածի համար պլանավորված վատթարացումների համախառն թիվը, ինչպես ցույց է տրված խաղացողների անձի աղյուսակում, պետք է համաձայնեցվի/հավասարակշռվի “խաղացողների գրանցման վատթարացման” թվերի հետ (բացահայտված ժամանակահատվածի շահույթի և կորուստի հաշվետվության մեջ կամ դրա ծանոթություններում),
 - գ) համախառն շահույթի/վնասի թիվը խաղացողի գրանցման օտարումից, ինչպես ցույց է տրված խաղացողների անձի աղյուսակում, պետք է համաձայնեցվի/հավասարակշռվի “Շահույթի/վնասի գումարը խաղացողների գրանցման օտարումից” թվերի հետ (բացահայտված ժամանակահատվածի շահույթի վնասի հաշվետվության մեջ կամ դրա ծանոթություններում),
 - դ) խաղացողի գրանցման զուտ գրքային արժեքի համախառն թիվը, ինչպես ցույց է տրված խաղացողների անձի աղյուսակում, պետք է համաձայնեցվի/հավասարակշռվի «Ոչ նյութական արժեքներ՝ խաղացողներ» թվի հետ /բացահայտված ժամանակահատվածի հաշվեկշռի մեջ կամ դրա ծանոթություններում/:



6. Եթե արտոնագրի թեկնածուն փոխել է ֆուտբոլիստների վերաբերյալ հաշվետվության տվյալները սույն կանոնակարգում սահմանված հաշվապահական հաշվետվության պահանջներին բավարարելու նպատակով, ապա ֆուտբոլիստների անձի աղյուսակում այդ ամբողջական տվյալները պետք է համապատասխանեն տարեկան ֆինանսական հաշվետվության մեջ գետեղված փոփոխված տեղեկությանը:

Հավելված VII - Ժամկետանց վճարումների հասկացողություն

1. Վճարումները համարվում են ժամկետանց, եթե դրանք չեն մարվում ըստ համաձայնեցված ժամկետների:
2. Վճարումը չի համարվում ժամկետանց, եթե արտոնագրման թեկնածուն /օրինակ վճարող ակումբը/ մինչև մարտի 31-ը /համաձայն 49 և 50 հոդվածների/ և մինչև մայիսի 31-ը վիճակի է ապացուցել, որ.
 - ա) ամբողջովին վճարել է համապատասխան գումարը
 - բ) կնքել է պայմանագիր, որը գրավոր ձևով ընդունվել է կրեդիտորի կողմից, և որով երկարաձգվում է վճարման վերջնաժամկետը /նշում. Եթե կրեդիտորը չի պահանջել վճարումը, դա չի նշանակում, որ վճարման ժամկետն ինքնին երկարաձգվել է/, կամ
 - գ) հայց է ներկայացրել, որն ըստ ազգային օրենսդրության քննարկման է դրվել համապատասխան մարմինների կողմից, կամ ժամկետանց վճարումի վերաբերյալ գործընթաց է սկսել ազգային կամ միջազգային ֆուտբոլային մարմիններում կամ համապատասխան վերաքննիչ դատարանում: Եթե, այնուամենայնիվ, ՀՀՖ Ակումբների Արտոնագրման մարմինը կհամարի, որ այդ հայցը ներկայացվել է միայն մի նպատակով, այն է՝ խուսափել տվյալ կանոնակարգով սահմանված ժամկետներում պարտքը մարելուց /այսինքն՝ ժամանակ շահել/, համապատասխան գումարը առաջվա պես կհամարվի ժամկետանց պարտք, կամ
 - դ) նա համաձայն ՀՀ օրենսդրության համապատասխան մարմնին, ազգային կամ միջազգային ֆուտբոլային մարմիններին կամ համապատասխան արբիտրաժային դատարանին է բողոքարկել ժամկետանց վճարումի վերաբերյալ հայցը կամ գործընթացը, որը ներկայացվել է իր դեմ կրեդիտորի կողմից, և ի վիճակի է ՀՀՖ Ակումբների Արտոնագրման մարմնին խելամտորեն ապացուցել, որ ներկայացված հայցը կամ սկսված գործընթացը իսկապես անհիմն է: Բայց եթե ՀՀՖ Ակումբների Արտոնագրման համապատասխան մարմինը համարի բերված փաստարկները անհիմն, ապա գումարը կհամարվի ժամկետանց:

Բ – “Վճարումները համարվում են ժամկետանց, եթե նույնիսկ կրեդիտորը չի պահանջել վճարում” կանոնի բացատրություն

1. Վճարումները համարվում են ժամկետանց, եթե դրանք չեն մարվել ըստ համաձայնեցված պայմանների, եթե նույնիսկ կրեդիտորը չի պահանջել վճարումը: Այս սկզբունքը վերաբերվում է գրավոր պայմանագիր ստորագրած հատուկ իրավաբանական անձանց: Այս սկզբունքը դժվար է կիրառել պայմանագիր չստորագրած այնպիսի իրավաբանական անձանց նկատմամբ, ինչպիսիք են մարզումներ կան համերաշխության փոխհատուցումներ ստանալու իրավունք ունեցող ակումբները:



2. Արտոնագրման թեկնածուի նկատմամբ պատժամիջոցներ չեն կիրառվի, եթե նա կարողանա արտոնագրողին տալ ընդունելի բացատրություն առ այն, որ նա վճարում չի կատարել խաղացողի և ակումբի հետ կապ հաստատել չկարողանալու պատճառով: Հետևյալ օրինակը մանրամասն բացատրում է այս իրավիճակը.

Ա խաղացողը՝ ծնված 15.08.1990թ.-ին, գրանցված է եղել Հայաստանում՝ X սիրողական ակումբում 01.07.1998թ.-30.06.2006թ., և ապա 01.07.2006թ.-30.06.2009թ.՝ հայաստանյան Z սիրողական ակումբում: 01.07.2009թ.ին նա ստորագրում է իր առաջին աշխատանքային պայմանագիրը ռուսաստանյան Y ակումբի հետ: Z և Y ակումբների միջև կնքված տրանսֆերային պայմանագիրը նախատեսում է վճարում երկու մասով (առաջինը պայմանագրի ստորագրելուց հետո, երկրորդը՝ 30.11.2009թ.-ին):

Այս օրինակում վաճառող Z ակումբը և գնող Y ակումբը հանդիսանում են իրավաբանական անձինք, որոնք ստորագրել են տրանսֆերային պայմանագիրը: Համապատասխանաբար, Y ակումբը պետք է վճարի Z ակումբին տրանսֆերի համար համաձայնեցված գումարը՝ որոշված վերջնաժամկետում: Այս օրինակում Y ակումբը կատարում է առաջին վճարումը, սակայն չի կատարում երկրորդ վճարումը կանխավ պայմանադրված վերջնաժամկետում: Այս դեպքում, արտոնագրողը պետք է վճարման երկրորդ մասը համարի ժամկետանց վճարում, նույնիսկ եթե վճարումը չի պահանջվել Z ակումբի կողմից:

Համաձայն ՖԻՖԱ-ի Խաղացողների Կարգավիճակի և Տրանսֆերների Կանոնակարգի, վերը նշված տրանսֆերը ենթադրում է մարզման փոխհատուցում և համերաշխության մուծումների իրականացում Y ակումբի կողմից: ՖԻՖԱ-ի կանոնակարգը նախատեսում է, որ Y ակումբը պատասխանատու է ժամկետանց վճարումը հաշվարկելու և 30 օրվա ընթացքում վճարելու համար (նոր ասոցիացիայի հետ խաղացողի գրանցման օրվանից, կամ վճարման ամսաթվից 30 օրվա ընթացքում)՝ խաղացողի կարիերայի պատմության համապատասխանությամբ:

Այս օրինակում Y ակումբը սահմանված վերջնաժամկետում X ակումբին չի վճարում մարզման փոխհատուցումները և համերաշխության մուծումները: Համաձայն հոդված 48-ում սահմանված չափանիշների, պայմանագիրը չստորագրած երրորդ իրավաբանական անձի շահառուներին կատարվող վճարումները համարվում են ժամկետանց, եթե չեն վճարվել 30 օրվա ընթացքում: Վճարումը չի համարվի ժամկետանց, եթե Y ակումբը կարողանա արտոնագրողին տալ ընդունելի բացատրություն առ այն, որ նա չի կարողացել կապ հաստատել խաղացողի և նրան մարզած X ակումբի միջև, և որ նա իր ուժերի սահմաններում այդ ակումբի հետ կապ հաստատելու համար արել է ամեն ինչ:



Հավելված VIII - Արտոնագրողի կողմից անցկացվող ֆինանսական չափանիշների և պահանջների գնահատման գործընթաց

Ա – Սկզբունք

Հոդված 10-ում նշված ֆինանսական չափանիշների հետ համապատասխանությունը ստուգելու գնահատման գործընթացը վերաբերվում է գնահատման այն հատուկ գործողություններին, որ պետք է ձեռնարկի արտոնագրողը՝ ստորև նշված ձևով:

Բ - Տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորի հաշվետվության գնահատում

1. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտոնագրողը պետք է իրականացնի գնահատման հետևյալ նվազագույն գործընթացները.
 - ա) սահմանել, արդյոք ընտրված հաշվետու կազմակերպություն/ները համապատասխանում է/են ակումբի արտոնագրման նպատակներին;
 - բ) գնահատել ներկայացված ինֆորմացիան /տարեկան և միջակա ֆինանսական հաշվետվություններ, որոնք կարող են նաև ներառել լրացուցիչ տեղեկություն/, որը հիմք կհանդիսանա արտոնագրման որոշում կայացնելու համար;
 - գ) կարող և ուսումնասիրել տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև աուդիտորի հաշվետվությունը դրանց վերաբերյալ;
 - դ) ուշադրություն դարձնել աուդիտորի հաշվետվության և/կամ եզրակացության ցանկացած փոփոխությունից ծագած հետևանքներին (համեմատած առանց փոփոխությունների եզրակացության սովորական ձևին) և/կամ անբավարարություններին՝ համեմատած բացահայտումների և հաշվապահական հաշվառման նվազագույն պահանջների՝ համաձայն ստորև նշված պարագրաֆ 2-ի:
2. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորի հաշվետվությանը ծանոթանալուց հետո, արտոնագրողը պետք է այն գնահատի՝ համաձայն ստորև ներկայացվող կետերի.
 - ա) եթե աուդիտորի եզրակացությունը իրենից ներկայացնում է հաստատական կարծիք, դա բավարար հիմք է հանդիսանում ՈԻԵՖԱ-ի արտոնագրի տրամադրման համար;
 - բ) Եթե հաշվետվությունում աուդիտորը մերժում է եզրակացության տրամադրումը, կամ այն պարունակում է բացասական կարծիք, ապա ՈԻԵՖԱ-ի արտոնագրի տրամադրումը մերժվում է մինչև աուդիտորի հաջորդ դրական եզրակացության տրամադրումը /տվյալ ֆինանսական տարվա կտրվածքով նվազագույն պահանջները բավարարող ֆինանսական հաշվետվությունների այլ փաթեթի կապակցությամբ/ և հավանությունը արտոնագրողի կողմից:
 - գ) Եթե կազմակերպության գործունեության շարունակելիության ենթադրության վերաբերյալ աուդիտորի եզրակացությունը պարունակում է հարցի հատուկ շեշտադրում /ակցենտ/ կամ հանդիսանում է պայմանական, ապա ՈԻԵՖԱ-ի արտոնագրի տրամադրումը պետք է մերժվի, մինչև.
 - i) կտրամադրվի աուդիտորի հաջորդ եզրակացությունը տվյալ ֆինանսական տարվա կապակցությամբ, որը չի պարունակի կազմակերպության գործունեության շարունակելիության վերաբերյալ հարցի հատուկ շեշտադրում կամ չի հանդիսանա պայմանական; կամ



- ii) կտրամադրվեն լրացուցիչ փաստաթղթեր, որոնք կհավաստիացնեն արտոնագրվող թեկնածուի կարողությունը նվազագույնը մինչև արտոնագրման մրցաշրջանի ավարտը հանդես գալու որպես գործունեությունը չընդհատող կազմակերպություն, որի նպատակով հայտ է ներկայացվել, և որոնք էլ արտոնագրողի գնահատումից հետո ճանաչվում են բավարար: Լրացուցիչ հավաստիացնող փաստաթղթերը ներառում են, մասնավորապես, հոդված 52-ում նշված տեղեկատվությունը / ապագայ ֆինանսական տեղեկատվություն/:
- դ) Եթե աուդիտորի եզրակացությունը պարունակում է հարցի հատուկ շեշտադրում /ակցենտ/ գործունեության շարունակելիության ենթադրությանը, ապա ակումբի արտոնագրման նպատակով արտոնագրողը պետք է հաշվի առնի այն բոլոր հետևանքները, որոնց կհանգեցնեն եզրակացությունում փոփոխությունների ներառումը: ՈՒԵՖԱ-ի արտոնագրի տրամադրումը կարող է մերժվել, բացի այն դեպքերից, երբ կներկայացվեն լրացուցիչ հավաստիացնող փաստաթղթեր և արտոնագրողից գնահատումից հետո կճանաչվեն բավարար: Աուդիտի եզրակացության մեջ փոփոխություններ կատարելու պատճառներից է կախված, թե ինչ լրացուցիչ փաստաթղթեր կպահանջի արտոնագրողը:
- ե) Եթե աուդիտորի եզրակացությունը հղում է կատարում 51-րդ հոդվածի 2 (դ) կետում սահմանված ցանկացած իրավիճակի, ապա արտոնագիրը պետք է մերժվի:
3. Եթե արտոնագրման թեկնածուն ներկայացնում է լրացուցիչ ինֆորմացիա, ապա արտոնագրողը պարտավոր է գնահատել նաև աուդիտորի հաշվետվությունը լրացուցիչ ինֆորմացիայի համաձայնեցված ընթացակարգերի վերաբերյալ: Արտոնագրի տրամադրումը կարող է մերժվել, եթե աուդիտորի եզրակացությունում նշվում են բացահայտված սխալներ և/կամ բացառություններ:

Գ - Ակումբների նկատմամբ ժամկետանց վճարումների գնահատում

1. Այլ ակումբների նկատմամբ ժամկետանց վճարումների առնչությամբ արտոնագրողը պետք է որոշի հետևյալը.
- ա) ինքնուրույն անցկացնել արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացված տեղեկատվության գնահատում /նման դեպքում նա պետք է գնահատումը կատարի համաձայն ստորև բերվող պարագրաֆ 2-ի/, կամ;
- բ) դիմել անկախ աուդիտորի՝ կատարելու գնահատման ընթացակարգը: Նման դեպքում նա պարտավոր է ստուգել աուդիտորի եզրակացությունը և, մասնավորապես, հավաստիանա, որ աուդիտորի կողմից բերվող օրինակները համոզիչ են: Արտոնագրողը, անհրաժեշտության դեպքում, կարող է կատարել նաև լրացուցիչ գնահատում, օրինակ՝ մեծացնել բերվող օրինակների քանակը և/կամ արտոնագրման թեկնածուից պահանջել լրացուցչ ապացուցող փաստաթղթեր:
2. Եթե գնահատումն անցկացնում է արտոնագրողը, ապա վերջինս պետք է գնահատի արտոնագրման թեկնածուի կողմից տրամադրված ամբողջ ինֆորմացիան, մասնավորապես՝ տրանսֆերին վերաբերող վճարումների աղյուսակը և դրան կից հավաստիացնող փաստաթղթերը՝ ինչպես նշվում է ստորև: Եթե գնահատումն անցկացնում է աուդիտորը, ապա վերջինս կարող է ձեռնարկել նմանատիպ քայլեր.
- ա) Տրանսֆերի վճարումների աղյուսակում ստուգել ընդհանուր գումարի համապատասխանությունը տարեկան կամ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում /դեկտեմբերի 31-ի դրությամբ/ «Ֆուտբոլիստների տրանսֆերների վերաբերյալ կրեդիտորային պարտքեր» հոդվածում նշված գումարին:



- բ) Ստուգել հաշվարկների ճշգրտությունը տրանսֆերներին վերաբերող վճարումների աղյուսակում:
- գ) Կատարել, ընտրության սկզբունքով կամ ամբողջը, ֆուտբոլիստների տրանսֆերների/վարձակալության պայմանագրերի ստուգումներ՝ համեմատելով դրանք տրանսֆերներին վերաբերող վճարումների աղյուսակում զետեղված տեղեկությանը հատկանշել ընտրված տրանսֆերները /վարձակալությունները:
- դ) Կատարել, ընտրության սկզբունքով կամ ամբողջը, տրանսֆերային վճարումների ստուգումներ՝ համեմատելով դրանք տրանսֆերներին վերաբերող պարտքերի աղյուսակում զետեղված տեղեկությանը՝ հատկանշել ընտրված վճարումները:
- ե) Եթե տրանսֆերներին վերաբերող վճարումների աղյուսակում կա պարտք, որը պետք է վճարվի մինչև մարտի 31-ը, որը վերաբերվում է մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 31-ը տեղի ունեցած տրանսֆերին, ապա մինչև մարտի 31-ը պետք է հավաստիանալ, որ
 - i) համաձայնության եք եկել ըստ Հավելված viii (2բ), կամ
 - ii) ծագել է վեճ/հայց ըստ Հավելված viii (2գ կամ դ)
- զ) Ուսումնասիրել ամբողջ կամ մի քանի բանկային հաշիվների քաղվածքներ ի աջակցություն վճարումների:
- է) Անհրաժեշտության դեպքում՝ ստանալ և ստուգել բոլոր փաստաթղթերը, այդ թվում համապատասխան ակումբների հետ կնքված համաձայնագրերը և/կամ իրավասու մարմնի հետ նամակագրությունը, որը հաստատում է ե i/ և/կամ ե ii/ կետերում նշված հայտարարագրերը:

Դ - Աշխատակիցների և սոցիալական/հարկային մարմինների նկատմամբ ծագած ժամկետանց վճարումների գնահատում

1. Աշխատակիցների և սոցիալական/հարկային մարմինների նկատմամբ ժամկետանց վճարումների առնչությամբ արտոնագրողը կարող է որոշել.
 - ա) ինքնուրույն անցկացնել արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացված տեղեկատվության գնահատում /նման դեպքում նա պետք է գնահատումը կատարի համաձայն ստորև բերվող պարագրաֆ 2-ի/, կամ;
 - բ) դիմել անկախ աուդիտորի՝ կատարելու գնահատման ընթացակարգը: Նման դեպքում նա պարտավոր է ստուգել աուդիտորի եզրակացությունը և, մասնավորապես, հավաստիանալ, որ աուդիտորի կողմից բերվող օրինակները համոզիչ են: Արտոնագրողը, անհրաժեշտության դեպքում, կարող է կատարել նաև լրացուցիչ գնահատում, օրինակ՝ մեծացնել բերվող օրինակների քանակը և/կամ արտոնագրի թեկնածուից պահանջել լրացուցիչ ապացուցող փաստաթղթեր:
2. Արտոնագրողը պետք է գնահատի արտոնագրման թեկնածուի կողմից տրամադրված ամբողջ ինֆորմացիան, մասնավորապես՝ աշխատակիցների ցուցակը և դրան կից հավաստիացնող փաստաթղթերը՝ ինչպես նշվում է ստորև: Եթե գնահատումն անցկացնում է աուդիտորը, ապա վերջինս կարող է ձեռնարկել նմանատիպ քայլեր:
 - ա) Ստանալ ղեկավարության կողմից նախապատրաստված աշխատակիցների ցուցակ;
 - բ) Ստանալ և ստուգել պատահական սկզբունքով ընտրված աշխատակիցների նամակ-հաստատումները՝ համեմատելով այն աշխատակիցների ցուցակում նշված ինֆորմացիային:



- զ) Եթե ըստ արտոնագրողի՝ առկա է պարտք, որը պետք է վճարվի մինչև մարտի 31-ը, որը վերաբերվում է աշխատողների պայմանագրային և իրավական պարտականությունների հետ կապված վճարումներին, որը ծագել է մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 31-ը ապա մինչև մարտի 31-ը պետք է հավաստիանալ, որ.
- i) համաձայնության եք եկել ըստ Հավելված viii (2բ), կամ
- ii) ծագել է վեճ/հայց ըստ Հավելված viii (2գ կամ դ)
- դ) Անհրաժեշտության դեպքում՝ ստանալ և ստուգել բանկային հաշիվների քաղվածքները, որոնք հաստատում են վերոգրյալ ե i/ կետում նշվածը:
- ե) Անհրաժեշտության դեպքում՝ ստանալ և ստուգել բոլոր փաստաթղթերը, այդ թվում համապատասխան աշխատակցի հետ կնքված պայմանագրերը և/կամ իրավասու մարմնի հետ նամակագրությունը, որը հաստատում է գ i/ և/կամ գ ii/ կետերում նշված հայտարարագրերը:
3. Արտոնագրողը պետք է գնահատի արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացված տեղեկատվությունը, մասնավորապես սոցիալական և հարկային մարմինների վճարումներին վերաբերող բոլոր հաստատող փաստաթղթերը, որոնք առնչվում են արտոնագրման թեկնածուի աշխատակիցների նկատմամբ պայմանագրային և իրավական պարտականություններին: Նա պետք է ձեռնարկի, մասնավորապես, հետևյալ քայլերը.
- ա) Ձեռք բերել ղեկավարության կողմից պատրաստված սոցիալական/հարկային աղյուսակը:
- բ) Համաձայնեցնել սոցիալական/հարկային աղյուսակում առկա ընդհանուր վճարումը դեկտեմբերի 31-ի դրությամբ տարեկան կամ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունում առկա “սոցիալական/հարկային մարմինների վճարումներին” գումարի հետ:
- գ) Ձեռք բերել համապատասխան աջակցող փաստաթղթեր:
- դ) Եթե, ըստ արտոնագրողի, մարտի 31-ի դրությամբ գոյություն ունի պարտք, որը վերաբերվում է աշխատողների պայմանագրային և իրավական պարտականությունների հետ կապված սոցիալական/հարկային մարմիններին տրվող վճարներին, որոնք առաջացել են մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 31-ը, ապա մինչ՝ մարտի 31-ը պետք է հավաստիանալ, որ.
- i) համաձայնության եք եկել ըստ Հավելված viii (2բ), կամ
- ii) ծագել է վեճ/հայց ըստ Հավելված viii (2գ կամ դ)
- ե) Ուսումնասիրել ամբողջ կամ մի քանի բանկային հաշիվների քաղվածքներ ի աջակցություն վճարումներին:
- զ) Անհրաժեշտության դեպքում՝ ստանալ և ստուգել բոլոր փաստաթղթերը, այդ թվում համապատասխան սոցիալական/հարկային մարմինների հետ կնքված պայմանագրերը և/կամ իրավասու մարմնի հետ նամակագրությունը, որը հաստատում է դ i/ և/կամ դ ii/ կետերում նշված հայտարարագրերը:

Ե - Դիմում-նամակների գնահատում

1. Արտոնագրողը պետք է կարդա դիմում-նամակը և հաշվի առնի տնտեսական կարևոր նշանակության որևէ իրադարձության կամ պայմանների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև արտոնագրման թեկնածուի կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, ապագայի վերաբերյալ ֆինանսական ինֆորմացիան և ցանկացած այլ



հավաստիացնող փաստաթղթեր: Արտոնագրողը կարող է փոխանցել գնահատում անցկացնելու իրավունքը առույիտորին:

2. Արտոնագրողը պետք է գնահատի ակումբի կարողությունը նվազագույնը մինչև արտոնագրման մրցաշրջանի ավարտը հանդես գալու որպես գործունեությունը չընդհատող կազմակերպություն, որի նպատակով հայտ է ներկայացվել: ՈԻԵՖԱ-ի արտոնագրի տրամադրումը պետք է մերժվի, եթե ֆինանսական տեղեկատվության գնահատում անցկացնելուց հետո արտոնագրողը համարում է, որ արտոնագրման թեկնածուն չի կարող շարունակել իր գործունեությունը, որպես գործունեությունը չընդհատող կազմակերպություն, մինչև այն մրցաշրջանի ավարտը, որի համար հայտ է ներկայացրել:
3. Եթե արտոնագրման թեկնածուն (կամ ՀՀՖ-ի գրանցված անդամը, որը ունի պայմանագրային հարաբերություններ արտոնագրման թեկնածուի հետ համաձայն 12-րդ հոդվածի) կամ էլ հաշվետու խմբում ընդգրկված արտոնագրման թեկնածուի ցանկացած մայր կազմակերպություն փնտրում է/էր կամ ստանում է/էր պաշտպանություն իր կրեդիտորներից համաձայն օրենքների և կանոնակարգերի (ներառյալ կամավոր և պարտադիր վարչական գործընթացները) արտոնագրման մրցաշրջանից 12 ամիս առաջ, ապա արտոնագիրը պետք է մերժվի: Երկրորդանքի մեջ չընկնելու համար, արտոնագիրը պետք է մերժվի, անգամ եթե ներգրավված կազմակերպությունը այլևս չի ստանում պաշտպանություն իր կրեդիտորներից այն ժամանակ, երբ կայացվում է արտոնագրման որոշումը:

2 - Ապագա ֆինանսական տեղեկատվության գնահատում

1. Ապագա ֆինանսական տեղեկատվության հետ կապված՝ արտոնագրողը պետք է գնահատի, թե արդյոք տեղի է ունեցել հոդված 52-ում նշված ցուցանիշի խախտում, թե ոչ: Եթե ցուցանիշը խախտվել է, ապա արտոնագրողը պետք է մանրագնի գնահատի ապագայի վերաբերյալ ֆինանսական տեղեկատվությունը՝ համաձայն ստորև բերվող պարագրաֆ 2-ի:
2. Առույիտորի կողմից անցկացվող գնահատման գործընթացը պետք է նվազագույնը ներառի հետևյալը.
 - ա) ապագա ֆինանսական տեղեկատվությունում հաշվարկների ճշգրտության ստուգում;
 - բ) ղեկավարության հետ քննարկումների և ապագա ֆինանսական տեղեկատվության ստուգման արդյունքում բացահայտել, թե արդյոք ապագա ֆինանսական տեղեկատվությունը իրականում պատրաստվել է նկարագրված ենթադրությունների և ռիսկային գործոնների հիման վրա;
 - գ) ապագա ֆինանսական տեղեկատվությունում ներառված սկզբնական ժամանակաշրջանի հաշվեկշռի համապատասխանության ստուգում՝ առույիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվության կամ միջակա ժամանակաշրջանի համար ստուգված ֆինանսական հաշվետվության /եթե նման հաշվետվություն միջակա ժամանակաշրջանի համար տրամադրվել է/ հաշվապահական հաշվեկշռի հետ; և
 - դ) եթե կիրառելի է, ուսումնասիրել համապատասխան աջակցող փաստաթղթեր, ներառյալ օրինակ հովանավորների հետ պայմանագրեր, բանկային հարմարություններ, բաժնետիրական կապիտալի ավելացում, բանկի տրամադրած երաշխիքներ և խորհրդի/կոմիտեի նիստերի քաղվածքներ:
 - ե) ստուգել, թե արդյոք ապագա ֆինանսական տեղեկատվությունը պաշտոնապես հաստատվել է արտոնագրման թեկնածուի գործադիր մարմնի կողմից, թե ոչ:
3. Արտոնագրողը պետք է գնահատի ակումբի կարողությունը շարունակել իր գործունեությունը նվազագույնը մինչև արտոնագրման մրցաշրջանի ավարտը՝ որպես անընդմեջ գործող



կազմակերպություն, որի համար հայտ է ներկայացվել (այսինքն՝ ՈԻԵՖԱ-ի արտոնագրի տրամադրումը պետք է մերժվի, եթե ֆինանսական տեղեկատվության գնահատում անցկացնելու հետո արտոնագրողը համարում է, որ արտոնագրման թեկնածուն չի կարող շարունակել իր գործունեությունը, որպես գործունեությունը չընդհատող կազմակերպություն, մինչև արտոնագրման մրցաշրջանի ավարտը, որի համար հայտ է ներկայացվել):

Է – Ժամկետանց վճարումների գնահատում- լրացուցիչ

1. Լրացուցիչ ժամկետանց վճարումների գնահատման պահանջների հետ կապված (դեպի ֆուտբոլային ակումբներ, աշխատողներ և սոցիալական/հարկային մարմիններ)՝ արտոնագրողը պետք է նվազագույնը կատարի հետևյալ գնահատման գործընթացը.
 - ա) ամբողջությամբ կարգա արտոնագրման թեկնածուի ամբողջական վճարումների մասին տեղեկատվությունը և պարզաբանումներ կատարի, եթե կա որևէ ոչ ամբողջական/ոչ ճշգրիտ տեղեկատվություն, որը կարող է պայմանավորված լինել արտոնագրման թեկնածուի գիտելիքով՝ ստացված ակումբների արտոնագրման և/կամ այլ համապատասխան աղբյուրներից:
 - բ) Տրանսֆերների վճարումների մասին տեղեկատվության դեպքում՝ հաստատել ներկայացված խաղացողների ցուցակի ամբողջականությունը արտոնագրման մրցաշրջանը և գնահատման օրը նախորդող հուլիսի 1-ի դրությամբ խաղացողների գրանցման նպատակով ներկայացված տեղեկատվության հետ:

Հավելված IX - Խաղացողների բժշկական հետազոտություն

(ՈԻԵՖԱ-ի արտոնագրման բացատրագիր հ. 11)

1. Խաղացողների բժշկական սպասարկում

ՈԻԵՖԱ-ն՝ իր Բժշկական Կոմիտեի հետ համատեղ, արտոնագրողներին տրամադրում է լրացուցիչ ուղեցույց՝ Հոդված 19-ի (Ֆուտբոլիստների բժշկական սպասարկում) վերաբերյալ: Այս չափանիշը հասկանալի է հետևյալը.

Արտոնագրման թեկնածուն պարտավոր է ապահովել իր գլխավոր թիմի կազմում հանդես եկող ֆուտբոլիստների ամենամյա բժշկական հետազոտությունը:

1.1 Ներածություն

Սույն փաստաթղթում ուսումնասիրվում են հետևյալ հարցերը.

- ինչպիսի՞ խաղացողներ են ընկնում այս չափանիշի ազդեցության տակ (1.2);
- ինչպե՞ս կարող են ակումբները հաստատել այս չափանիշի կատարումը (1.3);
- ինչպիսի՞ն են տարբեր մասնակիցների պարտականությունները՝ այս չափանիշի համաձայն (1.4);
- ի՞նչ են իրենցից ներկայացնում խաղացողների բժշկական քարտերը (1.5);
- ի՞նչ են իրենցից ներկայացնում բժշկական ստուգումները, ու ի՞նչ հաճախականությամբ խաղացողները պետք է անցնեն դրանք՝ համաձայն նվազագույն պահանջների (1.6):

Ըստ չափանիշի՝ սիրտ-անոթային համակարգի ստուգումը հանդիսանում է ամենամյա բժշկական հետազոտության մաս: Սակայն ՈԻԵՖԱ-ի բժշկական կոմիտեի հետ խորհրդակցությունից հետո հաստատվել է, որ ակումբների արտոնագրման նպատակով գլխավոր թիմի յուրաքանչյուր խաղացող



պետք է անցնի բժշկական հետազոտություն (նվազագույն բովանդակությունը տես 1.6 բաժնում՝ ստորև), բայց սիրտ-անոթային համակարգի ամենամյա հետազոտություն (տես կետ 1.6Դ) անցկացնել չի պահանջվում գլխավոր թիմի յուրաքանչյուր խաղացողի համար:

Դրա փոխարեն հաստատվել է, որ ակումբի գլխավոր թիմում հանդես եկող յուրաքանչյուր խաղացողի անձնական բժշկական քարտը պետք է ներառի տեղեկություններ նվազագույնը մեկ էլեկտրոկարդիոգրամայի եւ մեկ ուլտրաձայնային կարդիոգրաֆիայի մասին: Գլխավոր թիմում հանդես եկող պատանեկան թիմերի խաղացողները պետք է անցնեն այդ երկու կարդիոլոգիական հետազոտությունները մինչ իրենց 21 տարին լրանալը (տես բաժին 1.6 Գ):

Բացառությամբ կարդիոլոգիական (1.6Գ) և լաբորատոր (1.6Դ) հետազոտությունների, այդ ստուգումները համարվում են պարտադիր, կարող են իրականացվել առանց հատուկ սարքավորումների օգտագործման, ինչպես նաեւ չպետք է պահանջեն լրացուցիչ մեծ ծախսեր:

Բացի նվազագույն պարտադիր բժշկական ստուգումների, 1.6 բաժնում նաեւ նշվում են մի քանի լրացուցիչ հետազոտություններ, որոնք անհրաժեշտ են անցկացնել առկա առաջնային փորձի հիման վրա: Բժշկական հետազոտությունների արդյունքների եւ բժշկի մասնագիտական եզրակացության հիման վրա՝ նշանակվում են լրացուցիչ ստուգումներ առ այն, որպեսզի ապահովվի խաղացողի աղեկվատ բժշկական սպասարկումը հետագայում: Սակայն այդ լրացուցիչ բժշկական ստուգումները դուրս են այս չափանիշի շրջանակներից:

1.2 Հոդված 19-ում սահմանված չափանիշին առնչվող խաղացողները

Հոդված 19-ի համաձայն՝ գլխավոր թիմի կազմում «թույլատրվում է» հանդես գալ բոլոր այն խաղացողներին, ովքեր.

- ա) կնքել են հատուկ պայմանագիր գլխավոր թիմում խաղի համար (կամ)
- բ) գրանցված են ակումբի գլխավոր թիմի պաշտոնական ցուցակում, ինչպես նաեւ
- գ) տեղափոխված են ակումբի գլխավոր թիմ արտոնագրերի շնորհման մրցաշրջանին նախորդող ազգային առաջնությունների մրցաշրջանի անցկացման ընթացքում:

1.3 Հոդված 19-ում սահմանված չափանիշի հետ համապատասխանելիություն

Հոդված 19-ում սահմանված չափանիշին համապատասխանելու համար արտոնագրման թեկնածու ակումբները մարզական չափանիշին վերաբերող փաստաթղթերի հետ միասին արտոնագրողին պետք է ներկայացնեն հետեւյալ հաստատումը:

1. Արտոնագրողի կողմից սահմանված պարտադիր բժշկական հետազոտությունները պատշաճ ձեւով անցել են ակումբի գլխավոր թիմում հանդես եկող բոլոր խաղացողները:

2. Խաղացողների բժշկական քարտերը նորացված են:

Գրավոր դիմումը ստորագրվում է ակումբի՝ փաստաթղթեր ստորագրելու համար լիազորված անձի կողմից, ինչպես նաեւ ակումբի բժշկի կողմից /նշանակված՝ համաձայն ՀՀՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի հոդված 32-ի պահանջների/՝ արտոնագրողին ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետի 1 ամսից ոչ շուտ:

Նորմատիվների փաթեթում (փաստաթուղթ TS.03.1) պարունակվում է դիմումի ձեւ, որը արտոնագրողը կարող է փոխանցել ակումբներին:



1.4 Պարտականություններ

1.4.1 Արտոնագրողը

Սույն փաստաթղթի համաձայն (տես բաժին 1.6) իրականացվող պարտադիր նվազագույն բժշկական հետազոտությունների եւ նրանց հաճախականության հիման վրա յուրաքանչյուր արտոնագրող ինքնուրույն պետք է սահմանի բժշկական հետազոտությունների տեսակը, որոնք պետք է անցնեն արտոնագրման թեկնածու ակումբի գլխավոր թիմի խաղացողները:

Այս առումով արտոնագրողները իրավունք ունեն.

- ա) սահմանել լրացուցիչ պարտադիր ստուգումներ;
- բ) փոխարինել ստուգման կարգավիճակը ոչ պարտադիրից պարտադիրի;
- գ) ավելացնել ակումբների այլ թիմերի կազմում խաղացողների քանակը:

Այդ պատճառով արտոնագրողը պարտավոր է իրականացնել հետևյալ գործողությունները:

- Ճշգրտորեն սահմանել բժշկական ստուգումների նվազագույն պարտադիր քանակը, որոնք անցկացվում են ակումբների բժիշկների կողմից:
- Ճշգրտորեն սահմանել այն խաղացողների շրջանակը, որոնց անհրաժեշտ է նորացնել իրենց բժշկական քարտերը առ այն, որպեսզի ակումբը համապատասխանի չափանիշին (ակումբի գլխավոր կամ այլ թիմերի խաղացողներ):
- Սահմանել դիմումի ձևը, որը պետք է արտահայտի համապատասխանությունը չափանիշներին /տես 1.3/ և ներառել այն 2008/09 խաղաշրջանի համար ակումբներին տրվելիք արտոնագրման փաստաթղթերի մեջ:
- Ժամանակին տեղեկացնել ակումբներին և նրանց բժշկական անձնակազմին:

1.4.2 Ակումբ / Ակումբի բժիշկ

Ակումբի բժիշկը պատասխանատվություն է կրում այս չափանիշի ազդեցության տակ ընկնող խաղացողների համար հաստատված պարտադիր բժշկական հետազոտությունների անցկացման համար: Որպես կանոն, այդ հաստատված ստուգումները պետք է անցկացնի բժիշկը, սակայն խաղացողները կարող են ուղարկվել այլ մասնագետի մոտ:

Բացի այդ, բժիշկը պատասխանատվություն է կրում խաղացողների բժշկական քարտերի նորացման և այդ տեղեկատվության գաղտնապահության համար, ինչպես նաև պատշաճ հրահանգների համար՝ իրեն փոխարինած բժշկին/օգնականին ակումբների արտոնագրման գործող գործընթացների վերաբերյալ:

1.4.3 Ազգային ասոցիացիայի բժշկական փորձագետները

Ազգային ասոցիացիաներին խորհուրդ է տրվում կատարել պարբերական բժշկական խորհրդատվական այցելություններ ակումբներ /օրինակ՝ ասոցիացիայի բժշկական կոմիտեի անդամների կողմից/՝ գործող պահանջների և ընթացակարգերի վերաբերյալ փորձի փոխանակման նպատակով:

1.5 Խաղացողների բժշկական քարտեր

Խաղացողի բժշկական քարտի տակ, որպես օրենք, հասկացվում է նախկինում անցկացված բժշկական հետազոտությունների արդյունքներով եւ հաշվետվություններով ֆայլ: Այդ ֆայլի պարունակությունը կրում է գաղտնի բնույթ, եւ ակումբի բժիշկը պարտավոր է պահպանել այդ գաղտնիությունը:



Ինչպես նշվեց, Հոդված 19-ում սահմանված չափանիշներին համապատասխանելու նպատակով ակումբը պետք է ներկայացնի գրավոր հաստատում առ այն, որ գլխավոր թիմի կազմում հանդես եկող խաղացողների բժշկական քարտերը մշտապես նորացվում են:

1.6 Հետազոտություններ և թեսթեր

Հետևյալ աղյուսակներում (Ա-Է) բերվում է տեղեկատվություն անհրաժեշտ հետազոտությունների եւ թեսթերի մասին, որոնք պահանջվում է անցնել պարտադիր եւ կամավոր հիմքերով նշված ժամանահատվածի շրջանակներում (օրինակ, ամենամյա):

Ա) Ֆուտբոլիստի անձնական տվյալներ	
Ֆուտբոլիստի անձնական տվյալներում նշվում է բժշկական հետազոտության անցկացման հիմքը: Դրանք պետք է փաստաթղթայնացվեն եւ նորացվեն խաղացողի ամբողջ մասնագիտական կարերայի ընթացքում: Հիմնվելով առաջնային փորձի վրա ֆուտբոլի բնագավառում մի շարք բժշկական հետազոտությունների անցկացումից հետո՝ ՈԻԵՖԱ-ն խորհուրդ է տալիս ստեղծել այնպիսի գրանցումներ, որոնք օժանդակություն կցուցաբերեն բժիշկներին ներքին ստուգումների անցկացման ընթացքում:	
1. Նախորդ մրցաշրջանում անցկացրած խաղերի ընդհանուր քանակը /ընկերական խաղերը ներառյալ/	Խորհուրդ է տրվում ամենամյա իրականացման համար
2. Հիմնական ոտք	
3. Դիրքը խաղադաշտում	
Բ/ Ֆուտբոլիստի բժշկական պատմություն և ժառանգականություն	
“Բժշկական պատմություն և ժառանգականություն” գլխավոր մասը հանդիսանում է ֆուտբոլիստների բժշկական գրառումների ելակետ: Կարևոր է, որպեսզի բոլոր ստուգումների արդյունքները թարմացվեն ֆուտբոլիստի գործունեության ողջ ընթացքում:	
1. Ընտանեկան պատմություն /1-ին սերունդ, այսինքն ծնողներ, եղբայրներ և քույրեր/ ա/ արյան բարձր ճնշում, կաթվածք; բ/ սրտային հիվանդություններ՝ ներառյալ հանկարծամահության դեպքեր; գ/ անոթային խնդիրներ, վարիկոզ, խոր երակային թրոմբոզ; դ/ շաքարախտ; ե/ ալերգիա, ասթմա; զ/ քաղցկեղ, արյան հիվանդություններ; է/ հոդերի կամ մկանների խրոնիկական հիվանդություններ; ը/ հորմոնալ խանգարումներ	Պարտադիր է ամենամյա նորացման համար
2. Ֆուտբոլիստի բժշական պատմություն ա/ սրտային հիվանդություններ, առիթմիա,	



ուշագնացություն; բ/ ուղեղի ցնցում; գ/ ալերգիա, ասթմա; դ/ կրկնվող ինֆեկցիաներ; ե/ լուրջ հիվանդություններ; զ/ լուրջ վնասվածքները, որոնց արդյունքը եղել է վիրահատություն, հոսպիտալացում, ավելի քան 1 ամսով ֆուտբոլային մարզումներից բացակայություն:	Պարտադիր է ամենամյա նորացման համար
3. Ներկայիս գանգատներ ա/ Ախտանշաններ, հիմնականում ցավ /մկաններում, հոդերում/; բ/ ցավեր կրծքավանդակում, շնչահեղձություն, սրտի աշխատանքի արագացում, առիթմիա; գ/ գլխապտույտ, ուշագնացություն; դ/ մրսածության նշաններ, հազ, խորխաբեր հազ; ե/ ախորժակի կորուստ, քաշի կորուստ; զ/ անքնություն; է/ ստամոքսա-աղիքային խանգարումներ:	Պարտադիր է ամենամյա իրականացման համար
4. Դեղամիջոցներ / հավելումներ ա/ ֆուտբոլիստի կողմից ընդունվող ընթացիկ հատուկ դեղամիջոցները; բ/ հաստատում, որ ֆուտբոլիստը ստացել է TUE /therapeutic Use Exemption Թերապևտիկ օգտագործման բացառություն/ /անհրաժեշտության դեպքում/; գ/ ֆուտբոլիստի կողմից օգտագործվող սննդի հավելումները; դ/ ֆուտբոլիստի կրթվածությունը Հակա-դոպինգային վարքագծի վերաբերյալ	Պարտադիր է ամենամյա իրականացման համար
5. Պատվաստումներ Պատվաստումների վերաբերյալ գրառումներ /ներառյալ օրը/; Խորհուրդ է տրվում անպայման կատարել կարկամախտի և հեպատիտ Ա-ի և Բ-ի դեմ պատվաստումները	Պարտադիր է ամենամյա նորացման համար
Գ/ Բժշկական ընդհանուր հետազոտություն	
Սա բժշկի հերթական բժշկական հետազոտության երկրորդ մասն է կազմում:	



1. Հասակ	Պարտադիր է ամենամյա իրականացման համար
2. Քաշ	
3. Արյան ճնշում (մշտապես անցկացվող ստուգումների արդյունքների հավաստիության համար խորհուրդ է տրվում միշտ հետազոտել նույն ձեռքը, ինչի մասին խաղացողների բժշկական քարտերում պետք է լինի համապատասխան գրանցում):	
4. Գլուխ և պարանոց /աչքեր՝ տեսողության ստուգում, քիթ, ականջներ, ատամներ, կոկորդ, վահանաձև գեղձ/	
5. Լիմֆատիկ գեղձեր	
6. Կրծքավանդակ և թոքեր /ստուգում, լսում, մատնաբախում, շնչառություն և կրծքավանդակի լայնացում շնչելու և արտաշնչելու ժամանակ/	
7. Սիրտ /ձայն, աղմուկ, բաբախյուն, առիթմիկ/	
8. Որովայն /ներառյալ՝ ճողվածք, սպի/	
9. Արյունատար անոթներ /օրինակ՝ պերիֆերիկ պուլս, անոթային աղմուկ, վարիկոզ/	
10. Մաշկի ուսումնասիրում	
11.Ներվային համակարգ /օրինակ՝ ռեֆլեքսներ, զգայունության շեղումներ/	
12. Շարժական համակարգ /օրինակ՝ թուլություն, հյուծվածություն/	
Դ/ Հատուկ կարդիոլոգիական հետազոտություն	
Որպես օրենք, ստանդարտ 12 ճյուղավորմամբ էլեկտրոկարդիոգրամման (ԷԿԳ) եւ էխոկարդիոգրաֆիան պետք է անցկացվեն խաղացողի մասնագիտական կարերայի ամենավաղ շրջանում, հատկապես եթե դա խորհուրդ է տրվում կլինիկական հետազոտության արդյունքներով: Եթե դա պահանջում են անամնեստիկ եւ կլինիկական ցուցանիշները, խորհուրդ է տրվում անցկացնել կրկնվող ստուգում մշտական հիմունքներով, այդ թվում՝ ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ ԷԿԳ և էխոկարդիոգրաֆիա: Ակումբների արտոնագրման նպատակով անհրաժեշտ է պարտադիր կերպով անցնել մեկ ստանդարտ էլեկտրոկարդիոգրամմա (ԷԿԳ) եւ էխոկարդիոգրաֆիա I) գլխավոր թիմում հանդես եկող բոլոր խաղացողներին նվազագույնը մինչև 21 տարին լրանալը; II) գլխավոր թիմում հանդես եկող 21 տարեկանից բարձր բոլոր խաղացողներին, եթե նրանց բժշկական քարտերում չկա գրանցում ԷԿԳ-ի եւ էխոկարդիոգրաֆիայի անցկացման մասին: Անցկացված հետազոտությունների արդյունքները պետք է գրանցվեն խաղացողների բժշկական քարտերում:	
1. Էլեկտրոկարդիոգրամա /12-ճյուղավորմամբ/	Պարտադիր է՝ համաձայն վերը նշված I/ և II/ կետերի
2. Էխոկարդիոգրաֆիա	



Ե/ Լաբորատոր հետազոտություններ		
ՈՒԵՖԱ-ի մրցաշարերում հանդես եկող ակումբները սովորաբար ունենում են այլազգի ֆուտբոլիստներից բաղկացած կազմ: Հետևաբար, ստորև բերվում են խիստ անհրաժեշտ թեստեր, որոնք կօգնեն լաբորատոր հետազոտությունների անցկացման ամբողջականությանը: Այս ցանկն ամբողջական չէ: Բոլոր լաբորատոր հետազոտությունները պետք է անցկացվեն տեղեկացված ֆուտբոլիստի համաձայնությամբ և համապատասխանեն ազգային օրենսդրությանը /կոնֆիդենցիալություն, ռասսայական խտրականության հարցեր և այլն/		
1. Արյան անալիզ /հեմոգլոբին, հեմատոկրիտ, էրիտրոցիտներ, լեյկոցիտներ, թրոմբոցիտներ/	Պարտադիր է ամենամյա իրականացման համար	
2. Մեզի անալիզ /“dipstick” թեստ՝ որոշելու պրոտեինի և շաքարի քանակը/		
3. Նստվածքի արագությունը	Խորհուրդ է տրվում	
4. CRP-ռեակտիվ սպիտակուց /պրոտեին/		
5. Արյան ճարպեր /խոլեստերին, բարձր խտության ալֆա-լիպոպրոտեիններ և LDL խոլեստերին, տրիգլիցերիդ/		
6. Գլյուկոզա		
7. Միզային թթվայնություն		
8. Կրեատինին		
9. Ասպարտատ ամինո-տրանսֆերազ		
10. Ալանին ամինո-տրանսֆերազ		
11. Գամմա-գլյուտամիլ-տրանսֆերազ		
12. Կրեատին կինազ		
13. Կալիում		
14. Նատրիում		
15. Մագնեզիում		
16. Երկաթ		
17. Ֆերրիտին		
18. Արյան խումբը		
19. ՉԻԱՀ-ի տեսք		
20. Հեպատիտի հետազոտում		
Զ/ Օրթոպեդիկ հետազոտություն և ֆունկցիոնալ ստուգումներ		
Պարտադիր բժշկական հետազոտությունները համարվում են նորմա մարզիկի համար: 7-9 կետերը օգնում են ակումբի բժիշկներին անցկացնել պրոֆիլակտիկ միջոցառումներ եւ վերականգնել խաղացողներին վնասվածքներից հետո:		



Բացի այդ, ակումբի բժիշկներին խորհուրդ է տրվում դիտարկել սպոնդիլոլեզի /spondylolysis/ և սպոնդիլոլիսթեզի /spondylolisthesis/ պայմանի բացառումը:

Հղում՝ ֆունկցիոնալ ստուգումների վերաբերյալ լրացուցիչ աջակցություն ստանալու համար.

- “Պարզ, բայց վստահելի ֆունկցիոնալ ստուգումներ”՝ Ekstrand J, Karlsson J, Hodson A. Ֆուտբոլային բժշկություն: Լոնդոն՝ Martin Dunitz (Taylor & Francis Group); 2003:562;

- “Մկանային սեղմվածության համար թեսթերի և շարժումների տեսակները” Ekstrand J, Wiktorsson M, Oberg B et al. “Ստորին վերջույթների գոնիոմետրիկ չափումներ”՝ դրանց հուսալիությունը որոշելու ուսումնասիրություն՝ Arch Phys Med Rehabil 1982; 63:171-5;

-“Մեկ ոտքով ցատկի թեսթ”՝ Ageberg E, Zatterstrom R, Moritz U: Կայունության չափիչը և մեկ ոտքով ցատկման թեսթը տալիս է կրկնակի թեսթավորման կայուն արդյունքներ: Scand K Med Sci Sports 1998; 8-4:198-202

- SOLEC թեսթ՝ Ageberg E, Zatterstrom R, Moritz U. Կայունության չափիչը և մեկ ոտքով ցատկման թեսթը տալիս է կրկնակի թեսթավորման կայուն արդյունքներ: Scand K Med Sci Sports 1998; 8-4:198-202

1. Ողնաշարային բաժին. ուսումնասիրում և ֆունկցիոնալ թեսթեր (փխրունություն, ցավ, տեղաշարժման դիապագոն)	Պարտադիր է ամենամյա իրականացման համար
2. Ուս. ցավ, շարժունակություն և անխախտություն	
3. Կոնքային հոդ, աճուկ եւ ազդրեր. ցավ և շարժունակություն	
4. Ծունկ. ցավ, շարժունակություն, անխախտություն եւ զեղում	
5. Սրունք. ցավ («ճեղքված սրունքի» սինդրոմ, աքիլյեյան ջիդ)	
6. Կոճ և ոտնաթաթ. ցավ, շարժունակություն, կայունություն և զեղում	
7. Շարժման դիապագոն (ՇԴ) եւ մկանների ճկունության թեսթեր ա) շարժաբեր մկաններ; բ) ջղեր; գ) ողնա-գոտկատեղային մկան; դ) քառագլուխ մկան; ե) սրունք-թաթային մկան զ) ձկնամկան	Խորհուրդ է տրվում
8. Մկանների ուժը (մեկ ոտքի վրա թռիչքների թեսթ)	
9. Մկանների հավասարակշռության թեսթ (թեսթ SOLEC: կանգ մեկ ոտքի վրա փակ աչքերով)	

Է/ Ռադիոլոգիական հետազոտություն և ուլտրաձայնային նկարահանում

Կլինիկական եւ ֆունկցիոնալ ցուցանիշների հիման վրա անցկացված բժշկական հետազոտությունների արդյունքով կարող է պահանջվել ռադիոլոգիական հետազոտության անցկացում, այդ թվում



ուլտրաձայնային հետազոտություն, ռենտգենոգրամմա եւ մագնիտա-ռեզոնանսային տոմոգրաֆիա:
Ռադիոլոգիայի արդյուքները, հատկապես վնասված հատվածների, պետք է գրանցված լինեն խաղացողի բժշկական քարտում:

2. Պատանի խաղացողների բժշկական սպասարկում

Համաձայն ՀՀՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի հոդված 17-ի՝ ակումբները /արտոնագրման թեկնածու/ պետք է ունենան մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագիր, որը, բացի այլ պայմաններից, նկարագրում է բժշկական սպասարկումը պատանի ֆուտբոլիստներին՝ ներառելով բժշկական հետազոտությունները:

Կախված ազգային օրենսդրությունից, մինչև 14 տարեկան պատանեկան թիմերի խաղացողների բժշկական սպասարկման պատասխանատվությունը ընկած է ընտանիքի եւ դպրոցի բժշկի վրա, եւ ցանկացած հետազոտություն պետք է անցկացվի ծնողների համաձայնությամբ: Այսպիսով, ակումբի բժշկից չի պահանջվում անցկացնել 15 տարեկանից ցածր պատանեկան թիմերի խաղացողների կոնկրետ բժշկական հետազոտություն մարզական/ֆուտբոլային շրջանակներում: Սակայն ակումբը պետք է տրամադրի համապատասխան բժշկական սպասարկում բոլոր պատանեկան թիմերի խաղացողներին ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում:

Սեփական հարկի տակ և արտագնա հանդիպումների ժամանակ /ներառյալ ճանապարհորդությունը/ մանկապատանեկան թիմերի բժշկական սպասարկման կազմակերպչական կառուցվածքը պետք է քննարկվի ակումբի պատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրում:

2.1. Բժշկական սպասարկման պարտադիր նվազագույն պահանջները

Ակումբների մանկապատանեկան զարգացման ծրագիրը պետք է ներառի մանկապատանեկան թիմերի ֆուտբոլիստների բժշկական սպասարկմանը վերաբերող հետևյալ նվազագույն կետերը.

- ա) Սեփական հարկի տակ անցկացվող հանդիպումների և մարզումների պատասխանատու բժշկի անունը/հասցեն/հեռախոսի համարը;
- բ) Մարզադաշտում և մարզումային վայրերում առաջին բուժօգնության պարագաների գտնվելու տեղը;
- գ) Մոտակա հիվանդանոցի հասցեն և կոնտակտային տվյալներ;
- դ) Բժշկական սպասարկման կազմակերպումը արտագնա հանդիպումների ժամանակ /մի շարք ազգային ասոցիացիաներում հյուրընկալող ակումբի բժիշկը սպասարկում է նաև այցելու թիմի ֆուտբոլիստներին/;
- ե) մանկապատանեկան մարզիչների պատասխանատվությունը պատահարի կամ վնասվածքի դեպքում /օրինակ՝ առաջին բուժօգնություն, ծնողներին անմիջապես տեղեկացում/;
- զ) դժբախտ պատահարի/վնասվածքի ժամանակ պատանեկան թիմերի խաղացողներին առաջին բժշկական օգնության եւ մեթոդիկայի ուսուցանում;
- է) ակումբի կողմից մշակված հատուկ մեթոդիկա 15-21 տարեկան պատանեկան թիմերի խաղացողների բժշկական սպասարկման համար (այդ թվում՝ լրացուցիչ ծախսեր պահանջող սպասարկում) եւ բժշկական քարտերի վարում:



2.2. Պատանեկան թիմերի խաղացողների բժշկական հետազոտություն

ՈՒԵՖԱ-ի բժշկական կոմիտեն խորհուրդ է տալիս, որպեսզի 15-21 տարեկան պատանեկան թիմերի խաղացողներ, հատկապես ուսուցողական ծրագրում լիովին ընդգրկված խաղացողները (օրինակ, պատանեկան ակադեմիայում), ինչպես նաև նրանք, ովքեր հանդես են գալիս ազգային պատանեկան թիմերում, անցնեն բժշկական հետազոտություն՝ համաձայն վերը նշված 1.4 բաժնի:

Ակումբի գլխավոր թիմում հանդես եկող 15-21 տարեկան խաղացողները պարտավոր են անցնել բժշկական հետազոտություն՝ համաձայն վերը նշված 1.6 բաժնի:

2.3. Ակումբի պատասխանատվությունը

Ակումբները պատասխանատվություն են կրում բժշկական ստուգումների տեսակների որոշման և նրանց անցկացման համար, 15-21 տարեկան պատանեկան թիմերի խաղացողների սահմանման համար, որոնց անհրաժեշտ է անցնել ստուգումներ, ինչպես նաև պատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրում համապատասխան միջոցառումների ներդրման համար:

Հավելված X - Ռասիզմի դեմ պայքարի ՈՒԵՖԱ-ի 10-կետանոց ծրագիր (ՈՒԵՖԱ-ի Անվտանգության կանոնակարգի հոդված 45.4 (2006թ. Խմբագրություն))

1. Թողարկել հաղորդագրություն, ասելով որ ռասիզմը կամ խտրականության մեկ այլ ձև չի հանդուրժվի և տեղեկացնել այն միջոցների մասին, որոնք ի կատար կածվեն ռասիզմը խրախուսողների դեմ: Այդ հաղորդագրությունը պետք է տպվի բոլոր հանդիպումների ծրագրերի մեջ և մշապես ցուցադրվի մարզադաշտում և դրա շուրջ:
2. Հանդիպման ժամանակ կատարել հասարակությանն ուղղված ռասիզմը դատապարտող հայտարարություններին:
3. Մրցաշրջանի տոմսեր ձեռք բերող երկրպագուների համար ռասիստական վիրավորանքների գործածումից զերծ մնալը դարձնել կարևոր պայման:
4. Կանխել մարզադաշտում և դրա շուրջ ռասիստական գրականության վաճառքը:
5. Կարգապահական պատժամիջոցներ կիրառել բոլոր այն ֆուտբոլիստների նկատմամբ, ովքեր աչքի կրնան ռասիստական վարքագծով:
6. Կապվել այլ ասոցիացիաների կամ ակումբների հետ՝ հավաստիանալու, որ նրանք ճիշտ են ընկալում ռասիզմի վերաբերյալ ասոցիացիայի կամ ակումբի քաղաքականությունը:
7. Կարգադրիչների և ոստիկանների համար մշակել ռասիստական դրսևորումների դեմ պայքարի մարտավարություն:
8. Պատերից ջնջել ռասիստական բոլոր պատկերները և գրվածքները (գրաֆիտի):
9. Ընդունել աշխատանքի ընդունման և ծառայությունների մատուցման հավասար հնարավորությունների քաղաքականություն:
10. Աշխատել բոլոր այլ խմբերի և գործակալությունների հետ, ինչպիսիք են ֆուտբոլիստների միությունը, երկրպագուները, դպրոցները, կամավոր կազմակերպությունները, երիտասարդական ակումբները, հովանավորները, տեղի բիզնեսները, ոստիկանությունը և այլ պետական մարմիններ՝ զարգացնելու գործուն ծրագրեր և մեծացնել ռասիզմի և խտրականության դեմ ուղղված արշավի վերաբերյալ իրազեկությունը:



ՀՀ ԱԿՈՒՄԲԼԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

- Արմեն ՄԻՆԱՍՅԱՆ, ՀՀ 1-ին փոխնախագահ/ Գործադիր տնօրեն, Ակումբների արտոնագրման նախագծի ղեկավար
- Արթուր ԱԶԱՐՅԱՆ, Արտոնագրման բաժնի պետ
- Ամալյա ԳՐԻԳՈՐՅԱՆ, Արտոնագրման բաժնի պետի տեղակալ
- Ղազար ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ, Արտոնագրման մասնագետ
- Աննա ԲՈՒՉԱՅԿԱՅԱ, Ֆինանսական հարցերով փորձագետ

ՀՀ ԱԿՈՒՄԲԼԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ ԻՐ ԽՈՐԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ՈՇՖԱ-Ի ԱԿՈՒՄԲԼԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԵՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴԱՐ ԽԱՂԻ ԲԱԺԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ

ԽԱՆՁՅԱՆ ՓՈՂՈՑ 27

ԵՐԵՎԱՆ, 0010, ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռ. +374 10 54 10 69

ՖԱՔՍ +374 10 54 71 73

ԷԼ. ՓՈՍՏ. LICENSING@FFA.AM

WWW.FFA.AM



– փնտրեք “FFA CLUB LICENSING SYSTEM”